

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ

ԵՎ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ

|| ՀԱՍՄԻԿ
ԱԲԵՂՅԱՆ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АСМИК АБЕГЯН

ИСААКЯН
И НАРОДНЫЙ ЭПОС

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ,
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՍՄԻԿ ԱՐԵՂՅԱՆ

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ

A $\frac{11}{55723}$

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975



Ուսումնասիրությունը նվիրված է Ավ. Իսահակյանի «Սասմա Մհեր» պոեմի ստեղծագործական պատմությանը, ցույց են տրված այն փուլերը, որ անցել է նա՝ մտահղացման սկզբից մինչև ավարտը: Հանդամանալի քննության է առնված պոեմի առնչակցությունը ժողովրդական էպոսի համապատասխան ճշուղի («Փոքր Մհեր») բաղմաթիվ տարբերակների հետ: Ի մի է բերված այն ամենը (տպագիր և անտիպ), ինչ բանաստեղծը տարրեր առիթներով գրել է ինչպես «Սասմա Մհերի», այնպես էլ էպոսի մասին ընդհանրապես:

Պատ. խմբագիր՝ Ա. Մ. ԻնձիկՅԱՆ

Ա. $\frac{70700}{7 \cdot (302) - 75}$ 33—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975.





ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ավետիֆ Իսահակյանի ստեղծագործությունը բազմաթիվ թելերով կապված է ժողովրդական բանավեստի հետ: Մանկության և պատանեկության տարիներն անցկացնելով ժողովրդական ստեղծագործությամբ հարուստ այնպիսի բնաշխարհում, ինչպիսին Շիրակն է, նրա միտքն ու երևակայությունը առատորեն սնվել են ժողովրդական երգերով, լեգենդներով, հեքիաթներով, առակներով... Այս մասին բանաստեղծը իր ծննդյան վաթսունհինգամյակի հոբելյանական հանդեսի պատասխան-խոսքում հետևյալ նշանակալի խոստովանությունն է արել. «Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոն է եղել, որովհետև այստեղ է, որ սկսել է բաբախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնում է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել և սովորել մեր հոյակապ մայրենի լեզուն: Այստեղ մեր անուշ տատիկներից լսել եմ հոգի կախարդող հեքիաթները, մեր փորձաշատ պապիկներից՝ իմաստուն զրույցներ, խոսք ու առած:

Մեր թափառական գուսաններից և գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չճնաղ տաղերն ու խաղերը, մեր մեյքերը՝ սրտահույզ երգերը:

Մեր հնադարյան, խորիմաստ ֆոլկլորը, որին ես այն-
ժամ երախտապարտ եմ...»¹:

¹ Ավ Իսահակյան, *Երկերի ժողովածու*, հատ. 1, Երևան, 1951, էջ 168:

Իսահակյանը ժողովրդական բանավեստի մեջ տեսնում էր «մի ազգի ոգին, նաշակը», ժողովրդի աշխարհընկալման և աշխարհայացքի, նրա լավագույն իղձերի և երազանքների խտացված արտահայտությունը:

Իսահակյանի առաջին իսկ գրական փորձերում արդեն ականհայտ է ժողովրդական բառ ու բանի խոր ազդեցությունը: Հայրենի երկրում իր մշտական քափառումների ընթացքում բանաստեղծը հավաքել է և գրի առել ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ, որ հարուստ ատաղձ են հանդիսացել նրա բազմաժանր ստեղծագործությունների համար: Նրա բնարական բանաստեղծությունները՝ «Երգեր ու վերբեր», «Ալագյազի մանիներ», ժողովրդի գեղարվեստական մտածողության լավագույն դրսևորումներն են՝ պոետական բարձր մակարդակի հասցված:

Ավետիֆ Իսահակյանը խորապես սիրել և ուսումնասիրել է ոչ միայն հայ, այլև աշխարհի ուրիշ ժողովուրդների բանավեստը: Նրա արձակ լեզենդների, գրույցների, հեփիարների և առակների սյուժեները վերցված են հայ և այլազգի ժողովրդական բանավեստից:

«Իսահակյանը և ժողովրդական բանահյուսությունը» քեմային այս կամ այն չափով անդրադարձել են ուսումնասիրողները, հատկապես Ա. Ղանալանյանը՝ իր «Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» արժեքավոր աշխատության մեջ: Ինչ վերաբերում է «Սասմա Մհեր» պոեմին, այն դիտվել է Իսահակյանի ողջ ստեղծագործության առնչությամբ, սակայն հատուկ և հանգամանալի ուսումնասիրության առարկա չի դարձել:

Այս աշխատության մեջ օգտագործված են Իսահակյանի՝ ժողովրդական էպոսին վերաբերող բոլոր հոդվածները, ինչպես և ասույթները (տպագիր և անտիպ): Բնականաբար, առանձին հետազոտության առարկա է դարձել բանաստեղծի պոեմի հայ ժողովրդական էպոսի համապատասխան նյութի («Փոփր Մհեր») հետ ունեցած առնչակցության խնդիրը: Այդ նպատակով ուսումնասիրված են էպոսի բոլոր պատումները

և պարզված, թե ո՛ր դրվագներն ու մանրամասներն են հիմք հանդիսացել բանաստեղծի համար իր պոեմը գրելիս, ի՛նչն է պահպանել, ի՛նչն է փոփոխել և ի՛նչպես, ի՛նչ նոր դրվագներ է ավելացրել՝ ելնելով իր գաղափարաբանական-գեղագիտական նպատակադրումներից:

Նկատի ունենալով այն կարևոր տեղը, որ բռնում է «Սասմա Մհեր» պոեմը Իսահակյանի ստեղծագործության մեջ, հանգամանալի ֆննդության է առնված պոեմի ստեղծագործական սլատմությունը, ցույց են տրված այն փուլերը, որ նա անցել է մտահղացման սկզբից մինչև ավարտը՝ կանոնիկ տեքստի ստեղծումը: Առանձին ֆննդության նյութ է դարձել պոեմի վերջին՝ անավարտ մշակումը, որով բանաստեղծը զբաղված է եղել 40-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը:

Աշխատության մեջ առաջին անգամ օգտագործվել են Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի, Իսահակյանի տուն-թանգարանի, բանաստեղծի ժառանգների մոտ պահվող այն ինֆնագրերը, ինչպես նաև գրած և ստացած նամակները, որ վերաբերել են մեզ զբաղեցնող խնդրին:

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԷՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Ավետիք Իսահակյանը՝ մեր մեծագույն քնարերգուն, խոր արմատներով կապված լինելով ժողովրդական բանավեստի հետ, չէր կարող չանդրադառնալ հայկական էպոսին, որտեղ մարմնավորվում, հոգի է առնում ինքը՝ ազգը, ժողովուրդը՝ իր լավագույն ձգտումներով ու իդեալներով, մաքսանումներով ու հաղթանակներով:

Բանաստեղծի հետաքրքրությունները էպոսի նկատմամբ սկսվել են դեռևս 1890-ական թվականների կեսերից՝ «Մանուկ Հայաստանը և Դե-Սուլթանը» կամ «Մասնա Մանուկ» վիպասքի առնչությամբ: Զեռնարկելով գրել հայ ազգային-ազատագրական պայքարին նվիրված այդ ինքնաստեղծ էպոսը, Իսահակյանը, ինչպես վկայում է Դեմիրճյանը, սկսել է կարդալ և ուսումնասիրել համաշխարհային էպոսը:

Ահա ինչ է գրում Դեմիրճյանը Իսահակյանի վիպասքի մասին. «Ավետիքը գրել էր նախերգանքը, բավական շատ նաև՝ բուն մասերից: Կարդաց: Դա մի շքեղ բան էր: Ես կարող եմ վկայել, որ ինչքան հիշում եմ և չեմ սխալվում, Ավետիքի պոեզիայի մեջ անգամ արտակարգ ու ինքնատիպ երկ էր... Այդ էպոսը բոլորովին այլ ոճ ուներ, քան «Մհերն» է և բոլորովին առանձին տեղ էր բռնում Ավետիք Իսահակյանի ստեղծագործության մեջ: Այդ ոճի նման կոլորիտ և մանավանդ ուրիշ ունեն Ավետիքի մի քանի բանաստեղծություններ:

րը, որոնք նվիրված են բնության և իր խոհերին»:

Իսահակյանը եղել է անընդհատ որոնումների մեջ՝ էպոսի համար նոր ոճ գտնելու հարցում: «Նա կամենում էր գրտնել «գրական» ինքնաստեղծ էպոսի համար մի նոր ոճ ու ձև,— շարունակում է Դեմիրճյանը:—Նա կամենում էր ընդգրկել բոլոր էպոսների ձևերը և գտնել նրանց սինթեզը: Եվ անհագուրդ, անդուլ կարողում էր կրկին ձեռքի տակ եղած նյութերը, անհանգիստ որոնում: Ահա այդ պրոցեսը, այդ երկար որոնումները, երկար ջանքերը հիմք դնելու մի նոր շեղած բանի, ստեղծել մոնումենտալ մի գործ, նվիրել դրան թեկուզ ամբողջ կյանքը—դա հիմնական գիծն է Ավետիք Իսահակյանի»²: Հետաքրքրական է, որ բանաստեղծը Մհերի կերպարն օգտագործել է այդ վիպասքում:

Հիվանդացել է Դե-Սուլթանը և առողջանալու համար պետք է լողանա Մասսա Մանկան արյան մեջ. նրան այդ միտքը հուշում են մյուս դեերը՝ եվրոպական պետությունները: Բայց անընկճելի է հայ ժողովուրդը: Կլցվի համբերության բաժակը և նա՝ դարերով քնած, այժմ կարթնանա: Այդ ճակատագրական պայքարի համար է, որ Մայր Հայաստանը ծնել է Մասսա Մանուկին: Եվ եթե նրանց ուժերը չբավականացնեն, նրանք կդիմեն «հայի վրեժը մարմնավորող» Մհերին, կբանան Ակուփու այրի դռները, դուրս կոչելով նրան:

* * * * *

Հրամանք տուր—վրեժի մեծ օրն հասավ,
Գնանք արձակենք Մհերին,
Թող կործանե աշխարհն ամեն՝
Չարիքի տունը հավիտենական
Անգույթ, անխիղճ աշխարհն ամեն,
Թող մերի հետ փոշի դառնա,
Խոցված սիրտը մեր հովանաւ³:

² Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. 8, Երևան, 1963, էջ 201—202:

³ Պահպանված է վիպասքի առաջին տարբերակի ընդօրինակությունը՝ բանաստեղծի հետևյալ նշումով՝ «Ակսեցի 16-ին հուլիսի 1908 թ. Ղազարապատ դուրում»:

Եվ ահա Մասսա Մանուկի հրամանով դուրս է ելնում Մհերն անձավից, Հավլունի թուրը լուսավոր ճամփա է ցույց տալիս նրան։ Անտարակույս նա կսպանի Ցարին, Սուլթանին... Աշխարհում կտիրեն ռամկությունը, արդարությունը, ազատությունը...

Ըստ այլ տարբերակի, վիպասքի վերջում, երբ ազատագրվում է Հայաստանը օտար նվաճողների լծից, հանդես է գալիս Մհերը՝ սոցիալական ազատության կոչով⁴։

Հանց որ երկինք գլխիդ փլչի,
Հանց որ երկիրն տակեդ փախչի—
Որոտմունքով սար-ձոր լցվեց,
Ծովերն ամեն ժայռեղեն գրկերեն ելան-թափվան,
Հողմերն իրար անցած՝ փախան անդունդների մեջ
վախից ժաժ եկան,

Մեր սեղանը խառնվեց իրար—
Երկիրը պատռվեց (Մասսա սարը)
Ու դուրս եկավ մեծ Մհերը՝
Հանց որ արև մրրիկների մեջ,
Հանց որ արև մրրիկների հետ.
Աչքերը բոց ու հուր հնոց (Վահագն).
Նստած հրեղեն ձիու վրա,
Առանց սանձի ու ասպանդակի,
Եկավ կանգնեց քաջերի մեջ...

Դրոշակները դրին նրա ոտքերի տակ։ Մհերն վերցուց բաժակն գինով, ու ասաց. «Այս կիսմեմ հայու արևի կենացը, հայու ազատության կենացը. սակայն հագեթ-կապեթ զենք ու զրահ, բոլոր քաջեր և բանվորներ, գյուղացիներ ու մշակներ, ես նոր կռիվ եմ ձեզ տանում, կռիվ մարդը մարդու դեմ, ճնշվողին ճնշողի դեմ, աղքատին հարուստի դեմ, զրկվածին զրկողի դեմ, աշխատողին վալելողի դեմ...»։

⁴ Վիպասքի ծրագրային գրառումներից մեկում ակնարկվում է այդ մասին գոյություն ունեցող ժողովրդական ավանդությունը. «Ավանդությունն ասում է՝ երբ Հայաստանը բովանդակ կազատվի բռնավորի լծից, այն ժամանակ դուրս կգա Մհերը ռամկություն տարածելու»։

Մհերը, որպես ռամիկի շահերի համար մարտնչողի կերպար՝ հիշատակվում է նաև «Ուստա Կարո» վեպում, ինչպես վկայում են բանաստեղծի արխիվում պահպանված 1910—20-ական թվականների ծրագրային նշումներից և պատառիկներից մի քանիսը։ Վերջիններից մեկը հարկ ենք համարում մեջ բերել. «Երբ խոսեցին, թե ոսկու հանք է գտած, ուրեմն այլևս հարկերը կնվազին, թագավորը մեր յախեն բաց կթողնե, մի գյուղացի ասաց, թե՝ էդ բանի վրա հուշս չունիմ, փրկու՞թյունը Մհերի վրա է...

— Ո՞վ է Մհերը,— չորս կողմից ձայն տվին և նա պարզեց»։

1910-ական թվականների սկզբից ավելի որոշակի է դառնում Իսահակյանի մտադրությունը՝ գրելու «Սասմա Մհեր» վիպերգը։ Բանաստեղծի ծրագրային գրառումներում և «գրելիք» խորագիրը կրող թերթիկներում, ամենատարբեր ստեղծագործությունների շարքում հիշատակվում է «Մհերը»։

Բանաստեղծի ավելի վաղ շրջանի գրառումներում մեկերկու տեղ հանդիպում է նաև «Դավիթ-Մհեր» նշումը։ Դեռևս 1894 թ. նա գրում է. «...Իսկ իմ գրքիս մյուս հերոսների մոտ՝ ինչպես Քյոռոզլու, Գյոքչեցի Ղազարի, Զոփուռի-տղոց, կամ նույնիսկ Դավիթ-Մհերի մեջ այդ սերը չպիտի առաջնակարգ տեղը բռնե, այլ ազատության սերը, վրեժի սերը... ճնշված մասսայի բողոքը...» (1894 թ., նոյեմբերի 26)։ Մեկ այլ տեղ, նույն գրառումներում կարդում ենք. «...Այդ հյուսվածքի մեջ վարդագույն գծերով կանցնեն հին ու նոր ժողովրդական լեգենդներ, բալլադներ (որոնց ես ժողովել ու նորից գեղեցիկ գրել եմ), երգեր, գրույցներ, հեքիաթներ, առակներ։ Գլխավոր տեղը կբռնեն՝ Քյոռոզլին արծակ ու հանգերով գրված. Դավիթ ու Մհեր՝ չափական գրված...» (5 դեկտեմբերի 1894)։ Ծրագրային գրառումներից մեկում, թվագրված՝ 1913 թ. 13 նոյեմբերի, Ցյուրիխ, նշված է՝ «Սասունցի Դավիթ ու Մհեր» և ապա ջնջված։ Հետագայում հիշված է միայն «Մհեր» խորագրով։

Ս. Հայկունու գրի առած «Դավիթ և Մհեր» տարբերակի⁵ «Վերջաբանում» ասված է՝ «Դավիթի տղա Մհերին կ'ասըն՝ Դավիթ-Մհեր»:

Մեր էպոսի շորրորդ ճյուղին և, մասնավորապես, Մհերի կերպարին անդրադառնալիս Իսահակյանին հետաքրքրել է սոցիալական անարդարության վերացման խնդիրը: Այս մասին ավելի որոշակի նշված է նրա 1917 թ. գրառումներից մեկում. «Առանձին վեպ գրելու ո՛չ ժամանակ ունեմ, ո՛չ եռանդ. թերևս եթե «Մհերը» գրեմ, ուր հիմնական կետը այդ կռիվն է—ռամկացում»:

Եվ Իսահակյանը գրեց իր վիպերգը՝ «դառը դատող, դատարկ նստող» ռամկի, նրա ազատության տենչը մարմնավորող Մհերի մասին՝ մոտ ու հարազատ իր էությանն ու մըտքերին, գաղափարներին ու հրապանքներին...

Ամենատարբեր առիթներով և տարբեր ժամանակներում Իսահակյանն անդրադարձել է ուրիշ ժողովուրդների էպոսներին, կատարել գրառումներ և նշումներ: Նրան հետաքրքրել են թե՛ ռուսական բիլինաները, թե՛ բուլղար, սերբ, չեխ, սկանդինավյան ու կովկասյան ժողովուրդների էպոսները, «էնեականը»⁶, «Շահ-Նամեն», «Կալևալան», «Հայավաթի հրգը» «Սիդը»⁷: Այս առումով ուշագրավ են դեռևս 1893 թ. լայպցիգից գրած նրա նամակները՝ իր ուսուցիչ Ստեփաննոս Լիսիցյանին⁸: «...Երկար տատանմունքից հետո, երևի ներքին ձայնիս ուժով, ընտրեցի իբրև մասնագիտություն նոր գրականությունը և դրան լրացուցիչ գիտություններից նույնպես լսում եմ (որը հիմա դեռ քիչ եմ հասկանում) արևելյան ազգերի դիցաբանությունն ու բանաստեղծությունը,—գրում է Իսահակյանը հոկտեմբերի 30-ի նամակում:—Լսում եմ և դեղարվեստի պատմությունը—ծագումը, զարգացումը Հնդկաստանում, Հունաստանում և այլն: Առանձնապես ուշք եմ դարձ-

⁵ «Սասնա ծռեր», Ա հատոր, Ը պատում, Երևան, 1936, էջ 378:

⁶ Հռոմեացի բանաստեղծ Վիրգիլիոսի (70—19 թթ. մ. թ. ա.) էպիկական պոեմը:

⁷ «Երգ իմ Սիդի մասին» իտալական հերոսական էպոսը:

⁸ Տե՛ս «Գրական թերթ», 1973, № 8:

նում <...> Նիբելունգների, Ռուլանդի, Դյուրխնի և այլն ժողովրդական բանահյուսության վրա...»։ Նույնքերի 30-ին գրած նամակում բանաստեղծն ավելի հանգամանորեն է խոսում իրեն հետաքրքրող հարցի մասին. «...Իմ լսած մի քանի դասախոսությունները ժողովրդական-վիսլասանության վրա, դյուցազներգության վրա՝ իմ մեջ շատ մտքեր զարթնեցրեց— այժմ պրոֆեսորի առաջնորդությամբ և ընտրությամբ կարդում ենք ազգերի դյուցազնական գրականությունից՝ Զենդավեստից, Շահ-Նամեից, Ղուրանից, Հին-կտակարանից, Հոմերոսից, Վիրգիլիոսից, Ռուլանդից, Սիգից, Նիբելունգներից, Կուդրունից, Իլիա Մուրոմեցից և այլն, այդ բոլորի վրա, մանավանդ մասնագիտության վրա ես այժմ կատարյալ սիրահարված եմ։ Ասում են հայերը դյուցազներգություն չունին. այդ ասողները իմ աչքում երևում են՝ հայ ժողովրդին և պատմությանը անծանոթ մարդիկ... Միթե մեր Հայկն ու Արամը, Արան ու Տիգրանը, Վահագն ու Շարան, Արամաղդն ու Շիդարը, Դավիթն ու Մհերը... նույնպիսի ազգային դյուցազներ—ազգի բովանդակություններ չեն, ինչպես Ռուստամը, Զիգֆրիդը, Հերակլը և այլն։ Այժմ դրականապես վճռել են գլխավորապես շատ պարապել այդ գրականությամբ մեր ժողովրդի մութ-մութ խորշերից դուրս հանել պատմական Հային, իսկական Հային...»։

«Ավետիքն ուներ մի փոքրիկ, բայց շատ բովանդակալից գրադարան,—հիշում է Դ. Դեմիրճյանը։—Գրքերի մեջ առաջին գործածության առարկա էին դառել նրա համար այն ժամանակ համաշխարհային էպոսների տեքստերն ու նրանց մասին ուսումնասիրությունները—գերմաներեն։ Ավետիքը ուսումնասիրում էր ժողովուրդների էպոսը»⁹։ Այդ մասին հիշում է նաև ինքը՝ բանաստեղծը, պատմելով, թե ինչպես Թումանյանի բնակարանում՝ «Վերնատանը», ընկերների հետ հավաքվելիս, կարդում և հիանում էին մեր անմահ «Սասունցի Դավիթով» և այլ ժողովուրդների ֆոլկլորով¹⁰։

Իսահակյանը հմտորեն ուսումնասիրել է ժողովրդական

⁹ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 201։

¹⁰ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1959, էջ 70։

վիպական ստեղծագործությունները, նրանց տաղաչափությունը, լեզուն ու ոճը: «Հոմերի Իլիականը, Ոդիսականը, Նալ և Դամայանդին»¹¹, Շահ-Նամեն, էնեականը, չխական, սերբական, ռուսական, Սիդը—այդ էպիկական գրվածքները առանց հանգերի են գրված և Մեսիադան¹²: Իսկ «Աստվածային կոմեդիան», կատաղած Ռուանդը¹³, «Ազատված Երուսաղեմը»¹⁴, «Ֆրիտյոֆ Դյուցազնը»¹⁵, հանգավորված են»՝ այսպիսի նշման ենք հանդիպում Իսահակյանի ծոցատեսերից մեկում: Մեկ ուրիշ տեղ նա նշում է. «Կարդալ օսերի էպոսը, որ նման է վրացական Ամիրանին և կարդալ վրացական Ամիրանի էպոսը: Սրանք հրաշալի միֆեր են» (1939): Յուրաքանչյուր ժողովրդի վիպական ստեղծագործություն նրա առջև բացել է իր խորհրդավոր գեղեցկություններն ու հետաքրքրությունները, սքանչացրել նրան իր՝ ժողովրդական ոգուն հարազատ անկեղծությամբ: Բանաստեղծը բացահայտում է նրանցից յուրաքանչյուրի ինքնատիպությունը, ապա և ընդհանրությունները՝ դիտելով դրանք նաև հայկական էպոսի առնչությամբ: Նրան, ըստ երևույթին, առավել հետաքրքրել են բուն ժողովրդական ստեղծագործությունների և դրանց անհատական մշակումների միջև եղած տարբերությունները: Ահա այդ մասին մեզ հուշող մի փաստաթուղթ. «1. Հոմերոս, 2. Ֆիրդուսի*, 3. էնեական*, 4. Նիբելունգներ և Իորդանի*»¹⁶, 5. Կուդրուն¹⁷, 6. Ռուանդ, 7. Սիդ, 8. Սիդ, 9. Կա-

¹¹ Հին հնդկական էպոսի՝ «Մահաբհարատայի» մի ճյուղը:

¹² Գերմանացի բանաստեղծ Ֆ. Կլոպշտոկի (1724—1803) էպիկական պոեմը:

¹³ Նկատի ունի իտալացի բանաստեղծ Լ. Արիոստոյի (1474—1533) «Մոլեգին Ռուանդը» պոեմը՝ գրված «Ռուանդի երգը» ֆրանսիական հերոսական էպոսի սյուժեով:

¹⁴ Իտալացի բանաստեղծ Տորկվատո Տասսոյի (1544—1595) պոեմը:

¹⁵ Նորմանդական հին դրույց:

¹⁶ Անկասկած Իսահակյանը նկատի է ունեցել գերմանացի գրող Վիլհելմ Իորդանի (1819—1904) «Նիբելունգներ», «Սադա Զիգֆրիդի մասին», «Հիլշեբրանդի վերադարձը» երկերը, որոնցով հեղինակը ձգտել է ստեղծել գերմանական համազգային էպոս, պահպանելով հին գերմանական ոտանավորի առանձնահատկությունները:

¹⁷ Միջնադարյան գերմանական էպոս:

լեւալա, 10. Մանաս, 11. Օղուզ-Նամե¹⁸, 12. Քյոռօղլի, 13. Խա-
նե-Խարանգոյ. մոնղոլական էպիկական պոեմա, 14. Իգորի
բանակի մասին, 15. Վագրենավորը, 16. Հայավաթի երգը:

Խաչանիշները անհատական մշակումներ են, նմանու-
թյուններ, գրական գործեր, մնացածները ժողովրդական
ստեղծագործություններ են—այեդների կողմից գրված, այ-
նինչ առաջինները՝ պովեստների»:

Վերոհիշյալ ստեղծագործություններից Իսահակյանն
առանձին հոգւածներ է նվիրել միայն «Շահ-Նամեին», «Կա-
լեալային» և «Վագրենավորին»:

1934 թ., Իրանի հանճարեղ դյուցազներգակ Ֆիրդուսու
ծննդյան 1000-ամյակի առթիվ Իսահակյանը գրում է «Ֆիր-
դուսի»¹⁹ հոգւածը, նկարագրելով այն պատմական ժամա-
նակաշրջանը, երբ ապրել ու ստեղծագործել է «արքաների
գրքի»՝ անմահ «Շահ-Նամեի» հեղինակը: Իսահակյանը տա-
լիս է նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրականը:
Ֆիրդուսու ամենամեծ արժանիքը բանաստեղծը համարում
է այն, որ նա, իր ժողովրդի հայրենասիրությամբ բռնկված՝
երազում էր օտար ծանր լծի թոթափում և տենչում վերածն-
ված տեսնել պարսկական փառապանծ մշակույթը: Նա պաշ-
տում էր Զրադաշտի «գեղեցիկ վարդապետությունը, և նրան
օրգանապես խորթ էր Մուհամմեդի խստաշունչ և անսեր
ոգին»:

Պարսիկ ժողովրդի ազգային ինքնության, ազատ և ան-
կախ կյանքի «հավերժ խարույկը», Իսահակյանի կարծիքով,
եղավ Ֆիրդուսու «Շահ-Նամեն», որը որպես «ճակատագիր,
դարերից ի վեր մղում է դյուցազների սերունդներին դեպի
պայքար»՝ խորտակելու լուծ ու շղթա: Այնուհետև բանաս-
տեղծը կանգ է առնում վիպերդի գաղափարական բովանդա-
կության վրա:

Իսահակյանն էպոսը համարում է ժողովրդական կյանքի
հանրագիտարան, որտեղ հանդես է գալիս ժողովուրդն իր

¹⁸ Թուրքական էպոսը:

¹⁹ Տե՛ս «ՀՊԿ», 1935, № 1:

կենցաղով ու աշխարհաշեն գործերով, սովորույթներով, մշակույթով, դյուցազունների բախումներով և հաղթանակներով: Իբրև այդպիսին էլ նա դիտում է «Շահ-Նամեն», որի իմաստուն տողերից հառնում է Իրանի ողջ պատմությունը, սկսած խոր առասպելական ժամանակներից մինչև Սասանյան հարստության անկումը (7-րդ դար)՝ արաբների արշավանքը և տիրապետությունը: Երկու հազար տարվա կյանքի պատմություն... Քերթվածքը մի մեծ ժողովրդի «բազմադարյա գոյության ծովածավալ համայնապատկերն» է ներկայացնում: Այստեղ տեղ են գտել «արքայական պալատների ճոխությունն ու պերճանքը, ռամիկն ու գեղջուկը, աղատանին ու ոստանիկը իրենց սերերով, զգացումներով, վշտերով, տենչերով, զրադաշտական կրոնի սկզբունքները, ծեսերը, պաշտամունքները» և վերջապես, «Իրանի հավիտենական ոգորումները Թուրք-Թուրանի դեմ»:

Իսահակյանը Ֆիրդուսուն բարձր է գնահատում հատկապես այն բանի համար, որ նա, հին հիմքերի վրա նոր հայրենիք ու ժողովուրդ ունենալու վեհ իդեալներով տարված, ստեղծել է հոյակապ մի երկ, իր կյանքի 35 տարիները նվիրաբերելով այդ սուրբ գործին:

Բանաստեղծը խոսում է նաև վիպերգի կառուցվածքային առանձնահատկությունների, լեզվի, ոճի, պատկերավորման միջոցների ու տաղաչափության մասին: Իսահակյանը Ֆիրդուսուն արվեստի բարձրագույն ուժը համարում է նաև այն, որ «Շահ-Նամեն» չի կրում հեղինակային Ես-ի կնիքը: Օգտը վելով բազմաթիվ աղբյուրներից՝ ժողովրդական բանավոր զրույցներից, դյուցազնական առասպելներից, այլոցների ասքերից ու դիվանական նյութերից և այլն, պարսից մեծ բանաստեղծը չի վերածել դրանք սոսկ չափի ու հանդի, ալ իմաստուն ձևով ներդնելով իր զգացումներն ու խոհերը, ստեղծել է «և՛ անհատական, և՛ միաժամանակ խորապես համազգային և խորապես համամարդկային մի գործ»: Իսահակյանը «Շահ-Նամեն» համարում է մարդկային ճակատագրի, ապագա լավագույն հասարակարգի ու պետության մա-

սին մի գեղեցիկ «իմաստասիրություն»՝ գրական բոլոր սե-
ռերի «համագործակցութիւն»։ Ֆիրդուսին Իսահակյանին ներկա-
յանում է որպէս մի «գերմարդկային նկարիչ», որի վրձինը
միայն կարող է պատկերել և սերունդներին ներկայացնել
ապագայի մի այսպիսի հրապուրիչ իդեալ։ Եվ ճշմարիտ է,
որ նրանից հետո եկող Իրանի բոլոր բանաստեղծները ընթա-
ցել են նրա ճանապարհով և քայլել նրա մականի տակով»։

Իսահակյանն իրավացիորեն գտնում է, որ բանաստեղծի
լավագոյն պնդատողը ժողովուրդն է։ Եվ այն, որ «Շահ-
Նամեի» նվագուն բեյթերը երգում և արտասանում են ամե-
նուրեք՝ ապարանքներում ու խրճիթներում, քաղաքացին ու
գեղջուկը, բանվորն ու հովիվը, գրագետն ու անգրագետը՝
դարձրել են Ֆիրդուսուն «պարսիկ մշակույթի անկորնչելի
պարծառքը, երկնահուպ ադամանդյա Դեմավենդի»։

Ֆիրդուսուն Իսահակյանն անդրադարձել է նաև Արման
Կոթիկյանի «Ֆիրդուսի Թուսի և իր Շահ-Նամեն» գրքի առա-
ջաբանում²⁰։ Այստեղ նա «Շահ-Նամեն» դիտում է որպէս
Իրանի կյանքի ու մահվան պայքարի լուսավոր, պայծառ
հաղթանակի մի հոյակապ ներբող։ «Այսօրվա իրանյան
սկսվող վերածնունդը պարսիկը պարտական է իր ճակատա-
գիրը գրողին, — եզրակացնում է Իսահակյանը, — իր հրամա-
նատարին, մեծ ու անմահ Ֆիրդուսուն»։

Իսահակյանն անդրադառնում է «Շահ-Նամեի» հայերեն
թարգմանություններին, ինչպէս նաև Ֆիրդուսուն նվիրված
ուսումնասիրություններին, որոնցից ամենաարժեքավորը
համարում է բազմավաստակ գիտնական Կարապետ Մելիք-
Օհանջանյանի՝ «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները
«Շահ-Նամե»-ում և հայ մատենագրության մեջ» խորագիրը
կրող հոդվածը²¹։

«Կալևալային» նվիրված հոդվածը Իսահակյանը գրել է
նրա ստեղծման 100-ամյակի առթիվ («Կարելո-Ֆիննական

²⁰ Արման Կոթիկյան, Ֆիրդուսի Թուսի և իր «Շահ-Նամեն», առաջա-
բանով Ավետիք Իսահակյանի, Փարիզ, 1935, էջ 5—7։

²¹ «Ֆիրդուսի», ժողովածու, նվիրված Ֆիրդուսու ծննդյան հաղարմ-
յակին, Հայպետհրատ, 1934, էջ 1—116։



ազգային էպոսը»)²²։ Կանգ առնելով էպոսի գաղափարական բովանդակության, սյուժետային կառուցվածքի և հիմնական առանցքը կազմող դեպքերի վրա, Իսահակյանը «Կալեալայի» մեջ տեսնում է արտացոլումը ֆինն բարքերի, սովորությունների, ձգտումների՝ այն բոլորի, որ կազմում են այդ ժողովրդի ազգային բնավորությունը։ Այս առումով էլ նա բարձր է գնահատում անվանի դիտնական ու բանաստեղծ էլիաս Լյոնրոտի (1802—1884) կատարած դերը ֆինն ժողովրդի էպոսի տարբերակների համադրման, ամբողջացման ու վերաստեղծման գործում։

Ինչպես հունական ռապսոդիաները մշակվեցին ու ամբողջացան (6-րդ դար մ. թ. ա.), ստանալով իլիական և Ոդիսական անունները, այդպես էլ Լյոնրոտը հավաքելով կարելոֆիննական ասքերն ու ռուները բազմաթիվ տարբերակներից կատարեց ընտրություն (50 ռուն), բյուրեղացրեց, հղկեց և առանց իրենից մի տող անգամ ավելացնելու, առանց իր անհատականը ցուցադրելու վերստեղծեց ֆիննական էպոսը, որը կոչվեց այն գավառի անունով, ուր մի ժամանակ ապրել են վեպի հերոսները՝ կալեալների երկիր։ Որ ֆիններեն նշանակում է հերոսների երկիր։ Սկզբնավորվելով դեռևս միջին դարերից, էպոսում արձագանք են գտել ինչպես վիկինգյան արշավանքները, այնպես էլ սլատմական անորոշ ժամանակների աղոտ հիշատակումները։ Ֆիննական հին ազգային էպիկական երկերի գեղարվեստական մշակումը, խմբագրումը և ամբողջացումը Լյոնրոտի կողմից՝ Իսահակյանը համարում է հայրենասիրական սխրագործություն, որով նա դարձավ «ամենասիրելին և պատկառելին հայրենիքի մեջ», իսկ նրա ստեղծած «Կալեալան»՝ կարելոֆինների «ազգային փառքն ու հպարտությունը»։ Բանաստեղծը «Կալեալան» դասում է համաշխարհային էպոսների շարքը, որը թարգմանվելով զանազան լեզուների, ջերմ ընդունելություն գտավ հայրենիքից դուրս։ «Նրա շնորհիվ կարելոֆինները ճանաչ-

²² Տե՛ս «Գրական թերթ», 1949, № 8։

վեցին որպես կուլտուրական ժողովուրդ, անցյալ, լեզու, գրականութուն ունեցող»:

Ֆիննական էպոսի էութունը Իսահակյանը համարում է մարդու հերոսական պայքարը բնության դեմ, խիստ, ցուրտ, դաժան հյուսիսի, առասպելական Պոհելա երկրի (Լապլանդիա) դեմ, կորզելու համար նրանից հաց և բարեկեցութուն, տիրապետելու համար Սամպո կախարդական ջրաղացին, որը մարդկային ստեղծագործ հանձարի խորհրդանիշն է:

Ընդհանրացնելով, Իսահակյանը «Կալևալայի» պաթոսը համարում է ժողովրդի պայքարը լույսի և բարու համար, ընդդեմ խավարի ու շարի: Իսահակյանը գտնում է, որ ֆիննական էպոսը, «բացի պատմական դեպքերի արձագանքը լինելուց», արտահայտում է ժողովրդի երազները, ձգտումները՝ գեղեցիկ, ապահով կյանքի մասին: «Կալևալայի» հնարագետ հերոսները ստեղծում են Սամպո կախարդական ջրաղացը, որը առատ հաց և բարեկեցութուն էր բերելու ժողովրդին: «Սամպոն նախնական ժողովրդի երազն է և հավատքը ապագայի նկատմամբ, ուր մարդկութունը պիտի ապրի երջանիկ և հոգսերից ազատ՝ անընդհատ հառաջադիմության շնորհիվ»: Սակայն հյուսիսի դաժան ու շար տիրուհին հափշտակում է Սամպոն և թաքցնում գրանիտե ժայռերի մեջ: Ֆիննական էպոսում ևս, ինչպես հայկական և այլ էպոսներում, ժողովրդի հույսն ու հավատը փակված են ժայռերում: Նորը շինելն անհնար է և հերոսները Պոհելայ երկրի տիրուհուց պահանջում են հրաշագործ ինքնաղացը: Սկսվում են կատաղի մարտեր և մարդկային մեծ կորուստների զնով միայն դյուցազները ձեռք են բերում Սամպոն: Սակայն այդ կովին մասնակցող և շար վհուկին օգնող բնության տարերային ուժերը փշրում են Սամպոն, որի կտորները սուզվում են ծովի ջրերում: Բայց ժողովուրդը չի կորցնում իր հավատը. նա կունենա Սամպո և բախտավոր կապրի:

Իսահակյանին հիացնում է էպոսի՝ բաղաձայնությներով (ալիտերացիա) և հիպերբոլաներով հարուստ լեզուն ու ոճը, որն առանձնապես թարմութուն և գեղեցկություն է հաղորդում ստեղծագործությանը: Նա կարևոր հանգամանք է հա-

մարում այն, որ էպոսը, որտեղ իրական գույներով պատկերված է կարելու-ֆիննական կյանքը՝ ընտանեկան կենցաղը, կնոջ դրուժյունը, մարդկանց փոխհարաբերությունները, զղեստները, կահ-կարասին, աշխատանքի տեսակներն ու առօրյա զբաղմունքը, այդ ամենի հետ արտացոլելով ժողովրդի աշխարհայացքը՝ անբավ նյութ է ամփոփում ֆինն ժողովրդի ազգագրությունն ու բանարվեստը ուսումնասիրողների համար: Բացի այդ, «նախնական կենցաղի, նախապատմական կուլտուրայի, մայրապետական շրջանի առկայության բազմաթիվ փաստեր և տեսարաններ կան: Աշխարհաստեղծման առասպելներ, աստվածների մասին դիցաբանական հետաքրքրական տեղեկություններ և համաշխարհային վեպերի թափառաշրջիկ նյութեր՝ շատ և շատ կան այնտեղ»: Իսահակյանն ընդգծում է այն հանգամանքը, որ «Կալեւալան» ներշնչման աղբյուր է հանդիսացել Լոնդֆելտյի «Հայավաթի երգը» պոեմի համար:

Ավետիք Իսահակյանը ժողովուրդների բարեկամության երգիչն է, սիրո և ներգաշնակ աշխարհի, խաղաղ գոյակցության ջատագովը: Եվ պատահական չէ, որ նա հատկապես բարձր է գնահատում մեր էպոսում արտահայտված ժողովուրդների համերաշխության և բարեկամության գաղափարները, իր ողջ ստեղծագործության համար այնքան հատկանշական անսահման սերը դեպի մարդը:

Այս տեսակետից ուշագրավ է նրա ճառը 1937 թ. Թիֆլիսում կայացած ՍՍՀՄ Գրողների միության վարչության ուսմթավելյան պլենումում²³: «Հայերն ու վրացիները արյունակից եղբայրներ են, ավելի քան 2000 տարվա եղբայրներ, վշտով ու հնությունը սրբագործված, միասին տառապել ենք, ստեղծագործել և պայքարել բռնապետությունների դեմ և միասին հաղթանակել»: Շոթա Ռուլթավելուն Իսահակյանը համարում է մեկը համաշխարհային այն հանճարներից, որոնց մեջ «բյուրեղանում են մարդկության լավագույն իդեալները մաքառումները, երազները, իդեալները»: Ռուլթավել-

²³ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1937, № 301: Ավ. Իսահակյան, երկեր, հատ. 4, Երևան, 1959, էջ 184—188:

լուն և նրա գործը դիտում և արժեքավորում է բանաստեղծի ապրած դարաշրջանի սերտ առնչակցության մեջ. խաչակիր-նհրի արշավանքը Իսլամի դեմ՝ Երուսաղեմի փրկության հա-մար, Բյուզանդիոնի ավերում և կողոպուտ: «Երբ Փոքր Ասիա-յում քրիստոնյա և իսլամ մոլեգնած բանակաները հրդեհում էին քաղաքներն ու ավանները, սրի էին ածում ժողովուրդ-ներին, ոչնչացնում դարավոր կուտուրաները, այդ զարհու-րելի, արյունարբու դարում հնչում էր Շ. Ռուսթավելու հու-մանիզմի մարգարեական ձայնը, նրա լայնախոհության, իմաստության, սիրո հրգը»:

Իսահակյանը գտնում է, որ Ռուսթավելին «հին, նոր և ապագա Վրաստանն է...», և որ նա վաղուց դուրս է եկել ազ-գային շրջանակներից և դարձել «համամարդկային սեփա-կանություն»: «Վագրենավորը» համարելով վրաց ժողովրդի «ազգային գանձը», նա ուրախությամբ է նշում, որ այդ ստեղ-ծագործությունը սիրելի է նաև հայ ժողովրդին:

«Սասունցի Դավիթ» 1000-ամյա հոբելյանի տոնակատա-րությունը 1939 թ. Իսահակյանի համար առիթ է դառնում ավելի հանգամանորեն զբաղվելու հայկական էպոսի ուսում-նասիրությամբ: Դրա վկայությունն են նրա հոդվածներն ու ելույթները²⁴, ինչպես և բազմաթիվ անտիպ գրառումները հայկական էպոսի էության, նշանակության, պատմական-դիցաբանական ակունքների, աշխարհագրական միջավայրի մասին²⁵: Ըստ հրեույթին, մտադրություն ունենալով պար-

²⁴ ա) «Հայ ժողովրդական դուցազնավեպը». «Խորհրդային Հայաս-տան», 1939, № 215:

բ) «Սասմա Մհերի մասին». «Գրական թերթ», 1939, № 25:

գ) «Սասունցի Դավիթ կամ Սասնա ծռեր». հաղորդած Թիֆլիսի ու-դիոյով 1939 թ. փետրվարին. թվադրված է՝ 6/1, ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ:

դ) «Գրական թերթ», 1939, № 28:

ե) «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին». «Խորհրդային դրա-կանության», 1939, № № 8—9, էջ 28—38:

զ) «Мысли о нашем эпосе», «Литературная газета», 1939, 15 сентября.

²⁵ Այդ գրառումներն անտիպ են և գտնվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող արխիվում:

զաբանել մեր էպոսի պատմական հիմքերը, դյուցազունների նախատիպերի հարցը, Իսահակյանը անդրադարձել է էպոսի տեղանուններին, Դավթի, Մհերի և մյուս հերոսների հետ կապված ավանդություններին՝ հրեման նաև քաղվածքներ անելով Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրությունից: Նրան հետաքրքրել են էպոսը ստեղծող սասունցիների սովորություններն ու բնավորության գծերը. «Սասունցիները քաջ են, տղամարդ, ազնիվ, խոսքատեր, ավանդապահ, ազգասեր...

Այսպիսի ժողովուրդն է, որ կարողացել է «Սասնա ծռեր» երկաթյա էպոսը ստեղծել»:

Մեկ այլ տեղ՝ ծոցատետրերից մեկում կարդում ենք հետևյալ գրառումը. «Սասունցիների մեջ ամենամեծ երգումը արևն է: Երբ երգում ուտողը զանազան երգումներ է անում, սրբի, աստծո՝ չեն հավատում. երբ ասում է «էն արևը, կամ էն արևը վկա», այն ժամանակ այլևս չհավատալ չի կարելի, դրանից դուրս, բարձր էլ երգում չկա»: Այդ տեղեկությունները Իսահակյանն ավելի լրացրել է 1943 թ. ամռանը՝ որոշ ժամանակ ապրելով 1915 թ. Արևմտյան Հայաստանից ներդադրած սասունցիների միջավայրում՝ Թալինի շրջանի Իրինդ գյուղում (Ալագյաղ): «Այս տարվա հուլիս ամսվա սկզբին սասունցի կոլտնտեսականները հրավիրեցին ինձ իրենց հյուրը լինել: Սիրով ընդունեցի հրավերը և ամբողջ ամիս ու կես հյուր եղա նրանց: Շրջեցի մոտ 9—10 գյուղ, եղա նրանց ամառանոցներում՝ Արագածի բարձրադիր արտոններում, ուր նրանք արածացնում էին իրենց ոչխարների հոտերը և կովերի նախիրները և պանիր ու յուղ էին շինում: Ընդհուպ ծանոթացա այս հինավուրց ժողովրդի թանկագին մնացորդի հետ, կենդանի աղբյուրից հավաքեցի էտնոգրաֆիկ և ֆոլկլորային շատ նյութեր»: Իսահակյանը հատուկ ուշադրություն է դարձրել այն բանին, որ սասունցիներն իրենց համարում են Սասունցի Դավթի սերունդ, որի գոյությունը նրանք կասկածի չեն ենթարկում: Հավաստում են, որ Դավթի ջրաղացի ջրաղացպաններն ապրել են մինչև մեր օրերը, որ նրանցից մեկի՝

Թմոյի գերեզմանը՝ Հալեպում, ինչպես նաև Մհերի պարսատիկի քարը, Դավթի ձիու մսուրը տեսնողներ են եղել: «Սասունում կա մի բլուր, բարձր, վրան կիսախարխուլ պարիսպներ, ցից-ցից, սրածայր քարեր, ժողովրդի կողմից կոչվում է Դավիթ-Մհերի բերդ»,—նշել է բանաստեղծը: «Դավթի բերդ: Ծովասարի և Անդոկի միջև: Քրդերն էլ ասում են Դավթի դալա»: Հետաքրքրական է նաև, որ Իսահակյանը մի քանի անգամ լինելով Կաղզվանում, տեսել է հին Կապուտա կամ Կապուս բերդը և կատարել գրառումներ. «Փաղր գյուլ—խանդութ խաթունը լցրել է թալանից ազատելու համար իր պղնձկալը: Խանդութա քաղաքի մոտ, Կապուտա բերդից հեռու նրանց մեջտեղն է լիճը. փոքր լիճ:

Կապուտա բերդի շրջակա լեռները, քարերը կապույտ են. այդ ձորից, ուր կա բերդը, որ Կապուտա ձոր է ասվում, գնում է Կապուտա գետը՝ ջուրը կապույտ, թափվում է Արաքսի մեջ: Խանդութա քաղաքը գտնվում է Ս. Վարդիկ ձորի և Կապույտ գետերի միջին տարածություն վրա»: Այստեղ էլ՝ Կաղզվանում բանաստեղծը 1901—1902 թթ. հանդիպել է մի ծերունի սասունցու, որը նրան պատմել է մեր էպոսի մի ուշագրավ տարբերակ: Այս մասին Իսահակյանը հաղորդել է Մ. Աբեղյանին, որն իր «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրության մեջ հիշատակել է այդ փաստը. «Մինչև այժմ Սասունի պատմը վածք չունինք: Պ. Ավ. Իսահակյանը 1901 թ. հայտնեց, որ Կաղզվանում ապրում է մի ծերունի սասունցի, որ իրեն համարում է Մհերի սերունդ, Մհերենց տնից և գիտե վեպը»²⁶:

էպոսի հոբելյանական տարում (1939) Իսահակյանը գրում է իր հայտնի «Մեր պատմիչները և մեր գուսանները» (նվեր մեր ժողովրդական վեպի՝ «Սասունցի Դավիթ»-ի հազարամյակին) բանաստեղծությունը²⁷, ուր արտահայտված է

²⁶ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 18:

²⁷ Իսահակյանի արխիվում պահվում է այս բանաստեղծության մտահղացման արձակ շարադրանքը. «Վանքերի մոռյլ խցերի մեջ, ձեթի ճրագի տակ, մեր պատմիչները հառաչանքով գրեցին մագաղաթի վրա հայոց ծանր, դաժան պատմությունը: Մենություն մեջ:

Իսկ մեր գուսանները նստած գեղջկական օջախների առաջ, աշխա-

մեր պատմական անցյալի երկու տարբեր ընկալումները՝ «Հայաստանի դժխեմ բախտը ողբացող» պամփիչների և «Հայրենիքի համար Թուր-Կայծակին բարձրացրած դյուցազունների» գովքը անող, «վառ ապագայի հանդեպ հավատով լցված խանդավառ գուսանների» կողմից:

«Սասունցի Դավթի» հաղարամյակին նվիրված Իսահակյանի հոգվածներում տրված է մեր էպոսի ընդհանուր բնութագիրը, վեր են հանված հիմնական առանձնահատկությունները և ցույց է տրված նրա տեղը այլ ժողովուրդների էպոսների մեջ: Բանաստեղծը հատկապես ուսումնասիրել է «Սասնա ծռերի» դիցաբանությունը, գրելով «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հոգվածը:

էպոսի և նրա կերպարների, հատկապես Մհերի դիցաբանական էության այդ դիտական քննությամբ նա ցանկացել է հիմնավորել Մհերի գեղարվեստական կերպարի այն ընկալումը, որ նա տվել է իր պոեմում: Այդ նյութի մասին նա զեկուցել է ՍՍՀՄ Գրողների միության վարչության 7-րդ՝ «Սասունցի Դավթի» էպոսի 1000-ամյակին նվիրված պլենումում: Հոգվածն ու զեկուցումը գրեթե նույն բովանդակությունն ունեն:

Զեկուցման սկզբում Իսահակյանը վերապահություն է անում, որ ինքը հավակնություն չունի նոր բան հայտնաբերելու Մ. Աբեղյանի կատարած խորունկ հետազոտություններից հետո: «Ես միայն մի քանի խոսք կասեմ այդ դժվարին նյութի շուրջը և թեթև համեմատություն կանեմ մեր վեպի և ուրիշ վեպերի դիցաբանականի միջև»,—ասում է նա: Եվ իրոք, իր ուսումնասիրությունը կատարելիս նա հենվել է Աբեղյանի հիմնական դրույթների վրա, ինչպես և օգտագործել է Թ. Ավդալբեգյանի «Միհրը հայոց մեջ» աշխատությունը: Խոսելով էպոսի դիցաբանական հիմքերի մասին՝ սկսած անիմիստական և տոտեմական աշխարհըմբռնման հետքերից մինչև պատմական անցքերի հիշատակումները, ապա և

տասեր ժողովրդի մեջ, ոգևորված հյուսեցին հայոց դյուցազների հերոսական կռիվները հայրենի հողի համար, և առնական ձայնով երգեցին այդ ներշնչող վեպերը»:

«միջին դարերի պատմական ռեալ դեմքերի և դեպքերի վերարտադրությունը», Իսահակյանը տեսնում է ընդհանրություն բոլոր մեծ էպոսների միջև՝ կոսմիկ ուժերի աստվածացման և անձնավորման հարցում: Մեկ անգամ ևս շեշտելով, որ էպոսների հերոսները աստծո որդիներ են, նա անդրադառնում է մեր վեպի հերոսների թեոգոնիկ ծագմանը՝ ի դեմս բնության ամենահզոր տարերքի՝ ծովի անձնավորումը հանդիսացող Ծովինարի, այդ ծով-աստծու որդու՝ Սանասարի, որը հին ծովային-ամպրոպային աստված Վահագնի վերակենդանացումն է, ապա և խոր հնությունից եկող, հայ ժողովրդի ամենասիրելի հերոս, «մարդասեր և խաղաղասեր», «աստվածային» Դավթի: «Հնդկական Վեդաների մեջ աստվածների ընդհանուր անունը Դյավ է, որ նշանակում է ամենազոր, լուսավոր, պայծառ»²⁸: Իսահակյանը ուշադրության է առնում նաև Սասնա տան հրեղեն ձիուն՝ ամպրոպային-ծովային ծագում ունեցող Քուռկիկ Զալալուն, որը նման է «Ալեքսանդր Մակեդոնացու առասուլելական Բուցեֆալին, նրա պես իմաստուն է, կանխատես, խոսում է մարդկային լեզվով»: Անդրադառնալով նաև Թուր-Կայծակիի ամպրոպային ծագմանը և ընդգծելով թրի և կայծակի երկաթից կուած լինելը, նա հավաստում է տարբեր ազգերի մոտ գոյություն ունեցող պաշտամունքը երկնքից իջած այդ սուրբ մետաղի նկատմամբ, հիշելով, որ այն պաշտամունքի առարկա է դարձել նաև հայերի մոտ, քանի որ «չարխափան է»:

Իսահակյանը հատկապես կանգ է առնում Մհերի կերպարի վրա: Դա պատահական չէ, քանի որ, ինչպես երևում է արխիվային գրառումներից, այդ ժամանակ նա մտադիր է եղել երրորդ անգամ վերամշակել իր պոեմը և կատարել մի քանի հավելումներ: Հենվելով վերոհիշյալ աղբյուրների վրա, Իսահակյանը Մհերի դիցաբանական արժատները ցույց է տալիս վեդայական-իրանական-հայկական դիցաբանության մեջ, մատնանշելով Միթրիա-Միհր-Մհերի նույնությունը: Մհերը՝ վեդայական Միթրան է՝ արև-աստվածը, հայկական

²⁸ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 201:

հեթանոսական Միհր-արե աստծու անվան փոփոխված ձևը²⁹, Ընդունելով Մհերի կերպարի երկճյուղման՝ Աբեղյանի տեսակետը, Իսահակյանը, սակայն, համամիտ չէ հերոսի առյուծածն մականվան բացատրության հարցում: Ինչպես և Թումանյանը, նա այն չի կապում առյուծ սպանելու հետ, այլ ընկալում է որպես առյուծակերպ՝ արեալին մակդիրով, հիշելով, որ հին պարսիկների և հայերի մոտ առյուծը սրբազան կրակի խորհրդանիշ է: Ուրեմն, բոլոր դեպքերում «Մհերը կրակն է, կայծակն, ամպրոպն է. Մհերը ամպրոպն է»:

Միհրը եղել է հին հայերի ամենասիրելի աստվածներից մեկը՝ ճշմարտության, բարության, բարոյական մաքրության աստվածը: Նրա պաշտամունքը տարածված է եղել ո՛չ միայն Հայաստանում, այլև ամբողջ անտիկ աշխարհում: Քրիստոնեության մուտքը և հաղթանակը Հայաստանում հետզհետե փոխում է Միհր-Մհեր աստծու սկզբնական բարի բնույթը, ենթարկելով նրան դիվացման: Ժողովուրդը երկար ժամանակ պահպանում է նրա բարի կերպարը, իսկ հետագայում նրան դարձնում իւր էպոսի հերոսներից մեկը, Իսահակյանի բնորոշումով՝ «ամենաողբերգականը և ամենավսեմը»³⁰: էպոսը, սակայն, զերծ չմնաց քրիստոնեական դադափարախոսության ազդեցությունից, որը և անդրադարձել է Մհերի էպիկական կերպարի վրա: Դրանով պիտի բացատրել չարափոխված Մհերի դիվական դերը՝ «միհրական հին, ազնիվ, նվիրական հատկությունների կողքին»: Մհերը լրացնում է աստծուն դեմ գնացող հերոսների շարքերը և Իսահակյանը հիշատակում է նրա զուգահեռ-ազգակիցներին՝ «աստծո դեմ մարտնչողների համաշխարհային ըմբոստ հույլի մեջ»: Դրանք են՝ բիբլիական սատանան, Բյուրասպ-Աթահակը (Ավեստայում), հունական Պրոմեթեոսը և հրեական Դավիթ արքան, վրաց առասպելի Ամիրանը և օսերի Ամրանը, ռուսաց բոլատիրները և Տիրուլի լեռներում բանտարկված գերմանական Լյուցիֆերը և, վերջապես, «Արարատ լեռան վիհերի մեջ բանտարկված հա-

²⁹ Ավ. Իսահակյան, Երկիր, հատ. 4, էջ 203:

³⁰ Նույնը, էջ 208:

յոյց թափափոր Արտավազդը»³¹։ Աստծու կողմից սահմանված հասարակական օրենքի դեմ ըմբոստանալու համար, նրանք ստացել են իրենց պատիժը, սակայն, էպոսը ստեղծող ժողովուրդների հետագա սերունդները չեն հաշտվել նրանց դառը ճակատագրի հետ և լի հույսով սպասել են նրանց ազատագրմանը։

Հետաքրքրական է և բնորոշ, որ Իսահակյանը կանգ առնելով Մհերի կերպարի երկվության վրա, ընդգծում է բարության դերակշռությունը և եզրակացնում, որ նա «վերջնական սինթեզի մեջ բարի է»³²։ Սա լիովին համապատասխանում է Մհերի վիպական կերպարի ընկալմանը «Սասմա Մհեր» պոեմում։

«Սասմա ծուրը» համարելով մեր ժողովրդի «գլուցադնական, վիպական և պատմական» շրջանների ծնունդ, Իսահակյանն առանձին աշխատություն չի նվիրել նրա պատմականություն հարցին։ Վերջինիս նա անդրադարձել է հպանցիկ՝ իր վերոհիշյալ հոգվածներում, ելույթներում, արխիվում պահպանված գրառումներում և ասույթներում։ զրանք, գերազանցապես, առանձին մտքեր, դիտողություններ են, բայց անշափ արժեքավոր և հետաքրքրական։ «Սասունցի Դավիթ» էպոսը բանաստեղծը դիտում է որպես արտացոլումը մեր պատմության՝ սկսած Հայկի ու Բելի առասպելից մինչև մեր օրերը, «արձագանքը պատմական իրերի, դեպքերի, կռիվ-

³¹ Արտավազդի կերպարը ևս երկվական է՝ բարի-չար. ըստ հնրանոս հայերի, ինչպես երևում է Եղնիկ Կողբացու հայտնի հատվածից, նա սկզբնապես ունեցել է բարի բնավորություն, հետագայում, քրիստոնեական կրոնի ազդեցությամբ, նրա բնավորությունը չարափոխվել է։

Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Մանուկ Աբեղյանը։ Նա շատ հետաքրքիր զուգահեռ է անցկացնում Արտավազդ—Մհեր դյուցազունների միջև, գտնելով, որ «Մհերի առասպելն ավելի ևս նման է Արտավազդի առասպելին»։ Մատնանշելով այն ընդհանրությունները, որ կան այդ երկու կերպարների միջև, նա եզրակացնում է, որ ազգը սպասում է երկուսին էլ, սակայն «Արտավազդն՝ աշխարհականի հայացքով՝ պիտի տիրի աշխարհին և թագավորի, իսկ Մհերը՝ քրիստոնեական հայացքով՝ պիտի նահատակվի» (Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 149)։

³² Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 208—209։

ների, սոցիալական ցնցումների, հուզումների, որ ունեցել է դարեր առաջ ժողովուրդը, մեր պատմության հին օրերից մինչև նոր օրերը»։ Իսահակյանը իրավացիորեն գտնում է, որ մեր վեպը չի հնթադրում հայ ժողովրդի ապրած ինչ-որ ժամանակահատված, այլ դա նրա ամբողջ կյանքի պատմությունն է, սկսած գողթան երգերի դարաշրջանից, «որի սահմանները կորչում են անհիշատակ դարերի մշուշի մեջ, ժամանակների սկիզբների մեջ, դիցաբանության և հեթանոսության դարաշրջանների մեջ»։ Հայկական էպոսը «կրում է իր մեջ այնպիսի տարրեր, որոնք գալիս են առասպելական-միֆոլոգիական մեր գոյաշրջանից, մեր նախնական աշխարհումբունումից, մեր ժողովրդի կազմավորման սկիզբներից»։

Բանաստեղծը «Սասունցի Դավիթ» էպոսի վրա տեսնում է «մեր ժողովրդի 2000 տարվա գոյության կնիքը», «մեր լինելիության և գոյության խտացումը»։ Իսահակյանը էպոսը համարում է հայ ժողովրդի «ինքնապաշտպանման, ինքնագոյության», ազգային անկախության համար մղվող կռիվների ծնունդ, արաբների վտարման, «սասունցիների կռիվ ու հաղթանակի», «մեր ժողովրդի գոյամարտի վեպը»։ «Թըշնամիների և մեր հերոսների նժույգների կայծող սմբակների դոփշունի տակ է ստեղծվել մեր վեպը»,—գրում է նա։ Իսահակյանը հատկապես շեշտում է էպոսի կերպարների մեջ դրսևորված՝ հայ ժողովրդի հոգու արիությունը։ Բազմաթիվ անգամներ նա՝ հայ ժողովուրդը, «ճգմվել է, ավերվել, կոտորակվել, բայց չի ոչնչացել. և մանավանդ չի ոչնչացել նրա հոգին»։ Նրան երբեք չի լքել ազատության վառ հույսը, միշտ լի է եղել «բաղձանքներով ու հավատով՝ իր հզոր ապագայի հանդեպ» և կարողացել է հանգել այնքան կարևոր եզրակացության՝ չար աշխարհի կործանման և նոր՝ «արդարության, ազատության, իրավունքի աշխարհի» ստեղծման դադափաբին։ Հետաքրքրական է, որ Իսահակյանը, խոսելով հայ ժողովրդի ողբերգական և հերոսական պատմության մասին, ընդհանրացումներ է կատարում էպոսի հիմնական կերպարների միջոցով, էպիկական պատկերավորությամբ։ «Համաշ-

խարհային պատմութիւնը հայ ժողովրդին վիճակեց մի հայ-
րենիք՝ աշխարհակալ մեծ ազգերի քառուղու վրա, և այդ եղաւ
հայ ժողովրդի ծանր ճակատագիրը,—գրում է նա իր «Փորձ
մեր էպոսի դիցաբանության մասին» հոգւածում:—Միշտ եր-
կու ջաղացքարերի մեջ տրորվեց հայ ժողովուրդը, բայց իր
անզուգական հերոս Դավթի նման մնաց կենդանի, դարերի
մեջ անթիվ Մսրա-Մելիքներ զարկեցին նրան հսկայական
գուրգերով և թրերով, բայց նա մնաց մշտապես կենդանի:
Անշեջ պահեց և զարգացրեց իր դասական ճոխ լեզուն, բարձ-
րացրեց իր հոյակապ ճարտարապետութիւնը, գուրգուրեց իր
սրտաբուխ մելոսը, և որ զարմանալին է ամենից, նա շարու-
նակում է ջարդերի, ավերումների, քայքայումների մեջ իսկ
երբեք չխախտել իր անընկճելի հավատը, երբեք չթուլացնել
իր բոցավառ անխորտակելի տենչանքը լավագոյն ապագայի
համար և այս բովի միջով հրաշակերտեց իր հանճարեղ հե-
րոսավեպը:

Ազատագրեց Մհերին՝ հայ ժողովրդին, դարավոր բան-
տից:

Հայ ժողովուրդը իր ոտների տակ հող ունի հիմա և այդ
հողը շատ ամուր է»³³:

Իսահակյանը մեր էպոսը համարում է «Հայ ժողովրդի
այլափոխված, բանաստեղծական պատմութիւնը», «մեր ժո-
ղովրդի ստեղծագործ երևակայության պրիզմայի միջով ան-
ցած հայոց պատմութիւնը»: էպոսի պատմականութիւնը
նա դիտում է ընդհանրացված ձևով, գտնում, որ մեր էպոսը
«դրսևորել է մեր պատմութիւնը կամ նրա էութիւնը, մեր
պատմության փիլիսոփայութիւնը»: էպոսում նա տեսնում է
«բանաստեղծական-վիպական վերարտադրութիւնը միջին
դարերի (7—10) պատմական ոեալ դեմքերի և դեպքերի»³⁴:
Իր գրառումներում գերազանցապես հիմնվելով Մ. Աբեղյանի
հայտնի հետազոտութիւնների վրա, Իսահակյանը նշել է
իրական-պատմական այն դեմքերն ու դեպքերը, որոնք

³³ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 216:

³⁴ Նույնը, էջ 195:

իրենց բանաստեղծացած արտացոլումն են դտել մեր էպոսում:

Հայկական էպոսի հետադոտողներից ոմանք «Սասունցի Դավիթ» պատմականության քննությունը գնահատել են որպես «էպոսի և պատմության նույնացման ձգտում»: Այդ մեղադրանքը հասցեագրվել է հատկապես Մանուկ Աբեղյանին³⁵: Հանրահայտ է, որ յուրաքանչյուր էպոսի հիմքում ընկած են տվյալ ժողովրդի դիցաբանությունը և պատմությունը: «Ամեն ազգի մեջ ևս մի որևէ կամ քանի նշանավոր պատմական դիպված առաջ են բերում վիպական բանաստեղծություն, և այս կամ այն վեպը ծնունդ է առնում մի որոշ տեղում, որ ավելի շահագրգռված է պատահած դեպքով, և ապա, եթե հորինված վեպը յուր մեջ ունի կենդանի ազգային սաղմեր, տարածվում է ազգի մեջ ուրիշ կողմեր, ընդունելի է լինում ամբողջ ազգից և դառնում համազգային վեպ... Վեպի մեջ պատմվածքները ժողովրդի կյանքից առած պատմական նշանավոր դիպվածների հիշողություններ են, միայն բանաստեղծորեն պատմված և այլափոխված»³⁶, — գրել է Մանուկ Աբեղյանը (ընդգծ. իմն է—Հ. Ա.):

Մ. Աբեղյանն իր ուսումնասիրություններում ցույց է տվել աշխարհագրական այն միջավայրը, որտեղ ծնունդ է առել մեր էպոսը և ապա տարածվել, ձեռք բերել համազգային նշանակություն. պարզել է պատմական այն դեպքերն ու դեմքերը, որոնց հեռավոր հիշողությունները պահպանվել են էպոսում, այլ խոսքով՝ նրան ղբաղեցրել է մեր պատմության գեղարվեստական-բանաստեղծական արտացոլումը էպոսում, և ոչ րե վերջինիս նույնացումը պատմության հետ: «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականության խնդիրն այդ կերպ է ընկալել նաև Իսահակյանը:

Ավետիք Իսահակյանը էպոսի մեջ տեսնում է ժողովրդի «աշխարհայացքի խտացումը», նրա «աշխարհըմբռնումը,

³⁵ Տե՛ս Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Երևան, 1960, էջ 17:

³⁶ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 17—18, 30:

աշխարհամեկնությունը»։ Այնտեղ ինքը՝ ժողովուրդն է, իր «ասլրած, տեսած դեպքերով», «վերափոխված ալլափոխված իր էության հարմար, իր պատկերի նման», «իր գործերով, ոգով, էությամբ, իդեալներով...»։ Բոլոր դեպքերում Իսահակյանի համար առաջնահերթը մնում է ժողովուրդը՝ որի կյանքը, բնավորությունը, ազգային դեմքը մարմնավորված է էպոսում. այն «հայ ժողովրդի հոգեկան իրականության, առաքինությունների ցուացումն է», «հայ ժողովրդի սիմվոլը», «նրա կյանքի... երկարատև գոյության, ուրեմն ասլրումների և հասկացողությունների էնցիկլոպեդիան»։ Բանաստեղծը մեր էպոսի մեջ տեսնում է արտացոլված հայ ժողովրդի հոգեկան կարողությունները, բարոյական գաղափարախոսությունն ու հայացքները, մարդկային բարձր առաքինություններն ու հատկանիշները՝ խիզախություն, հավատարմություն, անզավաճան սեր, տոկունություն... «Դավիթը հայ ժողովրդի համակենտրոնացումն է, նրա հատկությունների խտացումը, մարմնացումը... նրա օբյեկտացումը, սիմվոլը», — գրում է բանաստեղծը։ Իսահակյանը հավաստում է, որ մեր ո՛չ մի վեպում այնքան խորը չի շոշափվում հայության ոգին, որքան «Սասունցի Դավիթի» մեջ, որ ստեղծված է ժողովրդի «հոգեբանությամբ ու հոգու համաձայն», ուր «բաբախում է նրա սիրտը», «առարկայացած է նրա հոգին...»։ Ինչպես Մանուկ Աբեղյանը, Իսահակյանը ևս հաստատում է մեր էպոսի դեմոկրատական էությունը, որ նա «վերից վար ռամկական է»։ Թերևս այս հանգամանքն է ավելի սիրելի դարձրել մեր էպոսը՝ «ամենից իմաստուն և վավերական» մեր ժողովրդական ստեղծագործությունը։ Բանաստեղծն այնտեղ գտնում է հայ դրականության մեջ շոշափված հիմնական թեմաները և ամենից առաջ պայքարը ժողովրդի ներքին և արտաքին թրշնամիների դեմ՝ հանուն սոցիալական և ազգային ազատության. կոիվ աստծու դեմ, բնության դեմ, մարդկային ճակատագրի դեմ՝ բոլոր կապանքներից մարդու ազատագրության, «աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման», ողջ մարդկության երջանկության համար։ Այս գաղափարներն էլ

կազմում են Իսահակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունը:

Իսահակյանն անդրադառնում է նաև մեր էպոսի էպիկական բնույթին, ընդգծում դեպքերի, ժողովրդի բնավորության գծերի «պերսոնիֆիկացիան, հիպերբոլիզմը», «որով արտահայտվում է ժողովրդի քաջության շափը»:

«Սասունցի Դավիթի» մեջ Իսահակյանը ցույց է տալիս ընդհանրություններ և նմանություններ այլ ժողովուրդների, էպոսների և էպիկական զրույցների հետ: Այսպես օրինակ՝ նշելով, որ «Սանասարի կովի մեջ ընդդեմ վիշապի մարմնացած է ավելի հին գաղափար՝ մարդկային ճիգը բնության անզուսպ ուժերը ենթարկելու մարդկության բարօրության համար», Իսահակյանն ավելացնում է՝ «Ինչպես ֆիննական «Կալևալայի» հերոսները կռվում են բնության տարերքի դեմ և բնկճում դրանց՝ ժողովրդի բարիքի համար, նույնպես էլ Սանասարը սպանելով վիշապին, կորզում է ջուրը, այդ անհրաժեշտությունը մարդկային գոյության համար»³⁷: «Մհերը՝ մեր Ոգիսականը, Դավիթը՝ Իլիականը»: Կամ՝ «Մեր էպոսը՝ Իլիականից հետո՝ մյուսներից առաջ»:

Նմանությունների կողքին Իսահակյանը ցույց է տալիս նաև այն առանձնահատկությունները, որոնցով հայկական էպոսը տարբերվում է ուրիշ էպոսներից: Այսպես, գտնելով, որ քրիստոնեական կրոնը էպոսների միջից վտարել է դիցաբանությունը և նրա տեղը դրել իր դոգմաները, կերպարները, հրաշքները, ինչպես օրինակ՝ «Ռուլանդի երգում», «Սիդում», «Պարսիֆալում», Իսահակյանն այն միտքն է հայտնում, որ այդ նույնը տեղի չի ունեցել հայկական էպոսի հետ, որ քրիստոնեական կրոնը «չի խաթարել Սասունի տան դիցաբանական էությունը, ինչպես և՛ Նիբելունգների երգին»³⁸: Ի տարբերություն մյուս էպոսների և մի շարք առասպելների, Իսահակյանը հայկական էպոսի մեջ տեսնում է աշխարհի վերակառուցման գաղափարը՝ «հույսը աշխարհի վերանորոգման,

³⁷ «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին», Նրկեր, հատ. 4, էջ 198:

³⁸ Նույնը, էջ 202:

մի անգամ կործանվելուց հետո», որ նա համարում է «հայկական՝ բխած մեր ապրած պատմությունից»:

Եվ որ ամենակարևորն է՝ մեր էպոսը ժողովուրդն է ստեղծել և ոչ մի գրագետի, բանաստեղծի ձեռք չի դիպել, անհատական կնիք չունի, այլ համաժողովրդային, իսկ «Նիբելունգների երգը», «Իզոորի ասքը», «էնեականը», «Շահ-Նամեն» բանաստեղծներն են գրել... Մինչդեռ՝ «Մեր վեպը բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է: Այս տեսակետից եզակի նշանակություն ունի նա և ուսումնասիրությունների համար՝ անշափելի արժեք»³⁹:

Հետաքրքրական է ընդհանրապես էպոսի և մասնավորապես՝ «Սասունցի Դավիթի» իսահակյանական ընկալման մի այլ կողմը: էպոսները արտացոլում են իրականությունը, ժողովրդի կենցաղը, մտայնությունը, հասարակական փոխհարաբերությունները, պատմությունը, սակայն, սա դեռ բոլորը չէ: Յուրաքանչյուր ճնշված ու հարստահարված ազգ էլք է որոնում՝ դառնալու ազատ ու անկախ: Հպարտությամբ է հիշում նա իր էպոսը՝ ազատության համար մղած հերոսական պայքարի ու հաղթանակի զեղալ՝ անտական ընդհանրացումը: «Դա երազ է: Ոնց որ մարդ չի վանդը, աղքատը, բանւարկյալը երազի մեջ իրեն տեսնում է առողջ, հարուստ, ազատ, այնպես էլ ստրուկը իր ազգային վեպի մեջ. ոնց որ մանուկը հեքիաթ է լսում և մոռանում է սովորական գորշներկան, այնպես էլ ստրկացածը: էպոսը, լեգենդան ստեղծում են ցանկալի հոգեկան մթնոլորտ, տալիս են մոռացման պահեր, ոգևորություն, հավատ՝ դեպի ապագան»: Իսահակյանը մեկ անգամ ևս շեշտում է էպոսի դերը ժողովրդի հոգեկան բարձր կարողությունների պահպանման, հարատևման տեսակետից: Նա գտնում է, որ եթե ստրկացած ժողովրդի հոգին չստրկանա, «չշղթավի», նա կպահպանի իր հավատը, հույսը, չի կորցնի իր դեմքը, չի «այլասերվի ու փոշիանա»: «Սփոփանքն է նրա վեպը: Այնտեղ իր ցանկացած, ուզածն է կատարվել, և ամեն լսելիս՝ կատարվում»: Իսահակյանը

³⁹ «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին», Երկեր, հատ. 4, էջ 194:

հպարտությամբ է հավաստում, որ հայ ժողովուրդն ամուր է հոգեպես, ունի իդեալ, հրազանք, և դրանից ծնված վեպ, և «իր վրեժը, սրտի ուղածը...վեպի մեջ իրականացնում է և սիրտը հովանում է»։ Դրանով է բանաստեղծը բացատրում նաև մեր էպոսում տեղ գտած հիպերբոլաները, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է իր լավագույն իդեալը։ «...Թե ինչպես Դավիթ քառսուն փահլեանի վիզը հավի վզերի պես կտրում է, ինչպես մի բարդու ծառով 500 զինվոր է կոտորում և այլն, և այլն, դա՛ անհավասար պայքարում դաժան, անագորույն թշնամուն հաղթելու մեր ժողովրդի ցանկության արտահայտությունն է»։ Սակայն, Խաչակյանն այդ ցանկությունները չի համարում հողից կտրված։ «Դրանք ռեալիստական են, քանի որ մարդու ներքինը կա այնտեղ, խորին ներքուստը. և կամքը ձգտում է, և խելքը ձգտում է՝ այդ տենչանքը իրականացնելու»։

Խաչակյանը հավաստում է գեղեցիկ իդեալներով, դեմոկրատական-հումանիստական գաղափարներով տոգորված մեր ազգային-հերոսական էպոսի համամարդկային նշանակությունը։ «Մեր վեպի մեծ կերպարները՝ Դավիթ, Մհեր, հասնում են, ամենայն իրավունքով, գեղարվեստի իսկական բարձունքին՝ համաշխարհային սիմվոլներին»,—գրում է նա իր ուսումնասիրության մեջ⁴⁰։ Բանաստեղծը հանգում է այն եզրակացության, որ «Սասնա ծռերը» և՛ իր հնությամբ, և՛ բարձր արվեստով, դեմոկրատիկ, ինտերնացիոնալ, հումանիստական գաղափարներով, ամենայն իրավամբ, պատվավոր տեղ ունի «դասական, առաջնակարգ էպոսների պանթեոնում» և դասակից է «Իլիականին», «Շահ-Նամեին», «Նիբելունգներին»։

էպոսը եղել է մեր ժողովրդի ներշնչարանը՝ նրա պատմության դառն ու դաժան պահերին, և նույնը կմնա, քանի որ նրա արտահայտած իդեալները համընկնում են առաջա-

⁴⁰ Ավ. Խաճակյան, Կրկեր, հատ. 4, էջ 215.

վոր մարդկության իդեալներին: Վեպում արտահայտված հումանիզմը, ժողովուրդների բարեկամության և համերաշխության գաղափարը բանաստեղծը համարում է սերունդների մշտական ոգևորության աղբյուր: «Մեր վեպը իր ժողովրդասիրության, խաղաղասիրության, դեմոկրատիզմով, հայրենասիրության, քաջասրտության, առնականության և ազատասիրության և սոցիալական պոտենցիալ էության միանգամայն և շա՛տ արդիական է և կենդանի...», — գրում է նա: Ժողովրդի սրտին մոտ ու հարազատ այդ գաղափարների շնորհիվ է, որ «Սասնա ծռերը» ստացել է համազգային ճանաչում, սիրվել ժողովրդի կողմից: Սասնա էպոսը իսահակյանը համարում է մեր ավանդությունների «նվիրական գանձարանն ու փոխանցողը», «դարերի մեջ կրթիչն ու ներշնչողը»: Այս վսեմ գաղափարները մարմնավորող և դրանք պրոպագանդող էպոսի դյուցազնները սովորեցնում են շիտակություն և ազնվություն, քաջություն և անձնուրացություն: Պատահական չէ, որ 1941 թ. բանաստեղծը կոչ էր անում՝ լինել 'Իսավթի պես «խաղաղասեր և հաշտ դրացիների հետ», բայց և տեղն եկած ժամանակ անձնվիրաբար կռվել Հայրենիքի ազատության և ժողովրդի բարեկեցության համար, «հավատարիմ լինել ժողովրդի իդեալներին», Մհերի նման պայքարել «բռնության ու կեղեքման դեմ և վառ պահել հավատը՝ աշխարհի վերակառույմին և արդարագույն ապագայի հանդեպ» («Մեր իդեալներն անսասան են») ⁴¹:

Տեղին է այստեղ հիշել Մանուկ Աբեղյանի խոսքերը, թե՛ «Սիրելի պիտի լինի մեզ համար մեր վեպը, որ մերն է, մեր սեփականը, մեր ժողովրդի դարավոր պատկերը... Ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով և մենք կգտնենք նրա մեջ մեր ժողովրդի հոգու խորքերը...» ⁴²:

Ինչպես Թումանյանը, իսահակյանը ևս «Սասնա ծռերի» մեջ տեսավ ու բացահայտեց «մեր ժողովրդի հոգու խորքերը»,

⁴¹ Ե. Զարենցի անվան դրականության և արվեստի թանգարան, Ավ. իսահակյանի ֆոնդ, № 52:

⁴² Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, էջ 211:

կյանքն ու հոգին, սխրագործություններն ու հրաշանքները և
հիացմունքով և զրափակեց, որ մեր էւրոսը մեր ժողովրդին
տալիս է՝

«Հպարտության իրավունք,
գոյության գրավական,
ազնվության վկայական»:

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՍԱՍՄԱ ՄՀԵՐ» ՎԻՊԵՐԳԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ

1

Ձեռնարկելով հայկական ժողովրդական էպոսի մշակմանը, Իսահակյանը պատահականորեն չի ընտրել շորրորդ ճյուղը: Դեռևս «Մասսա Մանուկը» և «Ուստա Կարոն» գրելիս բանաստեղծի պատկերացումներում Սասնա տան վերջին ժառանգը հառնել է որպես հայ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան: Սակայն, այնուհանդերձ, սկզբում Մհերի պատկերը դեռևս այնքան հստակ, «պայծառորեն չէր ձևակերպված նրա մտքի մեջ»: Դրանով պետք է բացատրել նրա վարանումներն ու տատանումները՝ մինչև պոեմը գրելը: Հետըզհետե Իսահակյանի մտածողության մեջ ավելի կոնկրետանում է Մհերը՝ իր սոցիալական բողոքով: Ռամկի «ազատության ժամը հնչեցնող» Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ է դնում բանաստեղծի վարանումներին, և նա իրականացնում է իր վաղեմի մտահղացումը, գրում է «Սասնա Մհերը» վիպերգը: Վերջինս 1922 թ. տպագրվում է Վիեննայում, սակայն հեղինակը, «դժգոհ մնալով գեղարվեստական կատարումից», վերամշակում է ալն, տպագրելով 1938 թ. Երեվանում:

Թե՛ մինչև Իսահակյանը և թե՛ նրանից հետո մեր էպոսը բազմիցս ենթարկվել է գեղարվեստական մշակման՝ ար-

ձակ և չափածո: «Սասունցի Դավիթ» մշակման փորձեր են կատարել Ս. Մանդինյանը⁴³, Հ. Ճաղարբեգյանը⁴⁴, Գր. Բալասանյանն⁴⁵ ու Լ. Մանվելյանը⁴⁶: Այդ մշակումները, սակայն, գեղարվեստական մեծ արժեք չեն ներկայացնում և ուշադրաժ նկատու էություն է պոսի մշակման նախափորձեր:

«Սասունցի Դավիթ» հաղարամյա հոբելյանը 1939 թ. առիթ հանդիսացավ նաև այլ մշակումների ստեղծման՝ սովետահայ շատ զրոգների կողմից⁴⁷. Վ. Վաղարշյան, Սարմեն, Հովհ. Շիրազ, Ս. Տարոնցի, Ա. Շալբոն և այլն: Հարկ է նշել նաև ավելի ուշ կատարված Կ. Սիտալի⁴⁸, Մ. Խերանյանի⁴⁹, Ն. Զարյանի⁵⁰, Ինչպես նաև Տ. Զիրբունու⁵¹ մշակումները: Հայ ժողովրդական էպոսի իրենց բարձրարվեստ մշակումներով առանձնանում են մեր դասական դրականության երկը մեծ ներկայացուցիչները՝ Թումանյանը⁵², Իսահակյանը⁵³ և Չարենցը⁵⁴:

Իսահակյանը հայկական ժողովրդական էպոսը մշակելիս հանդես է բերել ինքնուրույն մոտեցում: Մանրամասների մեջ շեղվելով ժողովրդական սկզբնաղբյուրից, նա հաբաղատ

⁴³ Տե՛ս «Աղգային դուցազնական աշխարհ», Թիֆլիս, 1880:

⁴⁴ Հ. Ճաղարբեգյան, Սասունցի Դավիթ դուցազն, Թիֆլիս, 1895:

⁴⁵ Գր. Բալասանյան, Առյուծաձև Մհեր, Մոսկվա, 1889. «Ասլի Մելիք և Սանասար», Թիֆլիս, 1898. «Սասունցի Դավիթ», Թիֆլիս, 1904. «Փոքր Մհեր», Բաթում, 1904. «Երկու պահլևան», Թիֆլիս, 1904:

⁴⁶ Լ. Մանվելյան, Սասունցի Դավիթ և Մսրա Մելիք, Թիֆլիս, «Մուրճ», 1905, № 4—5:

⁴⁷ Վ. Վաղարշյան, Սասունցի Դավիթ (ողբերգություն), Երևան, 1938: Սարմեն, Խանդութ-Խաթուն (պոեմ), Երևան, 1939: Հովհ. Շիրազ, Վերածնունդ, Երևան, 1939: Սողոմոն Տարոնցի, Դավիթ երգը, Երևան, 1946: Ա. Շալբոն, Զոջանց Դավիթ, Երևան, 1939:

⁴⁸ Կարապետ Սիտալ, Սասնա ծռեր, «Հատընտիր», Երևան, 1957:

⁴⁹ Մկրտիչ Խերանյան, Սասնա տուն, Երևան, 1958:

⁵⁰ Նաիրի Զարյան, Սասունցի Դավիթ, Երևան, 1966:

⁵¹ Տ. Զիրբունի, Սասունական, Փարիզ, 1943:

⁵² Հովհ. Թումանյան, Սասունցի Դավիթ, Ընտիր երկեր, Երևան, 1958:

⁵³ Ավ. Իսահակյան, Սասնա Մհեր, Երկեր, հատ. 2, Երևան, 1958:

⁵⁴ Ն. Չարենց, Սասունցի Դավիթ, «Գիրք ճանապարհի», Երևան, 1933:

է մնացել էպոսի էությանը: Ինչպէս իրավացիորեն նկատել է գրականագետ Գ. Հովհաննիսյանը, «էպոսում հայրենի երկրի անկախութեան և աշխարհի վերակառուցման գաղափարները օրգանապէս միաձուլված են ու հանգուցված: Այդ հանգուցից էլ սկսում է Իսահակյանը և, ծավալվելով, մշակումը հագեցնում սոցիալական շերտերով: «Սասմա Մհերը» ժողովրդի հավատի և սպասման ծնունդ է. այդ մշակումով Մհերի ճշուղը ճեղքեց էպոսի միջուկը և կյանք ելավ՝ զինված նոր լիցքով ու կորովով»⁵⁵: Հիանալի հասկանալով և ըմբռնելով պատմութեան ճիշտ ընթացքը, միևնույն ժամանակ հարազատ մնալով էպոսի ոգուն, բանաստեղծը դուրս է բերում Մհերին Ազոսավու Քարից որպէս աշխատավոր ժողովրդի իրավունքների պաշտպանի: Եթէ Դավիթը հիմնականում պայքարում է օտար նվաճողների դեմ, պաշտպանելով իր երկրի անկախութիւնը, ապա նրա որդին՝ Մհերը, ձգտում է իրականացնել մարդկութեան դարավոր երազանքը. այս իմաստով, թերեւ, կարելի է ասել, որ Թումանյանի Սասունցի Դավիթը և Իսահակյանի Մհերը լրացնում են միմյանց:

* * *

Հանուր մարդկութեան վիշտն ու տառապանքը միշտ հուզել են Իսահակյանին, սիրտը լցրել «դարդ ու ցավով». նա տեսել է, որ «...բովանդակ աշխարհը լաց ու կոծի մեջ է. բոլոր ժողովուրդները լծի տակ են առնված, ուժեղը լափում է թույլին, ամենուրեք բռնակալութիւններ...»

Ի՞նչ անել, մարդկութիւնն ինչպե՞ս ազատել այս դժոխքից»⁵⁶: Այս հարցն է, որ զբաղեցրել է մեծ արվեստագետին, քանի որ, ինչպէս ինքն է գրում, «Աշխարհի...չարիքները վերացնելու մասին ելք որոնելը միայն մեծ մարդկանց մենաշնորհը չէ, ամեն մի անհատ բնական մղում ունի այդ շարա-

⁵⁵ Գ. Հովհաննիսյան, Իսահակյանի ստեղծագործական աշխարհը, Երեւան, 1969, էջ 276:

⁵⁶ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 245:

լըկող հարցերին պատասխան փնտրելու...»⁵⁷։ Փնտրում է բանաստեղծը պատասխանը, նրա հոգին ու «սիրտը նման բացված խոր վերքի, որ տիեզերական կսկիծն է լալիս», մի ելք է որոնում աշխարհի շարիքը վերացնելու, չարիք, որը «բար աշխարհի» հակամարդկային հասարակական կառուցվածքի մեջ է, ուր «կյանքի կռվում ամենքն իրար դեմ են դուրս գալիս և սուր սրում միմյանց դեմ»։ Տառապանքը ըմբոստացնում է նրան և հասցնում անարդար աշխարհում քարը-քարին չթողնելու գաղափարին... Ճիշտ է նկատել Սերգեյ Շերվինսկին, որ «նրա «տիեզերական վիշտը» ոչ թե ուժմանտիկների աստվածամարտ վիշտն է, այլ նոր վիշտ՝ սոցիալական հնչեղությամբ, առանձնապես այրող դարձած ազգային-պատմական հանդամանքների հետևանքով»⁵⁸։

Սոցիալական անարդարությունների դեմ ըմբոստ տրամագրություններով են հատկանշվում Իսահակյանի՝ 1905 թ. նախորդող և հաջորդող տարիների սուեղծագործությունները, և այդ է պատճառը, որ իր դեմոնական էությունը, աշխարհի չարիքի դեմ ընդվզող Մհերն այնպես մոտ ու հարազատ է դառնում բանաստեղծին։ Դեռևս 1898 թ. գրված «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ-ցավ» բանաստեղծության մեջ արդեն սուկա էին խեղճ աղքատի և հարուստ-պարապ մարդկանց միջև դոյություն ունեցող սոցիալական հակամարտության տարրերը, որոնք ավելի ամբողջական, լրացված ձևով իրենց արտահայտությունը գտան «Սասմա Մհեր» վիպերգում։

Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Քարից, հողից հաց քամե.
Բեռով հացը հարստին տա,—
Հարուստն իշխե, վայելե։

Աշխարհից «փախ» չստացող տղերքը նման են այն մշակներին ու գեղջուկներին, որոնց դառը կյանքը տեսնելով,

⁵⁷ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 246։

⁵⁸ „Аветик Исаакян в русской критике“, Ереван, 1961, էջ 75։

ցասմամբ է լցվում «Ժարավ, անոթի ու վտարանդի» Սասնա հերոսը «Ողբ ու հեծեծանք» է տեսնում բանաստեղծն ամենուրեք, «արցունք՝ ժպտի հետ հյուսված, հացի հետ արյունվիշտ համատարած...» («Եվ անապատից, հեռո՛ւ ծովերից...»): Ու մեծ ցավ է ապրում Իսահակյանը, համոզվելով, որ միայն հայ մարդը չէ, որ տառապում է: Մեծ հումանիստը համակվում է տառապող ողջ մարդկության ազատագրության գաղափարով. «Իրենը, ազգայինը, նա բարձրացնում է մինչև համամարդկային: Եվ հայրենիքի ճակատագիրը նրա պոեզիայում սիմվոլիկ ձևով վերաճում է ամբողջ աշխարհի մարդկային ճակատագրի», — ասում է Կ. Զելինսկին⁵⁹: Այդ է պատճառը, որ բռնության ու չարի դեմ «սրբազան ոաղմի շեփոր է հնչեցնում բանաստեղծը դեռևս 1905 թվականին «Ազատության զանգ» բանաստեղծության մեջ, կոչ անելով փշրել անարգ ստրկության ծանր շղթաները, ելնել «մահվան ու փառքի դաշտը պայքարի»: Նա անհամբեր սպասում է «վեհ ռզատության մարտահրավերին». ըմբոստ ամբոխի մրրկալից ձայնը կհասնի նրան, անդամ երբ թաղված լինի ծանր հողի տակ («Լեռների լանջում, ծանր հողի տակ», 1906):

Իսահակյանը Մհերի նման՝ չի հաշտվում զրկվածի ծանր ճակատագրի հետ և վառվում է ազատության ու իրավունքի տենչով: Նա, դեռևս 1905 թ. ահեղ ճշմարտի սուրն էր դնում զրկվածի բռնացրում.

Դո՛ւ, որ թշվառ ես, անտուն, անոթի,

Դո՛ւ, որ քո ձեռքին կռել ես շղթա,

Դո՛ւ, որ քրտինքդ դառը ծովացած

Նզովք ես շինել և լուծ քո վրա —

Ես քո ժանիքը սրում եմ հիմա:

(«Անհուն վրեժի և ասելության»)

Հատկապես ուշագրավ է Իսահակյանի «Հացի երգը» բանաստեղծությունը, գրված 1906 թ.⁶⁰, ուր շատ ավելի ցայտուն

⁵⁹ Տե՛ս „Аветик Исаакян в русской критике“, Ереван, 1961, էջ 49:

⁶⁰ «Հառաջ» (օրաթերթ), 1906, № 23:

է արտահայտված մյուս ստեղծագործություններում առկա սոցիալական բողոքը: Այստեղ առկա են սոպոգա վիպերգի տարրերը, Մհերի ընդվզման պաթոսը. ավելին, առանձին տողեր, մասնակի փոփոխությամբ, տեղ են գտել «Սասմա Մհերի» մեջ, ուստի և հարկ ենք համարում մեջ բերել ամբողջությամբ.

Գովք եմ երգում յամաք հացին,
Փշրանքներին չոր հացի,—
Փշրանքներին, որ մնացին
Լի աշխարհից փայ ինձի...
Արյուն ու քրտինք ծով-ծով թափեցի,
Ոսկի արտերում արեին-բոցին,
Եվ անձրևի չափ արցունք թափեցի
Ու արյուն քրտինք՝ ի սեր չոր հացին:
Կալիս միջին շեղջ-շեղջ ցորեն,
Քյոխվեն եկավ, խարջ ու խարջ՝
Հաշվեց, չափեց, քաշեց, տարավ
Իմ աչքի լուս-ոսկի ցորեն.
Աղան եկավ, ոտքը զարկեց,
Հաշվեց, չափեց, քաշեց, տարավ
Իմ աչքի լուս-ոսկի ցորեն.
Խաչ ու տերտեր, աղքատ, աշուղ,
Բոշա, դերվիշ, հավք ու թռչուն՝
Լմենքն եկան, իրենցն առան,
Ես մնացի աղքատ նորեն,
Ձևոքս ծոցիս՝ մերկ ի մորեն,
Ձևոքս ծոցիս՝ կուտ կըմուրամ
Իմ քրտինքով շեղջած ցորեն.
Հերիք մնանք աղքատ ու զուրկ,
Մեր խեղճ խելքի կորածն ենք մենք.—
Մենք ենք դադել, մերն է հացը,
Մեր քրտինքի տերը մենք ենք.
Մենք ենք լցրել ամբար, մառան

Աղին, խանին, իշխանին,
Մենք մեր ձեռքով լուծ ենք շինել՝
Լուծ ենք դրել մեր վզին...

Ե՛լ, աշխատավոր, սարուկ ժողովո՛ւրդ,
Եվ լուծդ քցի՛ր, եղի՛ր ինքնիշխան.
Քրտինքիդ տերը մենակ դու եղիր,
Մեկեն կը կորչեն աղա, խան, իշխան.
Ազատությունն է հացն այս աշխարհում,
Երգեցե՛ք գովքը ձեր հալա՛լ հացին:
Հացն է, իմացե՛ք, ազատությունը,
Երգեցե՛ք գովքը ձեր հալա՛լ հացին.
Առա՛ջ գնացեք, աշխատավորնե՛ր,
Երգելով գովքը ձեր ազա՛տ հացին.
Հացն է լո՛ւյս ու զե՛նք, ուժ ու իրավունք,
Երգեցե՛ք գովքը ձեր արդա՛ր հացին,
Ձեր ազատության—ձեր հալա՛լ հացին...

Սոցիալական և ազգային ճնշումների դեմ ազատագրական պայքարի պաթոսը ցայտուն կերպով դրսևորված է նաև 1906—1907 թթ. գրված Իսահակյանի «Լեռների հսկան», «Հին ամրոցը», «Գարիբալդիականը», «Շաքրո վալիշվիլի» արձակ երկերում:

Այս փաստերը հիմք են տալիս եղրակացնելու, որ սոցիալական անարդարության դեմ բողոքի ուժգին արտահայտությունները Իսահակյանի ստեղծագործության մեջ տրամաբանորեն և օրինաչափ կերպով հանգեցրել են «Սասմա Մհերին»: Ի դեպ, այդ տարրերը բնորոշ են նաև Իսահակյանի հետագա շրջանի մի շարք ստեղծագործություններին: «Համբերանքի չիբուխը» պատմվածքը մեր ասածի լավագույն ասպարույցն է:

Հետաքրքրական է զուգահեռը Մհերի և «Նահապետական դարերի իմաստուն» Օհան-ամու միջև, որը նույնպես պատկերված է մտածող, խորհող, «միտք անող աշխարհի բանի մասին»: Մհերի նման սրտն ևս զայրացնում է գյուղական հողերի անհավասար բաժանումը և նա միանում է ռեսին ու

«մի քանի հարուստներին» ծեծող ընչազուրկ ըմբոստացողներին, ապա նրանց հետ դառնում փախստական: Եվ այն դեպքում, երբ նրա ընկերները իրար ետևից սկսում են վերադառնալ ու ներում ստանալ, «Օհանը մնուց մենակ և անսասան»: Նա չզիջեց: Մերժեց հարուստների պատգամը, որ ուղարկել էին նրանք—հանձնվել, զղջալ և թողություն ստանալ: Ճիշտ այնպես, ինչպես Մհերի վրա չազդեցին Սասնա իշխանների սպառնալիքները և

Մհեր կեցավ անպատասխան
Անպատասխան լեռ անսասան:

Մատնությամբ բանտարկված Օհան-ամին վերադառնալով կալանքից, Սասնա դյուցազնի պես իրեն մենակ է զգում գյուղում: Կյանքի անարդար դրվածքը ճնշում է նրան և հաորոշում է «մեկուտանալ», «աշխարհաթող» լինել:

Իսահակյանը տեսնում էր, որ ժողովուրդը Մհերին ուսմկացրել է և դարձրել իր տառապանքին ու պայքարին մասնակից, որպեսզի «դառ ուսմիկին և իր վիթխարի ուժը դնե ժողովրդի սղատության համար»: Այդ պատճառով է «նա աստծուն դյուցազնացրել և դյուցազնին ուսմկացրել, դարձրել ուսմիկ հերոս, ուսմիկ հսկա, ուսմիկ դյուցազն»:

Իսահակյանն իր վիպերգում ավելի է խորացրել ու հիմնավորել Մհերի կերպարը: Ինչպես ինքն է ասում էպոսին վերաբերող իր գրառումներից մեկում՝ «Մեր էպոսը, Մհերը, իր մեջ ունի պոտենցիալ վիճակում սոցիալական էություն: Ես ձգտեցի բանալ այդ...»:

Եթե էպոսում Մհերը երկվական է (բարի և չար), Իսահակյանը ձգտել է վերացնել այդ երկվությունը և իր վիպերգում նրան ներկայացրել է միայն բարի: Այն հանգամանքը, որ Մհերը կնոմ է պայքարի՝ հօգուտ զրկվածների, որպիսին ինքն է, ավելի ևս հիմնավորում է նրա ըմբոստացող կերպարը: Բողոքը աստծո դեմ մոռեցնում է Մհերին իր դիցաբանական նախատիպին և մյուս աստվածամարտ հերոսներին:

Իսահակյանը զարգացնում է էպոսի՝ հիմնականում Մհերի կյանքին վերաբերող դեպքերը, ակնարկները, խորացնում է Մհերի դժգոհությունը կյանքից, աշխարհից, ստեղծում դրանք հաստատող մի քանի նոր դրվագներ, միջադեպեր:

Ստեղծելով Մհերի կերպարը, Իսահակյանը, անտարակույս, ունեցել է հիմքեր թե՛ էպոսում և թե՛ պատմության մեջ: Մեր էպոսը, արտացոլելով ժողովրդի պայքարը օտար բռնակալության դեմ, արտահայտում է նաև ժամանակաշրջանի սոցիալական հարաբերությունները: Այստեղ մենք հանդիպում ենք թագավորների ու իշխանների, ռեսերի ու վանականների, մի խոսքով՝ ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչների, իսկ մյուս կողմից՝ հազիվ իրենց ապրուստը հողացող խեղճ ու կրակ «քյասիբների», մշակների ու գութանճիհների, ջրկիրների ու նախրապանների... Հիշենք թեկուզ Դավթին խրատող պառավ կնոջը, որի ապրուստի միակ միջոցը կորեկի փոքր արտն է (Ա. հ. Ա. պ. էջ 15):

Սասնա մեծ տան հերոսները լի են սիրով ու խղճմտանքով շահագործվող մարդկանց նկատմամբ, ցանկանում են ամեն կերպ օգնել նրանց, պաշտպանել նրանց շահերը: Էպոսի պատումներից մեկում, երբ Դավիթը դանձ է գտնում քարայրում, Քեռի Թորոսին ասում է.

Ինչքան քու ղուվաթ կը յաղթա, վեկալ,

Ինչ կը մնա, քասիբ քոնսուբի վրա բաժին արա:

(Բ. հ. Բ. մ. էջ 125)

Սոցիալական անարդարությունն իրենց անդրադարձումն են գտել էպոսում. Սասնա ծռերն անդիջում են ինչպես օտար նվաճողների, այնպես էլ ներքին հարստահարողների նկատմամբ: Փոքր Մհերը, Շաբի-արքային սպանելով, նրա փոխարեն թագավոր է կարգում սասունցի ջուհակին: Այս փաստը հատուկ նշել է Իսահակյանն իր գրառումներում:

Ու զարկեց, Շաբի-արքանի գլոխ կտրեց:
 Էդ տեղեն գնաց, հորու վրեն կայնավ.
 Պառավն ու ուր յոթ ախշիկ հորու միջեն հանեց.
 Բերեց գործըրարի կուշտ.
 Առաջ գործըրար լե հետ,
 Եկավ Շաբի-արքանի դիվան:
 Պառվու պղտիկ ախշիկ տվեց ջո՛ւլակին,
 Ու ջո՛ւլակ դրեց թագավոր Շաբի-արքանի տեղ:
(Բ հ. Ա մ. էջ 100)

Նույն զրառումներում Իսահակյանն անդրադառնում է Մհերի նկատմամբ գործադրվող անիրավության փաստին, գնահատելով այդ որպես մարդու շահագործում՝ մարդու կողմից. «Քեռիները, իբրեւ հավասարներ, միենույն դասակարգից, շահագործում են Մհերին, արդեն մարդը մարդուն» (ընդգծ. իմն է.—Հ. Ա.): Նա դեռ մանկուց ըմբոստանում է իր աշխատանքի արդյունքը հափշտակող քեռիների դեմ: Ըմբոստութունն աճում է Սասնա դյուցազնի կերպարի հետ, մինչև իր տրամաբանական վախճանին հասնելը, այսինքն՝ չար աշխարհի «դրուկի» դեմ ըմբոստացումն ու պայքարը, ինչպես էպոսում, այնպես էլ ավելի խորացված ձևով՝ Իսահակյանի վիպերգում:

Ֆեոդալական հասարակարգում առկա դասակարգային հակամարտությունները ակներև են Միջնադարյան Հայաստանում, որ յուրովի դրսևորվել են աղանդավորական շարժումների մեջ: Այդ շարժումների ծագումն ու զարգացումը հիմնովին ուսումնասիրած լականավոր բանասեր Ե. Տեր-Մինասյանը գրում է. «...Միսնգամայն բնականոն է նրանց (աղանդավորական շարժումների—Հ. Ա.) աշխուժացումն ամեն անգամ, երբ սրվում են հասարակական հարաբերությունները, շատանում են ճնշումներն ու հարստահարումը ժողովրդի ստորին խավերի նկատմամբ, երբ նույն պատճառներով դժգոհությունն ավելանում է եկեղեցու զանազան կարգերի և սովորությունների, նույնիսկ բուն եկեղեցու դեմ: Այդպիսի

դեպքերում աղանդավորները սովորաբար միանում են այլ ժողովրդական շարժումների, առավելապես գյուղացիական շարժումների և ասպտամբուլյունների հետ և նրանց ուրույն երանգ են տալիս, առանց, սակայն, պատռելու այն կրոնական քողը, որի տակ թաքնված հանդես են գալիս նրանք հաճախ։ Այստեղ կարևոր դեր է կատարում նաև այն հանգամանքը, որ պատմության մեջ եկեղեցին հանդես է գալիս շահագործողների և հարստահարողների հետ կողք-կողքի։ Համենայն դեպս՝ հատկանշականը աղանդների մեջ այն է, որ նրանք հավասարություն և ազատություն են պահանջում կյանքի բոլոր ասպարեզներում...»⁶¹։ Այդ բնույթն են ունեցել Հայաստանում տարածված պավլիկյան և թոնդրակյան սղանդավորական շարժումները։ Ինչպես հայտնի է, դրանցից առաջինը վերջնականապես ճնշվել է IX դ., իսկ երկրորդը՝ XI դարում։ Խե՛ մեկը և թե՛ մյուսը ճնշվել են հոգևոր և աշխարհիկ տերերի կողմից, մի դեպքում արաբների, մյուս դեպքում բյուզանդացիների օգնությամբ։ Գյուղացիական-աշխատավորական այս շարժումները, հիմնականում ուղղված լինելով եկեղեցու և ֆեոդալ դասի շահագործման ու եկեղեցման դեմ, միաժամանակ անողորք պայքար էին ծավալում նաև օտար բռնակալության նկատմամբ։

Իսահակյանը, լավատեղյակ լինելով հայոց պատմությանը և հին գրականությանը, չէր կարող անտեսել այս իրողությունը. նրա ձեռագրերում պահվում են այս ժամանակաշրջանին ու իրադարձություններին վերաբերող գրառումներ։ «Սասմա Մհերի» մշակմանը վերաբերող գրառումներից մեկում կարդում ենք. «Փորձել եմ տալ էպոխայի պատկերը — միջին դարը, ավատականությունը, ճորտատիրությունը, իհարկե, ակնարկներով միայն, նյութական կուլտուրան, զենքեր, գործիքներ, քաղաքներ»։ Ավելին. թոնդրակյան շարժումն այնքան է հետաքրքրել բանաստեղծին, որ նա վի-

⁶¹ Երվանդ Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 5—6։

պէնդուր ստեղծելու շրջանում մտահղացում է ունեցել դրելու «Թոնդրակեցիք» վերնագրով մի երկ⁶²:

Դասակարգային ներհակություններն ու պայքարը միջնադարյան Հայաստանում, բացի էպոսից, առավել ցայտուն իրենց արտացոլումը դտել են ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության, հատկապես առակագրության ու քնարերգության մեջ: Հիշենք Մխիթար Գոշի առակները: «Առակախոս վարդապետը» թագավորական իշխանության կողմնակից լինելով, աշխուժեցնելով, անաշու կերպով է արտացոլել իր ապրած դարաշրջանի սոցիալական հակասությունները: Նույն առումով ուշագրավ են Գոշից ավելի ուշ ապրած Վարդան Այվեկցու (12—13-րդ դդ.) առակները:

Հայ միջնադարյան կյանքի սոցիալական հարաբերությունների, շահագործվող խավերի ապրումների ու տրամագրությունների ցայտուն դրսևորումներն ակնբախ են Ֆրիկի ստեղծագործության մեջ (13-րդ դ.): Նա տեսնում և քննադատում էր ժամանակի դառը իրականությունը, ազգային և սոցիալական ճնշումները՝ մոռցնելով լուծը և ֆեոդալական անարդար կարգերը: Չնայած, ինչպես գտնում է Մանուկ Աբեղյանը, «Նա դասակարգային պայքարի խնդիր չի դնում, բայց որ նա հասարակութունը բաժանում է երկու դասակարգի—անարժան վայելողներ և զրկված արժանավորներ, և որ նա դժգոհում է անարդարության դեմ, գտնելով այդ դրությունը ծուռ, և ցանկանում է, որ հավասարութուն լինի, այդ արդեն ըստ ինքյան դասակարգային պայքար է»⁶³: Ֆրի-

⁶² Այդ մասին տեղեկանում ենք Բ. Արղության—Նրկայնարադուկի՝ 1921 թ. մայիսի 6-ին Իսահակյանին գրած նամակից, որ անտիպ է և պահվում է բանաստեղծի ժառանգների մոտ. «Ինչպիսի լավ դիտավորություն եք ունեցել մեր Թոնդրակեցիների շարժումը նկարագրելու: Մենք մինչև հիմա, զրեթե միշտ, մանավանդ պատմական ուսմաններ, վերցնում ենք վարդանանց շրջանից, ինչպես և դրամաներում, և անտես ենք անում ուրիշ շրջաններ—Կիլիկյան թագավորությունը, խաչակիրների շրջանը, մեր նորագույն պատմությունից կոտորածների ժամանակները—երբ կատարվել են անթիվ հրաշագործություններ, իսկ դուք եկել եք և վերանորոգելու եք Թոնդրակեցվոց շրջանը, նրանց կյանքը և կոիվները»:

⁶³ Մանուկ Աբեղյան, Երկեր, հատ. Դ, Երևան, 1970, էջ 303:

կը ըմբոստանում է ճակատագրի դեմ, անարդար հռչակում այն, քանի որ աշխարհի բոլոր անարդարությունները, նրա կարծիքով, կախված են բախտից, իսկ բախտի տնօրենը, ըստ միջնադարյան հայացքի, աստված է: «Եթե մինչ այդ Ֆրիկը դիտում էր իր և ուրիշների տառապանքը որպես «արդար և իրավ» հատուցում, հիմա ինքն է բռնում արդարագատություն կշեռքը, հաշիվ պահանջում աստծուց նրա ստեղծած աշխարհի և մարդկանց ներհանությունների ու զրկանքների համար,—ասում է Աշոտ Հովհաննիսյանը, անդրադառնալով բանաստեղծի «Ընդդեմ ֆալաքին» և «Գանդատ» քերթվածներին⁶⁴: Եվ ֆրիկյան այդ դանդաղ հարազատ էր Իսահակյանին ու նրա ըմբոստ հերոսին: «Գանդատի» հեղինակը իր դեմոկրատական հայացքներով և աշխարհում տիրող անարդարությունների դեմ բողոքով մոտենում էր «աստծո դրուժքի դեմ» կռվող աստվածամարտ Մհերի կերպարին: Նա նույնպես «տրտնջում, բողոքում է աստծո դեմ, որովհետև զերջին հաշվով աստված է պատճառը, պատասխանատուն աշխարհի այսպիսի վատթար կառուցման համար»⁶⁵:

Բանաստեղծի ծրագրային գրառումներից մեկը բացահայտ վկայությունն է Մհերի բերանով ֆրիկյան գանդատն արտահայտելու նրա մտադրության. «Երբ Մհերը աշխարհափորձից հետո, օրինակի համար, ռեսին սպանելուց հետո, կամ այլուր—ճամփա էր գնում, ճամփին խոսում էր իր մտքի հետ, իր սրտի մեջ, և խոսքն էր ֆրիկյան հակադրությունների նման—

Մեկը այսպես, մյուսը այնպես,
Մեկը կուշտ, մեկելը անոթի՝
էս է եղել աշխարհը...»⁶⁶:

⁶⁴ Աշոտ Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լուսի տակ, Երևան, 1955, էջ 59:

⁶⁵ Ավ. Իսահակյան, Սասմա Մհերի մասին, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 463:

⁶⁶ Նկատի ունի Ֆրիկի «Գանդատը»՝

Մեկն ի պապանց պարոնորդի,

Հավատարիմ մնալով ժամանակաշրջանի ոգուն, պատմությանը և օգտագործելով ինչպես էպոսի, այնպես էլ հին գրականության ընձեռած տվյալները, Իսահակյանն ստեղծել է նոր դրվագներ, որոնք չկան էպոսի պատումներում: Բանաստեղծի այդ «հեռացումները», սակայն, արտահայտում են ժողովրդի բուն իղձերը, տենչերը: Իսահակյանը հեռացել է ավելի մոտենալու համար պատմական ճշմարտությանը, և այդ տեսակետից նրա վիպերգը համարձակորեն կարող ենք անվանել էպոսի վերստեղծում և ոչ՝ մշակում. սա շատ որոշակի երևում է «Սասմա Մհերի» և «Սասունցի Դավթի» 4-րդ ճյուղի տարբերակների համադրումից:

2

Իսահակյանի վիպերգի և ժողովրդական էպոսի առնչակցության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է գտնել այն պատումները, որոնց ծանոթ է եղել և որոնցից օգտվել է բանաստեղծը: Ասում ենք «գտնել», որովհետև, եթե Թումանյանը նշել է իր օգտագործած աղբյուրները⁶⁷, Իսահակյանը շատ քիչ տեղեկություններ է հաղորդել մեզ այս հարցի կապակցությամբ: Օշականի դրախտսականի առթիվ գրած իր անտիպ պատասխանում (այս մասին խոսք կլինի առանձին) բանաստեղծն ասում է. «Առնվազն 11 վարիանտ եմ կարդացել և իմ հատուկենտ ունեցածները, որ լսել եմ շատ տարիներ առաջ Կաղզվանում և Բասեն (Ռուսահայի)»: Իսահակյանի նպատակն է եղել, որքան հնարավոր է, ավելի լայն շառավիղով ուսումնասիրել հայ կյանքը մարմնավորող էպոսը, չըջանցել կարևոր դեպքեր ու փաստեր՝ որքան կարելի է ավելի վերցնելու և ցանկացածը հաղորդել կարենալու համար: «Մհերի» վերջնական մշակման համար պետք է

Մեկն ի հարանց մուրող լինի.

Մեկին հազար ձի ու ջորի,

Մեկին ոչ ու մի, ոչ մաքի և այլն:

⁶⁷ Տե՛ս «Մուրճ», 1903, № 5, ինչպես նաև՝ ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, № 1357:

կարդալ բոլոր վարիանտները նորից,—նշում է նա 20-ական թվականների մի գրառման մեջ:

Մինչև վիպերգի գրելն ու հրատարակելը, տպագրված էին էպոսի մի շարք պատումները⁶⁸, որոնցից բանաստեղծի՝ էպոսի մասին կարգացած գրականության ցանկում նշված են՝ Գ. Սրվանձտյանի «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»⁶⁸ և Ստ. Կանայանի «Ջոջանց տուն»⁷⁰: Նա իր ձեռքի տակ ունեցել է նաև Մ. Աբեղյանի գրի առած տարբերակը⁷¹. «Մ. Աբեղյանի վարիանտը բերել տալ Վիեննայից...»,—կարդում ենք 20-ական թվականներին վերաբերող մի գրառման մեջ: Իսահակյանին անտարակույս ծանոթ են եղել՝ Գ. Հովսեփյանի «Սասունցի Դավիթ» (Թիֆլիս, 1892) և Բ. Խալաթյանի «Սասմա փահլեաններ կամ Թլոր Դավիթ և Մհեր» (Վաղարշապատ, 1899) տարբերակները:

Մեր ունեցած տվյալների համաձայն բանաստեղծը ծանոթ է եղել նաև երկու այլ տարբերակների՝ տպագրված «էմինյան ազգագրական ժողովածու»-ներում⁷²:

Ամենայն հավանականությամբ, Իսահակյանին անծանոթ չէին Ա. Աբեղյանի և Ե. Լալայանի տարբերակները՝ տպագրված «Ազգագրական հանդես»-ում⁷³:

«Սասմա Մհեր» վիպերգի երկրորդ տարբերակը գրելիս՝ 1937 թ., արդեն հրապարակի վրա էր «Սասնա ծռերի» լիակատար հրատարակության առաջին հատորը (1936), որտեղ

⁶⁸ Խոսքը միայն Փոքր Մհերին վերաբերող պատումների մասին է, այսինքն՝ այն պատումների, որոնք կամ ունեն Փոքր Մհերի ճյուղը, կամ այնտեղ Մհերի մասին այս կամ այն չափով հիշատակվում է:

⁶⁹ Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կոստանդնուպոլիս, 1874:

⁷⁰ էպոսի երեք վարիանտ՝ Ջոջանց տուն կամ Սասմա ծռեր, խմբ. Ս. Կանայանի, Վաղարշապատ, 1910:

⁷¹ Դավիթ և Մհեր, Շուշի, 1889:

⁷² «էմինյան ազգագրական ժողովածու», հ. Բ, 1901 (Ս. Հայկունու գրի առածը). «էմինյան ազգագրական ժողովածու», հ. Դ, նույնը՝ «Հայ ժողովրդական վեպեր», 1902 (Հավելված):

⁷³ «Ազգագրական հանդես», գիրք 2, Թիֆլիս, 1900, գիրք VII, VIII, Թիֆլիս, 1901:

տալագրված էին Իսահակյանին հետաքրքրող և նրա համար նոր՝ ևս 6 տարբերակ՝ Մոկացի Հարություն Գիլանյանի, Սենեքերիմ Հակոբյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի պատումները։ Ի դեպ, Հայրապետ Համամճյանի գրի առած «Դավիթ և Մհեր» պատումը⁷⁴ նախապես տալագրվել է «Հայրենիք» ամսագրի 1933 թ. № 3-ում, որին բանաստեղծը ծանոթ է եղել։

Վիպերգի վերջին, անավարտ մշակման ընթացքում, Իսահակյանը, անտարակույս, ուսումնասիրած կլիներ նաև 1944 թ. «Սասնա ծռերի» Բ հատորի առաջին մասում և 1951 թ. նույն հատորի երկրորդ մասում տալագրված ևս 8 պատում⁷⁵։

Հետաքրքրական և ուշադրավ է այն փաստը, որ Իսահակյանին ծանոթ է եղել բանասերներին անհայտ բոլորովին նոր մի տարբերակ ևս, որ նա լսել է Կաղզվանում 1902 թ. և այն գրի շառնելու համար հետադաշում շատ ափսոսացել. «Բասենում լսած «Դավիթ և Մհերի» վարիանտը Կովկաս գնալուս գտնեմ այն մարդին և գրի առնեմ. դա իմ կյանքի մեծ սխալներից մեկն է, որ ծուլացա առիթից օգտվել. այդ վարիանտը սքանչելի էր. Մհերը պիտի ելնի և ռամկուծյունը աշխարհ բերե»⁷⁶։

«Մասսա Մանուկ» վիպասքի ինքնագրերից մեկում բանաստեղծը թողել է ավելի ընդարձակ տեղեկություն այս մասին. «1902 թ. սեպտեմբերին Բասենի գավառի Զուլախլի

⁷⁴ Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, Երևան, 1944, էջ 103։

⁷⁵ ա) Արդեն նշված Հայրապետ Համամճյանի գրի առած տարբերակը։
բ) Կ. Մելիք-Օհանջանյանի «Սասնա տուն» և երկու «Սասունա ծռեր» (1932) պատումները. Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, 1944։

գ) «Դավիթ և Մհեր կամ Սասնա ծռեր» (1903). Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, 1951։

դ) «Սասունա Դավիթ» (1915). Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, 1951։

ե) Խաչատուր Մնացականյանի «Սասնա տուն» պատումը (1926). Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, 1951։

զ) Վարդ Բդոյանի «Սասունա ծռեր» պատումը (1946). Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, 1951։

⁷⁶ Ինչպես վերև նշել ենք, այդ տարբերակի մասին բանաստեղծը ժամանակին հաղորդել է Մ. Աբեղյանին։

գլուղում մի տաճկահայ՝ Մանուկ անունով, Բաղեշցի, կարծեմ, թե մշեցի, պատմեց ինձ հետևյալը Մհերի մասին. «Մի քանի տարի առաջ մի վանքի մտնում է Մհերի քարը (այրը), տեսնում է մի վեմ մարդ (վեմ—մեծ, հսկա, ժայռի պես), որը ասում է՝ ձիուս պարկը բեր, գլուխն անցրու, բայց որովհետև պարկը ծանր է, նա էլ բերում է ձին պարկի մոտ, գրելիս կապում. Մհերն ասում է այս տեսնելով՝ «Ես այն ժամանակ դուրս կգամ հայու աշխարհն ազատելու, երբ աշխարհը սասանա մարդիկ էլ չեն լինի, երբ ցորնի հատը մասուրի չափ կլինի (աշխարհը շեն, առատ) և երբ ժողովուրդը ռամկությունը կհարգե, կպատվե, և ռամկությունը աշխարք կուգա»: Բոլորը բառացի եմ գրել նրա բերնից, մանավանդ վերջին խոսքերը»: Ուրեմն, ցորենի հատը մասուրի չափ տեսնելու ցանկությունը կապվում է գալիք լիառատ կյանքի հետ, որը իրագործելու էր Մհերը: Իսահակյանի ձեռագրերի մեջ պահվում է նրա ինքնագիր տեղեկանքը՝ գրված Թ. Ավդալբեգյանի համար՝ 20.3.1930 թվագրությամբ, «Թ. Ավդալբեգյանի թղթերի միջից» հետագայում կատարված նշումով, ուր նորից հիշատակվում է վերոհիշյալ տարբերակի հետ կապված փաստը. «1902 թվին, սկսվեցին, գտնվում էի Կարսի նահանգի Բասեն գավառում: Արմուտլի (ընդգծ. իմն է.—Հ. Ա.) գլուղում հանդիպեցի մի մշեցի գաղթականի, Փալաբեղ Ուստա Մանուկ անունով⁷⁷, որմնագիր, մոտ 45 տարեկան հասակում: Նա ինձ որոշակի ասաց, որ իր հայրենիքում լսել է Սասմա Մհերի մասին հետևյալը.—«Մհերը դուրս պիտի դա իրեն բռնատեղից, Ագռավու մաղարալից, ու ռամկություն բերե աշխարհ, ռամկի իրավունք»: Բառացի գրի առա նրա խոսքերը: Այդ հուշատետրը, ուր գրված է նրա ասածը, գտնվում է Եվրոպայում մյուս թղթերիս հետ: Դրժբախտաբար նա չէր իմանում ամբողջական վարիանսը»⁷⁸:

⁷⁷ «Ուստա Կարոյին» վերաբերող 20-ական թվականների գրառումներում Իսահակյանը կատարել է հետևյալ նշումը. «Անպայման հիշատակել Փալաբեղ Ուստա Մանուկին, որն ինձ պատմեց Մհերի հրաշալի լեգենդը—ռամկություն բերող Մհերի»:

⁷⁸ «Մհերի» այս տարբերակի մասին պահպանված տվյալներում կա ձրկու մասնակի անհամաձայնություն. Իսահակյանի վերջին գրառման մեջ

Ինչպես արդեն ասել ենք, Իսահակյանը էպոսի մշակմանը ձեռնարկել է՝ ղեկավարվելով գեղագիտական-գաղափարական ուրույն մոտեցումով: Գտնելով, որ էպոսի՝ Մհերին վերաբերող մասը «թերի է և միևնույն ժամանակ խառնափրնթոր, հակասական և անհաշվադատ տարրերով լիքը», նա հավաստում է, որ ռամկի, աշխատավոր ժողովրդի ազատության երազը՝ մարմնացած Մհերի մեջ և կապված աշխարհի մեկ անգամ քանդվելու և շինվելու հետ, կազմում է էպոսի խորին էությունը և մնացել է անաղարտ: Այդ համարելով էականը, Իսահակյանն, ինչպես ինքն է վկայում, իր պոեմի համար ընտրել է էպոսից տարբեր մի նոր կառուցվածք. «Հավատարիմ եմ մնացել բնագրին միայն քարայրում բանտարկվելու դրվագով: Մնացած բոլորը երևակայություն է, մանավանդ արկածները», — խոստովանել է նա «Մհերի» մշակմանը վերաբերող մի գրառման մեջ: Բայց սա, իհարկե, բոլորը չէ: Պատկերը մի փոքր այլ է, երբ վիպերգի դրվագները համեմատում ենք էպոսի համապատասխան դրվագների հետ: Մի քանի դրվագ (և ո՛չ թե մեկը) Իսահակյանը վերցրել է էպոսի տարբեր պատումներից, մերթ նույնություն մեթոդորոշակի փոփոխության ենթարկելով: Կամ՝ միևնույն դրվագի մի մանրամասնը՝ մի սլափումից, մյուսն՝ ուրիշ և այլն, ու այդ ամենը ենթարկելով գեղագիտական-գաղափարական իր նպատակադրմանը:

Վիպերգի հենց սկզբից, շեշտելու համար Մհերի բնածին ուժը, որ ժառանգել էր իր դյուցազն նախնիներից, միևնույն ժամանակ նրա մեջ տեսնելով ճնշումների ու կապանքների դեմ ապագա ըմբոստացողին, Իսահակյանը հմտությամբ օգտագործել է մանուկ դյուցազնին գութանի շղթաներով փաթաթելու հնավանդ սովորությունը՝ Գ. Սրվանձույանի պատումից:

ցույց է տրված Բասենի գավառի Ամմուլի, իսկ նախորդում՝ Չոլալի դյուղը: Արեղյանն իր ուսումնասիրության մեջ Իսահակյանի՝ Կաղզվանում լինելու և նոր տարբերակը լսելու թվականը նշում է 1901 թ., այնինչ բանաստեղծը հիշատակում է 1902 թ.:

Բերեցին, զտըղեն խոնդախ երեցին,
Ու բերեցին զգութնի զընջիլ,
Բընդի տեղ փաթթեցին վըր տըղին:
Տղեն էր՝ եբոր լաց ու ճմլտկաց մեջ ճղորին,
Ըզուր վրավու փաթուկ զընջիլ կտոր-կտոր եղավ:
Ջուղաբ գնաց Դավիթին < . . . >

(Բ հ. Ա մ. էջ 38)

Մշակելով այս հատվածը, Իսահակյանը ցույց է տվել
մանուկ Մհերի ազատասիրությունը.

Ու հնուց ավանդ սուրբ սովորութքով
Ժողվեցան եկան Ջոջանց Տան պետեր,
Մանկան բարուրի բինդերու փոխան
Գութանի շղթան փաթթեցին վրան,
Ու ասին իրար Ազնանց ավագներ.—
«Թե կոտրեց տղան կապանքն երկաթին,
Նա ազատ կուզե ու կրնա ձեռնել,
Նա մեր ցեղեն է՝ առյուծ հոր որդին»:
Մանուկն էր ճըշաց, ճըկեց ձեռն ու ոտ,
Կոտրեց շղթայի ամեն հողն ու զոդ:

Ֆիզիկական մեծ ուժի հետ միասին բնությունը Մհերին
պարզեցել է գեղեցիկ, վայելուչ արտաքին: Այսպիսին է պատ-
կերացնում նրան ժողովուրդը.

Մհեր շատ խորոտ տղա ի.

Տեսակով, քաղցրասերուն, սըպտակակերպ ի:

(Ա. հ., ԺԳ պ., էջ 653)

Մանկուց արդեն նա հասակակիցներից տարբերվում է
իր արտակարգ դուրսագնական հատկություններով.

Ինչ խալխի տղեք տարով կը մեծանին, Մհեր՝ օրով,
Ինչ ամսով, Մհեր՝ սհաթով.

(Ա. հ. Ա պ. էջ 41)

Ժողովրդական էպոսի այս երկառողը հիմք ունենալով,
Իսահակյանը ստեղծել է Սասնա դյուցազնի հմայիչ կերպարը.

Հոր նման պտրթե, աչքերն՝ ական-արե,
Հայացքն՝ արծվենի, ճակատն՝ արքենի,
Մազերը՝ բոց-հուր,
Մեջք ու բազուկներ՝ պողպատիկ ու կուռ:
Յոթ մարդու կերը կուտեր մեկ ժամով,
Ով տարով կաճեր՝ նա կաճեր ժամով:

Վիպերդի դրվագներից մեկում նկարագրվում է, թե ինչպես է Մհերը կանգնեցնում վարարած դեռի ընթացքը՝ փրկելով քաղաքն ավերումից: Սա լավագույն ասպետւյցն է այն բանի, որ Սասնա տան ժառանգը իր ահռելի ուժն ի սպաս է դնում ժողովրդի օգտին, մարդկանց բարօրության համար: Այս դրվագը գրեկիս բանաստեղծը հիմք է ընդունել Գ. Հովսեփյանի «Դավիթ և Մհեր» պատումը.

Մհեր ելավ եկավ Զգիրու քննաք.
Զգիրու քննաք մեկ գիտ կա,
Անուն Զգիրու Շատ
Կ'ըլներ, որ խարիր քնոսուն գիտ,
Իրարու կը խառնվը՛, կ'ըլնը՛ մեկ գիտ:
էդ գիտ իրիք անգամ զեն քննաք ավիրից:
Մհեր էկավ էնդեղ,
Մեկ միծ, ահագին քնր իպի,
Կցից քննաքի քնմակ, դիտու մեչ.
Գիտ էլավ էրկու ճող.
Մեկ ճող էն յանեն կ'իյա, մեկ՝ էն,
էլ քաղաք չի ավիրի:

Նկատենք, որ Իսահակյանը պոեմի առաջին տաբերակում գեոի և քաղաքի սնունը թողել է նույնը՝ Զգիրու Շատ, որն ըստ աղբյուրների՝ Արեւելյան Տիգրիսն է, իսկ Զգիրու

(Ջզիրե) քաղաքը «մի ժամանակ եղել է Մուսուլի սելջուկ Ջանգյանների մի ճյուղի՝ Ջզիրեի աթաբեկության (1180—1250) կենտրոն»⁷⁹։

Այս դրվսդն Իսահակյանի մշակմամբ, վիպերգի առաջին տարբերակում, ստացել է հետևյալ տեսքը.

Մհնր բարկ ու կրակ կտրած՝

Առաջ—առաջ

Ելավ եկավ Ջզիրու հող

Իջավ հասավ Ջզիրու դաշտ.

Ջզիրու դաշտ մի մեծ գետ կտ.

Խոր ու բրուր.

Ու անունն է Ջզիրու Շատ.

Հարուր քառսուն գետ ու գետակ

Կրխանվին իրարու հետ,

Ու կըհլուսեն Ջզիրու գետ:

Տեսավ Մհնր ջուրն է հլել

Վարար-վարար.

Ու կ'ավերե գեղ ու հանդեր,

Արոր ու վար

Շինականին ու ռամիկին:

Մհնր խղճաց, մրմուռ սրտով,

Ելավ զնաց

Մեկ ահագին քերձ ապառաժ

Ժեռ կողերեն սարի պոկեց,

Դղոր-դղոր,

Գլոր-գլոր,

Բերավ ձգեց էն գետի մեջ,

Գետը բաժնեց երկու ճուղի.

Մեկն աջ զնաց ու մեկը՝ ձախ:

Ջուրերն իջան.

Արևերես

Ելան գեղերն ու անդաստան:

⁷⁹ Տե՛ս «Սասնա ծռեր», Բ հատոր, Բ մաս, Մանոթագրություններ, էջ 866:

էսլոսի պատումներում հիանալի է այն դրվագը, երբ Մհերը այցի է գնում ծնողների՝ Դավթի ու Խանդութի գերեզմաններին. կյանքի անիրավություններից դառնացած հերոսը, որը մեկ ձեռքով կարող էր ապառաժների շուռ տալ, այժմ անուժ է զգում իրեն ու մեռակ. վշտաբեկ, մանկան պես լալով նա խորհուրդ է խնդրում ծնողներից. միայն նրանք կարող են ռոգնել՝ ճանապարհ ցույց տալ իրեն:

Մհեր կ'ըլնի, կը թըղնի, լալելեն կը հա, կ'ըսի.
«Ի՞նչըխ ինձի հետը Սասման Զոջ տնեն զրկեցի՞ն»:
Կըհա, վըր ուր խոր գերեզմնին, կը լա.
Խաղ կ'ըսի.

«Խերի՛կ, քո՛ւ անուշ քընուց վիր իլի,
Ընձի հետը Սասման Զոջ տնեն բեբահր են արած»:

.
Մհեր կ'ըլնի, կը հա, վըր ուր մեր՝
Խանդութ խանըմի գերեզմնին, կը լա.
Խաղ կ'ըսի.

«Մարե՛, քո՛ւ անուշ քընուց վիր իլի,
Հետը ընձի Սասման Զոջ տնեն բեբահր արիր են»:
(Ա. հ. ԺԳ պ. էջ 653)

Որդու դստն տրցունքները կենդանացնում են ծնողներին՝

Մհեր թողեց, կնւնց խոր գերեզմնի վերա
Նստավ, լւնց էլավ.
էնքան լաց էլավ, Աստված կանչից.
Դավիթ ձեն տվավ, Մհերին էսաց.
— Ընչի՞ խամար լւնց կ'ըլնիս:

(Ա. հ. Զ պ. էջ 300)

Մհերի քնքուշ հոգու, դրամատիկ ներաշխարհի ապացույցը հանդիսացող ժողովրդական այս դրվագը հարազատորեն վերարտադրված է Իսահակյանի պոեմում.

Մհեր ուժով, ուժով-դոռով
 Հասավ հոր-մեր գերեզմանին,
 Գրկեց հողվարքն, ասավ լալով.
 —Վե՛ր ել, հերիկ,
 Վե՛ր ել, մերիկ,
 Մեկ ճա՛ր արեք
 Ձեր Մհերին:

Գորովագույն ծնողները Մհերին խորհուրդ են տալիս գնալ
 ու փակվել Ագոավու այրում⁸⁰:

Որդի՛, դո՛ւ գնա, դո՛ւ գնա,
 էն ճանբախ, իշ դո՛ւ տը հաս,
 Քնն քաղած է, ավազ մաղած:

Մհերն այրում կմնա ուլնքան ժամանակ, մինչև Քրիս-
 տոսը երկրորդ անգամ գա աշխարհ:

Որ Քրիստոս կնն
 Լուսըղեն աթոռքի վերա նստի,
 Արդար-մեղավոր մե՛-մեկուց ջըկի՛
 էն օր դո՛ւ տո՛ւս կ'լնիս:

(Ա. հ. Զ պ. էջ 300)

Դավթի ու Խանդուկի համոզմամբ, որն արտահայտում
 է ժողովրդական մտայնությունը, արդար է Մհերը և, ի վերջո,
 նրան ազատություն է սպասում: Նրա այրից դուրս գալը
 Քրիստոսի երկրորդ անգամ աշխարհ գալու հետ կապելը,

⁸⁰ Պատումներից մի քանիսում Ագոավու այրը Հալաբա քաղաքում է,
 ուրիշներում՝ Վանում: Տոսպան բլրի ակնարկին, որը «Վան քաղաքի այ-
 գեստանից դեպի հյուսիս ձգվող փոքրիկ լեռնագոտին է» (տե՛ս «Սասնա
 ծռեր», Բ հատոր, Բ մաս, Ծանոթագրություններ, էջ 874), հանդիպում ենք
 միայն Գ. Սրվանձոյանի գրի առած պատումում՝ «Ու ինք ղնաց Տոսպան
 բլուր», (Բ հատոր, Ա մաս, էջ 43): Վերջինս էլ օգտագործել է բանաստեղ-
 ծը:

հակառակ դրա կրոնական կեղևին, վերջիվերջո՝ ժողովրդի փայփայած արդարության հաղթանակի հույսն է: Իսահակյանը իր վիպերգում մի կողմ թողնելով այս կրոնական պատկերը, արդարության հաղթանակի հավատը կապում է Մհերի հետ, որը, ինչպես վկայում են պոեմի համապատասխան տողերը, ո՛չ զղջում է, ո՛չ լալիս: Հարազատ մնալով ժողովրդական էպոսին, բանաստեղծը նրա պատումներից կազմում է մի այսպիսի համագրում՝

Ու հերն ու մեր գերեզմանեն
Հացին, ասին.
— Գնա՛, որդի, Տոսպան բլուր,
Ագռավու այր,
Ու քար քաղե, ավաղ մաղե,
Հա՛ց ու զղջա,
Որ Քրիստոս քեզի խղճա,
Թողություն տա:

Իր վիպերգի հերոսի ողբերգությունն ավելի ընդգծելու և պատճառաբանելու նպատակով Իսահակյանն էպոսից նույնությամբ վերցրել է նաև Մհերի ոտքերի տակ գետնի թուլացման և Ագռավի այրում նրա բանտարկման դրվագը: Ս. Հայկունու դրի առած «Դավիթ և Մհեր» պատումում այդ դրվագն այսպես է՝

Կ'ըլնի, կը խեծնի Քոնոկիկ Ջալալին, կը հա.
Գետին հեռջև Քոնոկիկ Ջալալու ոտաց կը թնդա:
Մհեր կ'ըսի. «Հա՛ց-հո՛, բո՛շ ի.
Գետինն էլ խալիվորցեր ի,
էմ ձիու ոտաց տակ չդիմանա»:
Ասածու խրամանքով՝ Մհեր կը հա,
Կը խասնի Ակրփու քանր:
Քանր կը բացվի, Մհեր, ուր ձիով կը մտնե մըշ քանրին.
Քանր կը գա հիրար:

(Ա. հ. ԺԳ պ. էջ 653)

էպոսի փաստերը զուգակցելով իր բանաստեղծական վառ երևակայությանը, Իսահակյանն այդ հատվածը վերստեղծել է այսպես՝

Երկիրն էլ շէր ուզի առանի
Մհերին,
Արեգակն էլ՝ աչքի նման
Մեռելին
Պաղ կընայեր ու լույս շէր տա
Մհերին:
Ձիու ոտքը ծունկերն ի վեր
Հողերու մեջ կը մխրճվեր.
Ուժով-զոռով գնաց Մհեր,
Եկավ, հասավ վանա ծովուն:
Ազոավու Քար բացվեց մեկեն,
Առավ-կալավ մեջ իր ծոցին
Մհերն ու ձին:
Ազոավու Քար գոցվեց նորեն
Նըրա վըրեն:

Եվ, ասես, մարդկային վիշտն ուսերին ծանրացած՝ Մհերը մտնում է անձավ ու մնում այնտեղ. «Ու յարի մկա լե կ'ասեն՝ էն տեղն է»⁸¹, կամ՝ «Չանք հիմի էլ կայնուկ ա»⁸², — հավատացած է ժողովուրդը, որին հարազատ է մնացել բանաստեղծը՝

Մեջ անձավին անմահ,
Կա ու կապրի Յասման Մհեր:

Հետաքրքրական է, որ Իսահակյանն աշխատելով ավելի ամբողջական ու արտահայտիչ դարձնել պատկերը, Եր. Լալայանի պատումից⁸³ վերցնում է հետևյալ մանրամասները.

⁸¹ Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, էջ 43:

⁸² Նույն տեղը, Բ մաս, էջ 172:

⁸³ Նույն տեղը:

Ֆիրան ուտվածքն օրական յիրեք նշխարք ա,
Երկու կուշտը մեկ մեկ մոմ վառուկ ա՝ դիշեր, ցերեկ:

.

Զիան յոնջեն Բառեջն ա,
Ամառ-ձմեռ կանանչ ա:

Սրան համապատասխանում է պոեմի հետևյալ հատ-
վածք.

Գլխու վերև-ներսեմ ճրագ՝
Գիշեր-ցերեկ հավիտյան վառ.
Խմած ջուրը՝ մեկ ըսկահակ.
Հացը օրեն՝ հրեք նշխար:
Մեկ խուրձ առվույտ ձիու առաջ
Ամառ-ձմեռ դալար-կանաչ:

Մի շարք դրվագներ վերցնելով էպոսից, Իսահակյանը փոփոխություն է ենթարկել և բոլոր դեպքերում ժողովրդական ու հեղինակային մտածողության ինքնատիպ մի համադրմամբ ստացվել է նոր որակ: Վիպերգի առաջին դրվագում պատմը-
վում է Մհերի ծնունդի մասին, որ տեղի է ունենում այն ժա-
մանակ, երբ Դավիթը պատերազմում էր Մսրա Մելիքի դեմ:

Ելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա
Կրոխի խոյացավ ի Մսրա վրա:
Ու նրա ետևուց հանդուժ մեծ Տիկին
Լիր-լրումն առավ,
Լույս աշխարհ բերավ
Մեկ արու զավակ՝ տեր ու ժառանգին
Ջոջանց աթոռքին, Սասմա աշխարքին:

Նկատենք, որ ժողովրդական պատումներում Մհերը ծըն-
վում է կամ Դավիթի ներկայությամբ՝ Սասունում (մի այլ տար-
բերակով՝ Կաղզվանում), և կամ թե այն ժամանակ, երբ
հանդուժը լինում է հայրական տանը՝ Կաղզվանում, իսկ

Դավիթը՝ Սասունում: Մի քանի պատումներում Դավիթը գնում է Գյուրջստան կամ Ադրբեջան՝ պատվերներ թողնելով ծընվելիք երեխայի վերաբերյալ և միայն Ս. Հայկունու տարբերակում է⁸⁴, որ Մհերը ծնվում է այն ժամանակ, երբ հայրը գնացել էր կովկաս, բայց ո՛չ թե Մելիքի, այլ Բապը Ֆրենկի դեմ:

Էլ Դավիթ չկանգնավ.
Ըլավ, հո՛ւր հո՛ղ էրաց, կռիվը շուրիք խագավ,
Ձին քեշից դո՛ւս, զին դրից վերա, խիծավ.
էսաց.— Խանդո՛ւթ խաթոնն, մնացի բարո՞վ:
Չըլնիմ, չիմանամ իմ հիտիվ գա՛ս.
Դո՛ւ իմ հիտիվ գա՛ս, իմ կնիկ չիս.
Աստված ողորմած ի, մի՛ վախենա:

Դավիթ ձին քշից, տ'երթեր.
Ապա Դավիթ գըտի՛ր՝
Խանդո՛ւթ խաթունին տղա տ'ըլնը.
էսաց.— Խանդո՛ւթ խաթոնն
Վուր ըձը՛ տղա ըլավ,
Անուն դնիս Մհեր.
Իմ պապկե անուն գետը՛ն չմնա:

Միանգամայն պարզ է, որ Իսահակյանը Բապը Ֆրենկին փոխարինելով Մսրա Մելիքով, ձգտել է հարադատ մնալ էպոսին, քանի որ Հայաստանի հիմնական թշնամին էր Մսրը՝ արաբական խալիֆաթը:

Ինչպես ժողովրդական բնագրում, այնպես էլ Իսահակյանի վիպերգում Դավիթը զավակին կնքել է տալիս իր հոր անվամբ՝ Մհեր, միայն այն տարբերությունով, որ բանաստեղծի մոտ այդ մասին նա պատգամն ուղարկում է Խանդութին ռազմի դաշտից:

⁸⁴ Սասնա ծռեր, Ա հատոր, Երևան, 1936, էջ 383:

Իմ ական-արեգակ հորըս անունով
Իմ կորյուն որդուս
Կանչեցեք Մհեր.
Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր:

Էպոսի մի քանի տարբերակներում նորածին Մհերի փակ
սփի մեջ նկատում են արյան կաթիլ, որն, ըստ Մ. Աբեղյանի,
«Մհերի շար և ավերիչ բնության արտահայտությունն է...»⁸⁵:

Ըստ երևութին, նույն կերպ ընկալելով այդ փաստը,
Իսահակյանն այն չի օգտագործել, նպատակ ունենալով իր
հերոսին զերծ պահել դիվական ու շար հատկանիշներից: Նույն
նկատառումով նա չի անդրադարձել նաև Դավթի մահվան
մանրամասներին: Էպոսի համարյա բոլոր պատումներում
Դավթին սպանվում է Չմշկիկ Սուլթանի (որին խոստացել էր
ամուսնանալ և երդմնադանց եղել) կամ նրա հետ ապօրինի
կենակցությունից ծնված աղջկա ձեռքով: Հակառակ դրան,
բանաստեղծն օգտագործում է Դավթի և Խանդութի մեծ սիրո
վկայությունը հանդիսացող հետևյալ տողերը:

...Ջուհաբ տարան Խանդութ խաթունին.

«Դավթի սպանիցի՞ն»:

Խանդութ խաթուն էլ Դավթի կսկծուն մեռավ:

(Ա. հ. Բ. պ. էջ 102)

Սիրեցյալ ամուսնու մահվանից հետո կնոջ համար կյան-
քըն այլևս դառնում է ավելորդ.

Ու շար օրն հասավ՝

Մահացավ Դավթ՝ դյուցազրն-առյուծ,

Մահացավ Խանդութ սրտի կսկծուց.

Մնաց որբ-մանուկ, անհեր ու անմեր

Իրենց մեկ հատիկ դավակը՝ Մհեր:

⁸⁵ Տե՛ս Մ. Աբեղյան, Աղշալին վեպ, «Մուրճ», 1890, № 2, էջ 228:

Ծնողներից զրկված Մհերի համար սկսվում է մի դառնալի կյանք, որը, մի կողմից տառապանք պատճառելով նրան, մյուս կողմից իմաստնացնում է: Մի քանի պատումներում որբուկին իր խնամքի տակ է վերցնում նրա անժառանգ հորեղբայրը՝ Ջենով Հովանը:

Իսահակյանը վերջինիս փոխարինել է Դավթի մեկ ուրիշ եղբորով՝ Ճնճղափորիկով, որն էպոսում երկրորդական անձնավորություն է (Ճնճղափորիկ)⁸⁶: Այդ փոփոխության մասին Իսահակյանը հատուկ է մտածել, ինչպես վկայում է նրա մի գրառումը. «Ջենով Սարգիս, որ Ջենով Հովանի եղբայրն է: Հավ կլինի, որ «Մհերի» մեջ նա փոխարինե Հովանին, քանի որ սա մեռած կլիներ մինչ այդ»: Հետո, ըստ երևույթին, Հովանին (ինչպես և Սարգսին) համարելով դրական կերպարներ, չի ցանկացել նրանց վերադրել այնպիսի գծեր, որոնցով օժտել է Ճնճղափորիկին: Հետաքրքրական է էպոսի ծանոթագրություններում այս և նման (Վժիկ Մխո, Բռնած Կուռիկ և այլն) անունների առթիվ տրված մեկնաբանությունը. «Եթե Սասնա ծողովրդի թշնամիների ահավորությունը ցույց տալու համար վիպաշեն ասացողը քաղում է վիպաշխարհից դաժանություն արտահայտող զանազան մակդիրներ կամ մեջ է բերում առասպելական հրեշներ, ապա «Սասնա ծռերի» գլխավոր հերոսների շրջապատը, «զինակից» ազգակիցներին ներկայացնելիս՝ նա բարեհոգի հումորով ծաղրում է նրանց արտաքին ու ներքին հատկանիշները՝ նշելով նրանցից յուրաքանչյուրի մեջ մի որևէ հիմնական դիժ, որ բնորոշ է նրա բնավորության և վարքագծի համար: Այս եղանակով վիպասանը նորից ցայտուն ընդգծում է գլխավոր հերոսի քաջությունը, խիզախությունը, անպարտելի լինելը... Ջոջ Մհերի ու Դավթի այդ «զինակից» ազգականների անունները նրանց ֆիզիկական և հոգեկան հատկությունների արտահայտիչ իլ-

⁸⁶ Տե՛ս Գ. Սրվանձտյանի և Եր. Լալայանի գրի առած պատումները՝ «Սասնա ծռեր», Բ հատոր, Ա մաս, էջ 40 և Բ հատոր, Բ մաս, էջ 494: Վիպերգի ստեղծման առաջին շրջանի ձեռագրերում այն Ճնճղափորիկ է, իսկ հետո՝ բանաստեղծի ձեռքով դարձել է՝ Ճնճղափորիկ:

յուստրացիաներ են...»⁸⁷։ Գուցե նման ձևով է մտածել նաև Իսահակյանը՝ փոքրոգի ու անսիրտ ազգականի դերը վերապահելով Ճնճղափոքրիկին.

Ու Դավթի եղբայր, Ճնճղափոքրիկ,
Ելավ, տիրացավ Սասման անառիկ,
Տեր դարձավ Դավթի գանձին ու կայքին,
Որ պահե, շահե Սասմա ժառանգին։

Մհերի հետագա գործողությունները Իսահակյանը կապում է նրան՝ հարազատ տանից ու տեղից վտարելու հետ։ Հայտնի է, որ էպոսի միայն մեկ պատումում Մհերին տանից դուրս է անում Ձենով Հովանը (Ա. հատոր, Ա. պատում, էջ 45)։ Մյուսներում Մհերն արտաքսվում է տանից հորեղբոր կանանց, իսկ մեկում՝ քեռու կնոջ զրպարտությանը։

Իսահակյանն այս փաստին տալիս է այլ գունավորում։ Հորեղբայրն ու կինը խորթ աչքով են նայում Մհերին և ուղարկում հոտաղության, մինչդեռ նրանց որդին՝ Փոքրիկ Ճնճղիկը⁸⁸, «գիր էր սովորում» Մարութա վանքում։ Նրանք, տեսնելով Մհերի ահռելի ուժն ու զորությունը և մեծ վտանգ նախազգալով նրանից, աշխատում են որևէ կերպ հեռացնել տանից.

Ու խորհուրդ արին,
Որ մեկ պատճառով, հնար-հնճարով,
Վանեն Մհերին
Տնեն ու տեղեն,
Դավով ու խաբով, մեկ անդարձ ճամփով,
Վտարեն իսպառ Սասունա հողեն,
Որ իրենց որդին՝ Փոքրիկ-Ճնճղիկ,
Որ գիր կը սորվեր Մարութա սուրբ վանք,
Դարձնեն տեր-ժառանգ
Աղնանց աթոռքին,
Իշխան տիրական Սասմանց աշխարհքին։

⁸⁷ Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, Ծանոթագրություններ, էջ 856։

⁸⁸ Գ. Հովսեփյանի «Սասմա ծռեր» պատումում (Բ հատ. Ա մաս, էջ 61) Փոքրիկ Ճնճղիկը հիշատակվում է որպես Մհերի հորեղբայր։

Եվ տղային ուղարկում են Ջոջ Վերգոյի հետ Կապուտկոդ՝ պապի մոտ: էպոսից վերցնելով Մհերի՝ Կապուտկոդում լինելու փաստը⁸⁹, Իսահակյանն այս հիմքի վրա տալիս է նախորդ դրվագի տրամաբանական շարունակությունը: Նա այստեղ, որոշ փոփոխությամբ, օգտագործում է էպոսից վերցված մեկ այլ փաստ ևս. դա վերաբերում է Մհերի և քեռիների փոխհարաբերությանը: Բոլոր պատումներում Մհերը քեռիների հետ գնում է որսի՝ Կապուտկոդում կամ Սասունում՝ նրանց հյուր եկած ժամանակ: Եվ չնայած հասակների տարբերությանը, մրցում է նրանց հետ իր ուժով և ճարակությունով:

Այս դրվագում, հավատարիմ մնալով էպոսին, բանաստեղծը, սակայն, դիտավորյալ շրջանցել է մի կարևոր փաստ. դա քեռիների կողմից Մհերի շահագործումն է, երբ նրանք որսի ժամանակ խաբում են իրենց քրոջորդուն և վերցնում նրա բաժին որսը: Տեսնելով այդ, Մհերը զայրանում է և ձեռք բարձրացնում քեռիների վրա, սպանում նրանց: Այսպես է ժողովրդական սկզբնաղբյուրում: Իսահակյանն այդ դրվագը բաց է թողել, հավանորեն, հետևյալ նկատառումներով. ինչպես այլուր, այստեղ ևս նա ձգտել է իր սիրած հերոսին ղերծ պահել բացասական գծերից (քեռիներին սպանելը). նույն նկատառումն է ունեցել նաև քեռիների նկատմամբ. չէ՞ որ քեռի Թորոսը քաջ է և բարի. նա Դավթին օգնության է հասնում Մսրա գործի դեմ կռվելիս: Նա է Մհերին հայտնում իր ժառանգական իրավունքների մասին⁹⁰:

Մհերին դարձնելով իր մտքերին ու խորհրդածություններին հաղորդակից, Իսահակյանը նրան շրջել է տալիս երկրե-

⁸⁹ Համարյա բոլոր պատումներում ծնողներն են Մհերին թողնում Կապուտկոդում: Մեկում էլ, ինքն է գնում՝ Դավթի հետ մենամարտելուց հետո, ապա լսելով հոր մահը՝ վերադառնում (Ա հատոր, 2 պատում, էջ 296):

⁹⁰ Միայն Եր. Լալայանի գրի առած պատումում (Բ հատոր, Բ մաս, ԺԱ պատում, էջ 169) Մհերը ցանկանալով լուծել հոր մահվան վրեժը՝ խորհուրդ է հարցնում Քեռի Թորոսից և սա հայտնում է Դավթի զենք ու զրահի, Բուռիկ Զալալի մասին՝ պահված Մարութենի Մայրամ Ասովածած-

երկիր, քաղաքից-քաղաք, ուր հերոսն օր ավուր ավելի խորն է ճանաչում ամենուրեք տիրող անարդարությունն ու անիրավությունը և հանդում աշխարհի վերափոխման գաղափարին: Բանաստեղծը շնորհիվ ստեղծագործական իր հարուստ երևակայության, երբեմն հենվելով էպոսի մասնավոր մի փաստի վրա, ստեղծել է նոր, վառ ու արտահայտիչ պատկերներ: Հիշենք պատումներից մեկում⁹¹ Մհերի հանդիպումը գութանավորների հետ, որոնցից նա հաց է խնդրում, ապա օգնում՝ հողը վարելու: Թերևս այս փաստն է հիմք դարձել ստեղծելու այն դրվագը, ուր Մհերը միանում է «եղունգներով ու ագուռներով» արար մաքրող ճորտերին.

Մեջքակոտոր ու քրտնաթոր
Դատեց, բանավ մինչև իրկուն:
Եղավ իրկուն,
Ճորտերու հետ դառ ու դադրած
Մտավ մեկ հյուղ՝ գեջ ու խավար,
Իրար վրա եղան ծվար:
Մեկ աստուծ հաց տըվին՝ ուտի,
Մեկ չոր խշտի՝ պառկի, քընի:

Մեկ այլ պատումում⁹² Մհերն իր քառասուն ընկերներով գնում է ավերված Հալաբա քաղաքը և գոյությունը պաշտպանելու համար դառնում հացթուխ.

Մհեր էնդեղ խմոր էրավ.
Տաս ջիվալ ալըր էրավ խմոր:
Մեկն էլ կինաց մերին,
Տաս արաբա ցախ շլկից, առից, իբի:

նում, որոնց միջոցով միայն Մհերը կհասնի իր նպատակին: Խորհուրդ է տալիս մատաղ անեկ՝ դրանց տիրանալու համար: Մհերն այդպիսի էլ վարվում է:

⁹¹ Սասնա ծռեր, Ա. հատոր, ԺԳ պատում, էջ 653:

⁹² Սասնա ծռեր, Ա. հատոր, Ե պատում, էջ 233:

Մեկն էլ կինաց, տաս բախ ջո՛ւր կապից առուն վե,
եկավ:

Մհեր փուռ վառից, խաց թխից,
խաց թխիցին, պրծան,
Զտո՛ւռ շինիցին, տռան նստան:

էպոսի այս հատվածի հիման վրա Իսահակյանը ստեղծել է Մհերի՝ փոնապանի մոտ որպես մշակ վարձվելու դրվագը, արդեն շահագործողի և շահագործվողի շեշտված հարաբերություններ:

Մհեր օր բոլոր ջուր, փալա կը կըրեր
Ու գիշերն անքուն՝ ալուր կըմաղեր,
Խմոր կը շաղվեր, խմոր կը գնդեր.
Գլուխը բարձին՝ աչքը չըկպած՝
Կը կանգներ ոտաց:
Իր բաժին հացը չէր բավե իրեն,
Հաց կառներ կուտեր ձեռք ընկած տեղեն:

Իսահակյանի ստեղծագործական անհատականության մի իմաստուն օրինակ է Մհերի անեծքի դրվագը: Ըստ բոլոր պատումների, Դավիթը որդուն անիծում է՝ կամ ափի արյունը չարագուշակ համարելով, կամ մարդկանց հետ նրա «չարաճրճի» կատակների, կամ քեռիների սպանելու, և կամ էլ, վերջապես, իր հետ կռվելու համար:

Իսահակյանի վիպերգում Մհերին անիծողը Դավիթը չէ, այլ բովանդակ Սասունը, ո՛չ միայն՝ «Իշխան, ջոջեր, ժամերեցներ», այլև՝ «Մեր ու մանուկ, աղքատ, հարուստ». չարիքներով ծանրաբեռնված աշխարհն է նվճվում Մհերին, դիտելով նրան չար և չգիտակցելով նրա բարի ու ճշմարիտ գործը: Որոշ իմաստով, սա նաև հեթանոս Միհրին դատապարտող քրիստոնեական մտածողությունն է.

— Անիծվես դո՛ւ,
Զարը՛դ Մհեր,

Դո՛ւ ներհակ նեռ,
Դո՛ւ, Դե ցառման,
Դո՛ւ, որ կուզես՝ աշխարհ քանդես,
Ծարավ մընաս ու անոթի,
Անճեռ մընաս ու անորդի:
Մահ ուղենաս, չգտնես մահ,
Մինչ Քրիստոս դատաստան գա՝
Քո դատ կտրես:

Ու անեծքը հասավ բռնեց
Մհերին.
Գետինն էլ չէր կարող տանի
Մհերին:

Նզովված դուցազնին ոչինչ չէր մնում անելու, քան
հաշտվել իր դառը ճակատագրի հետ:

Էպոսում Մհերը փակվում է այրում՝ սպասելով վերջին
դատաստանին.

Համբարձման գիշեր Մհերի էրի դուռ կը բացվի,
Ու հրամանք չկա, որ էլնա:
Գետին զինք չվերու.
Ոտքեր ի գետին կը ճըկի.

(Բ հ. Ա. պ. էջ 43)

Վիպերգում Իսահակյանն այս դրվագը վերափոխել է.
աշխարհը վախենում է Մհերի ազատվելուց, քանի որ նա կա-
րող է ամեն ինչ տակն ու վրա անել:

Ամեն տարի օրն Համբարձման,
Երբ իրարու համբույր կուտան
Երկինք-երկիր, թե հուր ու ջուր,
Ամեն տարի օրն Համբարձման,
Երբ կը բացվի ամեն փակ դուռ,
Կը վախենան գեղ ու քաղաք,

Թե կը բացվի Ազոավու Քար,
Կենի Մհեր արև-աշխարհ:
Գեղ-գեղովի, քաղաք-քաղքով,
Արտասուքով
Կը պաղատեն Քրիստոսին՝
Չար Մհերին կապե-բանդե,
Որ դուրս չըգա՝ աշխարհ քանդե:

Այստեղ ևս, ինչպես նախորդ դրվագում, արտահայտված է ո՛չ միայն Մհերի, որպես հեթանոսության արև-աստծու բացասումը քրիստոնեության կողմից, այլև ուսմանության պատգամախոս հերոսի ողբերգությունը՝ իր իսկ պաշտպան-յալների կողմից չըմբռնվելը, որ արդեն Իսահակյանի ընդհան-րացումն է: Պոեմի առաջին տարբերակը վերջանում է Մհերի աննինջ սպասումով ուսման կանչին: Ամեն համբարձման գի-շեր բացվում են դռները և քարայր է մտնում մի հովիվ, որին դուրսազնը հարցնում է, թե արդյոք «Աշխարհքն է՞ն է. ինչ-պես որ էր»:

—Նորե՞ն ուսման դռն կըդատի,
Աշխարհ կուտե,
Ու կը մնա ինքն անոթի՞...

Հովվի դրական պատասխանը ստանալով, Մհերը զայ-րացած բացականչում է՝ «Դե դարձ զնա քո չար աշխարհ...»: Իսկ հովվի հարցումին, թե ե՞րբ դուրս կգա, հետևում է պա-տասխանը.

—Երբ շեղբն հասնի
Ոսկորին
Ռամիկ կանչե
Մհերին:

Համաձայն ժողովրդական մի քանի պատումների, Մհե-րին ալցի են զնում հարս կամ աղջիկ, նախորդ կամ հովիվ:

Իսահակյանի վիպերգը համադրելով այդ պատումների հետ, եզրակացնում ենք, որ բանաստեղծը հիմք է ընդունել Գ. Սըրվանձտյանի⁹³ և Բ. Խալաթյանցի⁹⁴ տարբերակները, քանի որ Սըվանձտյանի մոտ է միայն (խոսքը վերաբերում է վիպերգի առաջին տարբերակը գրելիս բանաստեղծի ձեռքի տակ եղած պատումներին), որ նախորդը Համբարձման մի գիշեր մըտնելով ալրից ներս և տեսնելով Մհերին, ղրուցում է հետը.

—Մհե՛ր, դու յեր տ'ելնեա ըդ տեղեն:

էն լե՛ ասաց.

—Յերոր ցորեն եղավ քընց ալուճ,

Ու դարին եղավ քընց մասուր մի,

Հըպտ մ'լի հրամանք կա, որ ելնանք իդա տեղեն:

Բ. Խալաթյանցի տարբերակում հովվի փոխարեն մի աղջիկ է պատահաբար ներս մտնում ու խոսում Մհերի հետ, և վերջինս նրա պատասխանից եզրակացնում է.

—Աշխարք չար ի դհա,

Իս մըչ աշխրքի չըմ ապրի:

Ըստ մեկ այլ պատումի, Մհերը դուրս կգա՝

Եբոր ցորնի հատն եղավ մեկ մանսուր,

Գետին կը խալիմնա.

Մհեր ու ուր ձին կը դան աշխար.

Նոր Մհեր կուտուրում կ'ենի,

Վերջ կը մարտիրոսվի⁹⁵:

⁹³ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, «Սասնա ծռեր», Բ հատոր, Ա մաս, էջ 44:

⁹⁴ Սասնա փահլիվաններ կամ Թըլոր Դավիթ և Մհեր, «Սասնա ծռեր», Ա հատոր, էջ 118:

⁹⁵ Գ. Հովսեփյան, «Սասնա ծռեր», «Սասնա ծռեր», Բ հատոր, Ա մաս, էջ 102:

ԱՌ. ԻՍԸՀԱԿԵԸՆ

Ս Ա Ս Մ Ա Յ Մ Յ Ե Ր

ՎԻՊԵՐԳ

ՎԻԵՆՆԱ

Մ Ի Ի Բ Ը Դ Ե Ը Ն Ց Գ Ը Դ Ը Ն

1922

էպոսի դրի առնված և հրապարակված տարբերակներից ոչ մեկում չկա Մհերի դուրս գալու կապը ռամկուծթյուն բերելու հետ: Սակայն չար աշխարհի ակնարկն արդեն ինքնին ենթադրել է տալիս, որ Մհերը դուրս է գալու աշխարհում ամեն տեսակի չարիքի վերացումից հետո և, ինչպես գրում է Իսահակյանն իր նամակներից մեկում⁹⁶, «ժողովուրդը սպասում է, որ Մհերը դուրս գա և նահատակվի»: Բանաստեղծն այստեղ լիովին հիմնվում է Բասենում լսած իր տարբերակի վրա: Մհերն անպայման դուրս է գալու աշխարհն ազատելու, սակայն այն ժամանակ, երբ «սատանա մարդիկ էլ չեն լինի», երբ աշխարհը կլինի շեն ու առատ, և «ժողովուրդը ռամկուծթյունը կհարգե, կպատվե, և ռամկուծթյունը աշխարք կուգա»:

Իսահակյանը Մհերին համարում է մարգարե և «մեծ գաղափարների քարոզող և կենսագործող: Նա պետք է «Յեւնի, էլման աշխարք ավիրա»⁹⁷, իսկ դրանից հետո վերստին շինելու է այն և իրականացնելու ռամկի իշխանությունը: Եվ ռամկի հաղթանակի մեջ էլ բանաստեղծը տեսնում է «հայ ժողովրդի հարուծյունը»:

Իսահակյանը երբեմն Մհերին է վերագրել նաև Դավթի կյանքի հետ կապված առանձին դեպքեր ու ավանդուծյուններ, որոնք չկան էպոսում: Այսպես, վիպերգի երկրորդ հրատարակության մեջ կա մի այսպիսի դրվագ՝

Գոռուն-գոչունով Անդոկա բաշեն
Մեկ հեղ մեկ վեմ-քար
Փլել ու կուգար
Ջոջանց ոշխարի փարախի վրեն:
Մհերն էր. վազեց, թիկունքը հզոր
Քարին դեմ տվավ, քարը կանգ առավ,
Ու մինչև էսօր
Կըմնա կանգուն՝ փարախի գլխուն:

⁹⁶ 1922 թ. օգոստոսի 12-ին Վ. Ահարոնյանին գրած նամակը:

⁹⁷ Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, էջ 246:

Նման մի փաստի հանդիպում ենք Հայրապետ Համամ-
ճյանի կողմից գրի առնված պատումում, որն առաջին ան-
գամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրի 1933 թ. № 3-ում⁹⁸,
հետևաբար, բանաստեղծին չէր կրառղ ծանոթ լինել պոեմի
առաջին տարբերակը գրելիս: Հարկ ենք համարում այն մեջ
բերել. «Սասունցի Դավիթ հովիվ հղած ժամանակ՝ Սև սա-
րեն (Սեղնասար) ոչխարները վար կ'իջեցնե լեռան ստորոտը
— Մշո դաշտ:

Ճաշկիթին, երբ ոչխարները համախմբված էին և
կանայք կթելով զբաղված լեռան կողերեն հսկա ժայռ մը կը
փրթի և վար կը գլորվի դեպի ոչխարներն ու այնտեղ հա-
վաքված ժողովուրդը:

Դավիթ տեսնելով՝ որ ժայռը պիտի գա և ճզմե թե՛ ժո-
ղովուրդը և թե՛ ոչխարները, արագ շարժումով մը կը ցատ-
կե ժայռին առջև և իր աջ ձեռքն անոր դեմ կու տա: Ժայռը
տեղն ու տեղը կը կենա, իսկ Դավթի ձեռքը կը դրոշմվի ժայ-
ռին վրա:

Այդ ժայռը մինչև հիմա կմնա և կկոշվի «Դավթի քար»:

Այս միջադեպը պատումին ավելացվել է խմբագրի կող-
մից՝ առաջին տպագրության ժամանակ և ամբողջությամբ
բերվել նաև հրկրորդում, որի մասին իմանում ենք տողա-
տակի ծանոթությունից. ««Դավիթի և Մհերի» այս հրատա-
րակությունն օգտվելով, Սասունցի Դավիթի հովվական
կյանքեն դրվագ մը կ'ավելացնեմ հոս, որպես հավելված:
Այդ դրվագը ինձի պատմած են Մշո դաշտի հաս գյուղացի-
ները, ինչ որ ստուգած եմ ուրիշ գյուղացիներն ալ...»:

Հետաքրքրական է, որ Իսահակյանի արխիվում, «Ուստա
Կարո» վեպի ինքնագրերի մեջ կա այդ ավանդության դրա-
ռումը. «Ավանդաբար ասում են, որ Սասունում մի մեծ ժայռ
կա, որի վրա դրոշմված է Դավթի ձեռքը: Մի անգամ այդ
մեծ ժայռը սարից պոկված գլորվում է ներքև, ուր ոչխար-
ների հոտն է հովիվներով, այն վայրկյանին՝ որ ժայռը պիտի
ջախջախե նրանց, Դավիթը վրա է հասնում և ձեռքը մեկնե-

⁹⁸ Սասնա ծոեր, Բ հատոր, Ա մաս, էջ 129:

լով ժայռը կանգնեցնում իր թափի մեջ: Ձեռքի դրոշմը մնում է ժայռի վրա քանդակված, մինչև այսօր...

Հոտն ու հովիվները ազատվում են»:

«Սասմա Մհեր» վիպերգում կան մեկ-երկու մանրամասներ ևս, որոնք հիշեցնում են Դավթի հետ կատարված դեպքերը: Այսպես օրինակ՝ նախորդ Դավթի գանգատը ոտնամանները մաշվելու մասին, որ շատ նման է Մհերի բողոքին՝

Իրկուն տուն դարձին՝ ասավ հորեղբոր.

—Սասմա ժեռ քարեր շեղբերու նըման

Տըրեխներն ոտիս՝ մաշեցին, կերան:

էպոսում Դավթին հոր ունեցվածքի մասին հայտնում է կորեկի արտատեր պառավը: Վիպերգի առաջին տարբերակում Մհերն այդ մասին տեղեկանում է մի որսորդից, երկրորդում՝ քեռուց:

էպոսում Դավթի պահանջի վրա՝ իրեն հանձնելու հոր ունեցվածքը, զայրանում է Ձենով Հովանը.

Քի ասողի բերան կուտրը

էդա վո՞վ ի սալըղցուցիր քըղի էդոնք:

(Ս հ. Բ պ. էջ 353)

Ճնճղափորիկը նույնպես բարկանում է Մհերի վրա և բղավում՝

—Անիծվի էն մարդ, որ մեծ-սիրտ որբին

Թևի տակ կառնի ի վեր աշխարհին:

Բանաստեղծի ծրագրային գրառումներում կա սևագիր մի պատառիկ, ուր նա փորձել է որոշ փոփոխությունք մհերին վերագրել նաև Դավթի՝ կռվի մեկնելուց առաջ արտասանած հրաժեշտի խոսքը՝ Ծովասարին.

...Ծովասարու պաղ-պաղ ախպրներ,
 Մնացե՛ք բարո՛ւ, բարի մնացեք.
 Ես կ'երթամ կռիւ, կը ծարւնամ,
 Տո՛ւք կարոտ մնացեք.
 Ծովասարու պաղ-պաղ քնմիքն էլ,
 Մնացե՛ք բարո՛ւ, բարի՛ մնացեք.
 Ես կ'երթամ կռիւ, կը շոգանամ,
 Տո՛ւք խո՛ւ մնացեք...⁹⁹

Իսահակյանի մշակմամբ էպոսի այդ հատվածն ստացել է այսպիսի մարմնավորում.

Մհեր պողպատե տրեխներ հագավ,
 Երկաթե գոտին պիրկ կապեց մեջքին—

 Դարձավ Սասնա սարերին.
 Դուք կեցե՛ք բարով, Սասնա սարեր,
 Ես կերթամ պանդուխտ, կկարոտնամ ձեզ.
 Դուք կեցե՛ք բանձրիկ, դուք կեցեք ազատ:
 Դուք կեցե՛ք բարով, պաղ-պաղ աղբյուրներ,
 Ես կերթամ պանդուխտ, կծարավնամ ձեզ,
 Դուք պայծա՛ռ կեցեք, պաղ-պա՛ղ աղբյուրներ,
 Դուք կեցե՛ք բարով, Սասնա՛ հովեր,
 Ես կերթամ պանդուխտ, կերվի՛մ տապերով,
 Դուք զո՛ւ մնացեք, շնկշնկա՛ն հովեր...:

Ամենայն հավանականությամբ, բանաստեղծը ծրագրած է եղել այս հատվածը տեղադրել Մհերի՝ Սասունից վտարանդվելու դրվագում: Սակայն հետագայում, թերևս, գտնելով, որ այդտեղ նկատելի որոշ սենտիմենտալիզմը այնքան էլ բնորոշ չէ էպիկական հերոսի նկարագրին, իր մտադրությունը չի իրագործել:

Ուշադրավ է, որ էպոսի հիշյալ հատվածը Թումանյանը

⁹⁹ Սասնա ծոեր, Ա. հատոր, ԻԴ պատում, էջ 1061:

ևս ծրագրած է եղել օգտագործելու իր «Սասունցի Դավիթ» պոեմում, սակայն նույնպես հրաժարվել է, հավանորեն, նույն նկատառումով: Ցավոք, այդ հարցին չի անդրադարձել Մ. Զամփուլադյանը, իր «Թումանյանը և ժողովրդական էպոսը» շատ արժեքավոր աշխատության մեջ¹⁰⁰:

3

Իսահակյանի վիպերգում զգալի տեղ են գրավում բոլորովին նոր, ինքնաստեղծ դրվագները: Ստեղծելով դրանք, բանաստեղծը ելել է էպոսի ոգուց, նպատակ ունենալով հարըստացնել և ամբողջացնել Սասնա տան վերջին ժառանգի կերպարը, հաստատել կամ ժխտել նրա բնավորության այս կամ այն գիծը: Ինքնաստեղծ այդ դրվագների միջոցով Իսահակյանին հաջողվել է պատկերել, իր խոսքերով ասած՝ «միջին դարը, ավատականությունը, ճորտությունը, իհարկե, ակնարկներով միայն, նյութական կուլտուրան, ղենքեր, դորժիքներ, քաղաքներ»¹⁰¹:

Այդ դրվագներից մեկում ցույց է տրված Մհերի սերտ կապը բնության հետ: Ինչպես Կաթնաղբյուրի ջուրը խմելով հզորանում են Սասնա հերոսները, այնպես էլ Մհերը բնության հետ է ստանում իր ուժը.

Կելներ Մհեր
Գուշպերու մեջ կը սողոսկեր,
Ու վայրենի մեղուներու
Խորիսխն ազնիվ կը հավաքեր,
Կուտեր Մհեր ու կուժովնար:
Կը մագլցեր քերծերն ի վեր,
Արծիվներու վեա բներեն
Կը հավաքեր ձրվերն ամեն:
Ժեռ քարերը իրար կուտար,

¹⁰⁰ Մ. Զամփուլադյան, Թումանյանը և ժողովրդական էպոսը, Երևան, 1969, էջ 55—58:

¹⁰¹ «Ինչպես եմ մշակել «Սասնա Մհերը» սևագիր հոդվածից:

Բոց կըհաներ ժեռեն զնար,
Կրակ կաներ, կը խորովեր
Արծվի ձվեր,
Կուտեր Մհեր ու կուծովնար:

Սասմա Մհերը օժաված է ֆիզիկական մեծ ուժով. եթե
սլապը՝ Մեծ Մհերը երկու կես էր անում առյուծին, ապա
ինքը մենամարտում է վագրի հետ և ձեղքում նրա գանգը:

Իսահակյանի Մհերն անսահման բարի է ու խղճով. նրա
ձեռքը չի բարձրանում հայրական տանից իրեն դուրս անող
դաժան հորեղբոր վրա.

Լախտն առավ Մհեր, որ զարկեր նրան,
Ձեռը չգնաց հորեղբոր վրան:
Գազաղեց սաստիկ Ճընճղափորիկ,
Գոռաց ահառիկ,
Ու մահակն առավ,
Ծեծեց Մհերին, տնեն դուրս արավ:
Եվ դառավ Մհեր, որ զարկեր նրան,
Նորեն Մհերի ձեռքը չգնաց
Հորեղբոր վրան:

Պոեմում ցույց է տրված նրանց միջև օրավուր սրվող
հարաբերությունները. Ճնճղափորիկը հենց սկզբից բարի աչ-
քով չի նայում եղբոր որբուկին: Ձրի չկերակրելու համար
նրան ուղարկում է հսկելու Սասնա հանդ ու հանդաստան,
կամ (առաջին տարբերակում) դարձնում հոտաղ: Մանուկ
Մհերի գանգատները՝ օրը քաղցած անցնելու մասին¹⁰² լսում
է անտարբերությամբ և սառնորեն պատասխանում.

Սասմա մեր հանդեր լիքն են սինձ, բանջար,
Քաղե՛, կե՛ր, ինչո՞ւ կմնաս անճար,—

¹⁰² Նախորդների նման «մեկ բրդում» հացը չէր բավարարում փոքրիկ
դուրսգնացին:

Կարկտի, հագի, ասավ նեղսրտած
Ճնճղափորիկ:

Որքին պահելու և շահելու փոխարեն, Ճնճղափորիկն ու կինը դժգոհ են, որ նա «անկշտում է» ու «մառան ու տաշտում» ոչինչ չի թողնում (առաջին տարբերակ), նախազգում են որևէ փորձանք նրանից (երկրորդ տարբերակ) և վտարում հայրական տնից: Մհերը դեմ-հանդիման կանգնում է կարիքի ու չարիքի առաջ: Հետզհետե նրա զայրույթն աճում է և պոռթկում վերջում հասնում իր գագաթնակետին: Իսահակյանը քայլ առ քայլ նախապատրաստում և պատճառաբանում է Մհերի հետագա գործողությունները, որոնց ընթացքում հերոսը կարողանում է ճանաչել աշխարհի չարն ու բարին: Բանաստեղծը նրան դուրս է բերում Սասունից ու տանում՝ Օղ-Տողան թագավորի հողը և Զզիրու հողը (առաջին տարբերակ), Ոստանա քաղաք (առաջին տարբերակ) և Ճապաղ-ջուրի դաշտ, ինչպես նաև՝ Լաթարա հող, Պղնձե քաղաք, և կարևորն այն է, որ Իսահակյանը տեղանունների ընտրությամբ ու գործածությամբ հարցում նույնպես հարազատ է մնում միջնադարին և հիմնականում՝ մեր էպոսին¹⁰³:

¹⁰³ Այդ անունների մասին բերում ենք «Սասնա ծռերի» ծանոթադրությունների տվյալները:

«Օղ-Դռլան կամ Օղան-Տռլան.— Հիշվում է վեպի պատումներում մերթ իբրև մեկ թագավորի, մերթ իբրև երկու թագավորների՝ Օղան և Տողան կամ Դողան, անունները: Սրանց իշխանության տերիտորիան որոշ չէ. գտնվում է մոտավորապես Մասիսի շրջակայքում: Վեպից պարզ է միայն մի բան. նա (կամ նրանք) այլազգի է: Մեկ պատումով (1, ԺԳ) նա Դավթի վիպակաճ կին Խանդուխտանու մի հայրն է, այլ պատումով, ընդհակառակն, նա (կամ նրանք) Խանդուխտի թշնամին է: Առայժմ դժվար է որոշել Օղան-Դողանի ցեղային ծագումը:

Ոստանա կապան.— Ոստան գյուղը Վանա լճի հարավային ափին է, Ռշտունիքի մեջ, Վան քաղաքից հարավ-արևմուտք: Մերձակա քարալեռան վրա շինված է հին «Ոստանա բերդը» որից դեպի ծովը հանում է մի կապան, որ հնուց փորված է լեռան քարածայուի միջով՝ շրջապատւյտ և խիստ

Մի երկու խոսք՝ Պղնձե քաղաքին վերաբերող, որը, ինչպես հայտնի է, չի կապվում պատմական որևէ տեղանվան հետ: Անտարակույս բանաստեղծին ծանոթ է եղել դրական երկը՝ «Պղնձե քաղաքի պատմությունը»¹⁰⁴: Նա իր վիպերդում աշխատել է հեռավոր ձևով տալ այդ պերճաշուք քաղաքի նկարագրությունը, ինչպիսին այն եղել է զրույցում՝ թանկարժեք քարերով, ոսկով ու արծաթով զարդարված պալատներով ու դղյակներով: Մհերը՝

Ժուռ եկավ քաղքի գոհհ ու փողան

Հաղար մանեման.

Կանգ առավ մոլոր մեջ պողոտային

Առջև փառանցփառ մեկ ապարանքին:

Զրույցում նկարագրված է նաև քաղաքի վեհաշուք և ամրակուռ պարիսպները. «Նւ պարիսպն ամեն ողորք սև քար էր. և այնպես թուեր որպես միաբերդ: Վաթսուն կանգուն քարձրութիւն էր, քառասուն թիղ լայնութիւն էր պարիսպին. և ունէր քսան և եօթը դուռ. ՚ի մեկ դռնեն ՚ի մէկալ դուռն ոչ երևէր մարդն»: Ահա վիպերդի համապատասխան հատվածը՝

Նեղ, մանավանդ վերին կողմում. այդ տեղով միայն մեկ ձիավոր կարող է անցնել, այն էլ տեղ-տեղ ոտքով: Կապանի այս նեղ տեղը տեղում է մոտ մի ժամ: Երբ Դավթի որդի Մհերն ուղում է Վան դնալ, Ոստանա կապանի իշխանը «կապ եթալ, զՄհեր կասեց», բայց Մհերն աղատվում է:

Ճապաղջուր.— Հին «Հաշտյանք» դավառն է Տարոնից դեպի արևմուտք, Արածանի գետի երկու ափերին, ուր գետի ջուրը ցրվում, ճապաղում է, որից և ստացվել է և դրա անունը: Ճապաղջուրը (Սասունից հյուսիս-արևմուտք), ինչպես և Տարոնը (Սասունից հյուսիս), մի ժամանակ մտել է Սասնո մեջ: Դրա հիշողությունը կա և Վեպի մեջ:

Պղնձե քաղաք.— Ըստ երևույթին վիպական անուն է. բայց Վարազա դաշտում, Վան քաղաքի մոտ ցույց էին տալիս մի ավերակ, անունը՝ Պղնձե քաղաք» (Սասնա ծոեր, Բ հատոր, Բ մաս):

¹⁰⁴ Պատմություն Պղնձե քաղաքին որ է օրինակ աշխարհիս, Թիֆլիս, 1911:

Պղնձե քաղքի պարիսպներ ու դուռ
Պինդ—պղնձակուռ.
Կամուրջ, բուրգ ու բերդ՝
Պինդ—պղնձակերտ:

Վիպերդի առաջին տարբերակում Օղ-Տողան թագավորի հողում, իսկ երկրորդում՝ Ճապաղջրում Մհերն իր աչքով տեսնում է կյանքի բարիքները շռայլորեն վայելող պարապ հարուստներին.

Տեսավ՝ ամառվա շոգին-կրակին,
Նստել է ծառի քաղցրիկ շրվաքին
Հարուստ մարդու մին, կնոջ հետ մեկտեղ,
Կը խմե գինին, կուտե ձրվածեղ...

Եվ տեսնելով «մեջքակոտոր ու քրտնաթոր»՝ օր ու գիշեր աշխատող աղքատներին, պատանին խորհել է սկսում կյանքի հակասությունների մասին ու զարմանում, որ «մեկն այսպես է, մյուսն այնպես»:

Ռամիկ չարադատ
Չոր կուտե,
Հարուստ պարապ մարդ
Մեղր կուտե:

Սակայն նա դեռևս միամտություն ունի կարծելու, որ կյանքն այսպես վատ է միայն այդ երկրում.

—էս էլ կյանք չէ.
էս չար մահ է,
Հացն ու ջուրը էս պիղծ տեղի—
Օձու լեղի:

Վիպերդի հերոսը շուտով համոզվում է, որ անարդարությունը տիրում է ամենուրեք: Այդ նպատակով հեղինակը

Մհերին պատեցնում է տարբեր վայրեր, ցույց տալով անիրավության նորանոր փաստեր: Եթե սկզբում Մհերը հորեղբոր անբարյացակամ վերաբերմունքը տեսնելով, միայն խոժոռվում է և լարում հոնքերի աղեղը, հետո արդեն բարձրաձայն բողոքում ու ընդվզում է աշխարհի անիրավ «դրուկի» դեմ: Երբ Ոստանա քաղաքում փռնապանը, տեսնելով, որ քաղցին չդիմանալով «Մհեր մեկ մատով փականք կը կոտրեր, հացերը կուտեր», սպառնում է օրենքով ու պատժով, Մհերը զայրացած շարտում է նրա երեսին.

— Էդ պատիժ, օրենք ես չեմ հասկանա:
Բա էս օրե՞նք է՝
Դըժար բաները ես եմ անողը,
Համով բաները դու ես ուտողը,
Թե գանձ կապողը:

Մհերի մեջ Իսահակյանը մարմնավորված է տեսնում միջնադարյան Հայաստանի ռամկության այն խավին, որ հետզհետե ինքնագիտակցության գալով, իր բողոքի ձայնն էր բարձրացնում սոցիալական անարդարությունների դեմ: Չնայած այդ ձայնը խլանում էր՝ լայն արձագանք չգտնելով, սակայն փաստն ինքնին նշանակալի է: Գնալով մեծ չափերի են հասնում Մհերի բողոքն ու ընդվզումը և ուղղվում արդեն թագավորի դեմ:

— Ի՞նչ հարկ, ի՞նչ կոռ,
Ի՞նչ թագավոր,
Պա՞րտք է տվել, կուղե հիմի,—

զայրանում է նա, երբ գյուղական ռեսը հիշեցնում է թագավորի գլխահարկի մասին: Լաթարա հողում գյուղական ռեսի մոտ՝ իբրև ճորտ աշխատանքի անցնելով, Մհերը ականատես է լինում, թե ինչպես «մեծասունի և հարուստի» «մառանն ու մարագը» լցնող ռամիկը միշտ մնում է մերկ ու անոթի:

Նրա ցանած ու հնձած արտից իրենց բաժիններն առնում են մեծ ու փոքր բոլոր հարստահարիչները, անգամ... թռչունները:

Այս դրվագը լրացնում և առանձին մի շունչ է հաղորդում հացն ու ազատությունը փառաբանող գուսանի երգը.

Եկավ հեռվեն մեկ ծեր գուսան,
Ձեռքին քրնար՝ գանգ մի եզան,
Եղջյուրներեն երեք հատ լար
Քաշած՝ ի վար:

Եվ Իսահակյանը մեկ անգամ ևս հավաստում է իր արդար հացին տիրանալու ուսմկի իրավունքը.

Փա՛ռք տվեք հացին,
Ապա աստըծուն,
Հացն է աշխարհքիս
Իսկն ազատություն:

Ասենք բուխ սրտով
Ռամկին արև շատ.
Պահող-շահողին
Աշխարհ-արարատ:

Գովքն արեք ուսմկին,
Ռամկի սուրբ գործին,
Ձեր ազատության,
Ձեր արդար-հացին¹⁰⁵:

Վիպերգի հաջորդ դրվագում Մհերը կանգնում է փակուղու առաջ, երբ նրա դեմ են դուրս գալիս ճորտերը, ուսմիկներն ու մշակները: Մեծ ցավով ու զսպված զայրույթով է Սասնա դյուցազնը դիմում իրենց շահերին անգիտակ ուսմիկներին.

¹⁰⁵ Պոեմի այս հատվածն իր լեզվա-ոճական ատաղձով և արտահայտած գաղափարով որոշակի հիշեցնում է «Հացի երգը» բանաստեղծությունը (Տե՛ս սույն աշխատության էջ 42):

—Վա՛յ ձեզ ճորտեր խեղճ ու տխմար,
Վերցրել եք զեն՝
Թափվել վրաս, հանց ձեր ահեղ
Թշնամու դեմ...

Այս դրվագով Իսահակյանը ցույց է տալիս, որ Մհերի
դադափարների հաղթանակի համար միջնադարյան Հայաս-
տանում ոեալ պայմաններ չկային:

Հողի թուլացումը Մհերի ոտների տակ Իսահակյանի
պոեմում արդյոք չի՞ խորհրդանշում հերոսի և նրա ապրած
ժամանակի, միջավայրի հակասությունը:

Շատ ուշագրավ է նուրբ քնարականությամբ կերտված՝
վիպերգի հետևյալ հատվածը, ուր Մհերը երանի է տալիս
սոցիալական ճնշումներից ազատ թռչուններին.

Երանի՜կ ձեզ, վայրի հավքեր,
Դուք օրհնած եք, մարդն անիծած,
Ազատ, անպարտ,
Ընկերներով ու ախպոր պես
Կապրիք անհոգ ու սեր կանեք,
Ո՛չ արտատեր կըճանչնաք,
Ո՛չ հարկ ու կոռ, ո՛չ թագավոր,
Երանի՜կ ձեզ, վայրի հավքեր...

Մհերը Պղնձե քաղաքում տեսնելով ապարանքի շինու-
թյան վրա աշխատող բանվորի վայր ընկնելն ու ջարդվելը,
սրտի կսկիծով ճշմարտության խոսքն է ասում «Իրեն սրտին
ու աշխարքին».

—է՛յ դուք, մշակ, ճորտ ու բանվոր,
Կը շինեք հար դուրք ու դարբաս,
Ու ձեզ համար
Լուծ ու անուր, զնդան ամուր:

Վիպերգի հերոսի հետզհետե սաստկացող բողոքն ու
զայրույթն այստեղ հասնում է իր տրամաբանական վախ-
ճանին: Մհերը չի հանդուրժում աշխարհի չարությունը, և
գտնելով, որ այն պետք է փոխվի, կոչ է անում՝

Ելնենք գուպար
Աշխարհքի դեմ զրկող ու չար.
Ողջ ավերենք
Ու ուամկություն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ուամկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Թանկ է Մհերին իր հայրենի հողն ու ջուրը, և նա ուզում
է պայքարել իր հայրենիքում. այս նպատակով է իսահակ-
յանը նրան նորից բերում Սասնա երկիր, և ինչպես մի օր իր
նախնիները հիմնեցին Սասունը, այնպես էլ նա՝ «Մարա-
թուքա բավիղի մեջ», խրոխտ լեռան վրա կառուցում է իր
ամրոցը՝ այն կոչելով Մհերի քեն (առաջին տարբերակում՝
Մհերի տապան) խորիմաստ անունով:

Կրակված սրտով, ֆիզիկապես ու հոգեպես աճած՝ Մհե-
րը վերադառնում է Սասուն: Նախկին երեխան դարձել է
դյուցազուն՝ իր նախնիների արժանավոր ժառանգը: Իջնե-
լով Աթոռ-քաղաք և մտնելով Առյուծաբերդ, նա զինվում է
հոր զենք ու զրահով և այս անգամ արդեն ձեռք բարձրաց-
նում դիմացը ելնող և նորից խանգարել փորձող Ճնճղափո-
րիկի վրա: Մհերի նպատակն է կռվի դուրս բերել սասունցի
կտրիճներին, կռիվ՝ հին աշխարհը քանդելու և ուամկություն
հաստատելու համար: Այս անգամ, հորեղբորից բացի, նրա
դիմաց դուրս են գալիս «Ջոջ տան պետերը, խոլ հսկաները»՝
«ոստանիկներ ու սեպուհներ, ազատներ ու ավատներ...»:
Ու գալիս են նրանք բոլորը, որպեսզի «Մհեր զլեն, Մհեր
ճմլեն», սակայն անվախ ու խիզախ դյուցազնը գիտե, թե ում
դեմ է իր կռիվը:

Մզեց, եկավ, կանգնավ խիզախ
Դեմ-հանդիման, ճակատ-ճակատ,
Իշխաններուն, սեպուհներուն,
Ավատներուն, ազատներուն...

Մհերը փակվում է անձավում, սակայն նրա ալեկոծ հոգին չի հանդարտվում, ծառս է լինում, ինչպես իր «կրակ ու բոց» նժույզը, և երկուսը միասին «քարի խորեն» շարժում են «աշխարհն հիմեն»: Մհերի ականջը միշտ ուսման կանչին է: Իսկ ժողովուրդը իր փրկության հույսը նրա հետ է կապում, սպասելով, «որ Մհերը դուրս գա և ուսման թուն բերի ու նահատակվի»¹⁰⁶:

Իսահակյանը վիպերգի վերջին դրվագում ազատում է Մհերին ու դուրս բերում Ազոսավու Քարից, քանի որ, ինչպես ինքը՝ բանաստեղծն է նշել, «Մեր էպոսը, Մհերը, իր մեջ ունի պոետենցիալ վիճակում սոցիալական էություն», և մշակելով էպոսը նա աշխատել է «դնել նրան կինետիկ վիճակում, հասնել տրամաբանական ելքին—Մհերի ազատվելուն»: Սա խիստ օրինաչափ է, քանի որ Մհերը սոցիալական անարդարության դեմ կռվի ու պայքարի սիմվոլն է՝ սկսած միջնադարից մինչև մեր ժամանակները, և եթե հեռու անցյալում Սասնա դյուցազնը չկարողացավ իրագործել իր վեհ նպատակները, նրա կողք դարերի խորքից հասավ մեր օրերին և «հաղար, հաղար, հաղար ու բյուր ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ» կանչեցին ու ձայն տվեցին Մհերին ու վեհ դյուցազնը «եկավ արև-աշխարհ», ու բոլորը միասին կործանեցին չար աշխարհը: «Ես լրացրի էպոսը,—գրել է բանաստեղծը,—ազատագրելով Մհերին, ես վարվեցի այնպես, որպես կաներ մի հին գուսան, ժողովրդի ղավակ, ժողովրդի բերանով, եթե ասլրեր մեր ներկա օրերում»:

Իր վիպերգի հերոս ընտրելով հայ ժողովրդական էպոսի դյուցազն Մհերին, որը «իբրև համամարդկային մի հոյակապ սիմվոլ, գրեթե եզակի է համաշխարհային բոլոր էպոսներին»

¹⁰⁶ Վ. Ահարոնյանին գրած 1922 թ. օգոստոսի 12-ի նամակից:

մեջ»¹⁰⁷, Իսահակյանը դարձրեւ է նրան իր գաղափարակիրը
և կատարեւ է հեռավոր անցյալի ու մեր ժամանակների մի
հիանալի միահյուսում, ստեղծեւ գրական մի հոյակապ կո-
թող:

¹⁰⁷ Ավ. Իսահակյան, Սամա Մհերի մասին, Ընտիր. երկեր, Երևան,
1948, էջ 461.

«ՍԱՍՄԱ ՄՀԵՐ» ՎԻՊԵՐԳԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ա.վ. Իսահակյանի «Սասմա Մհեր» վիպերգն առաջին անգամ տպագրվել է Վիեննայում, Ս. Հակոբյանի խմբագրությամբ հրատարակվող «Արեգ» ամսագրի 1922 թ. № № 3 և 4-ում, ապա, նույն թվականին, առանձին գրքով:

Վիպերգի առանձին հրատարակությունն իրականացվել է «Արեգում» տպագրվելուն զուգահեռ: Այդ մասին տեղեկանում ենք Սիմ. Հակոբյանի 1922 թ. փետրվարի 11-ի նամակից. «Մարտի թվի մեջ լույս կտեսնի կես մասը: Մնացյալ կեսը հետևյալ համարում: Գրքույկը լույս կտեսնի, ուրեմն, 4-րդ թվի հետ միասին, մարտի վերջերը կամ ապրիլի սկզբին»:

Ամսագրի խմբագիրը «Սասմա Մհերի» համար նույնատեղադրմար է դնում «էպիքական պոեմ» անվանումը և ոչ «վեպ կամ վիպասք կամ վիպասան», «որովհետև դա այն իմաստը կտա, թե ժողովրդական ստեղծագործություն է և ոչ հայտնի, որոշ բանաստեղծի գործ»: Նույն թվականի Շոտտոսի 25-ի նամակում խնդրելով «Ղազարոսի հարությունը» ստեղծագործությունը՝ տպագրության համար, Սիմ. Հակոբյանը հետաքրքրական զուգահեռ է անցկացնում երկու գործերի միջև. «Իմ մտածողության մեջ այդ նյութը որոշ չա-

Ամառ հեղեղի (համար 16):

Չեղացի հեղեղի անհայտ
Գրած նամակի փոխարեն հեղեղի
և ծաղիկի համար հեղեղի
հեղեղի կոչումը՝ հոր չեղեղի անհայտ
հեղեղի համարումը. չորսօրե հեղեղի
և չեղեղի ուր աշխատի չեղ
Հեղեղի հեղեղի:

16.

Ամառ հեղեղի անհայտ
Դրած նամակի փոխարեն
և ծաղիկի համար հեղեղի
հեղեղի կոչումը՝ հոր չեղեղի անհայտ
հեղեղի համարումը. չորսօրե հեղեղի
և չեղեղի ուր աշխատի չեղ
Հեղեղի հեղեղի:

փով նման է «Սասմա Մհերին»: Մհերն ու Ղազարոսը նույն հանրամարդկային իդեալի արտահայտություններն են: Ղազարոսը թաղված է, Մհերը բանտարկված է ժայռի մեջ: Բայց երկուսն էլ հաղաթյուն են առնում: Մեր ժամանակի իդեալների տեսակետից, մանավանդ, այդ նյութը հետաքրքրական է»:

1923—1924 թթ. պոեմի առանձին հատվածներ՝ «Մհերի կոիվը Սասմա Զոջանց դեմ», «Մհերը քարայրում», «Մանուկ Մհերը», «Մշակ Մհերի բողոքը», «Մհերի բերդը» վերնագրերով տպագրվել են «Կարմիր արև» դասագրքերում, և մի այլ հատված՝ «Մհերը կոռվոր» վերտառությամբ՝ «Աշխատանք» ընթերցարանում¹⁰⁸:

«Սասմա Մհերի» առաջին հրատարակությունից հետո բանաստեղծը, ըստ երևույթին, չգոհանալով հրատարակված տարբերակից, սկսում է վերամշակել երկը: Իսահակյանի արխիվում պահպանվել են պոեմի ստեղծագործական պատմություն՝ 1922—1938 թթ. ժամանակաշրջանին վերաբերող երկու ինքնագիր և մեկ ընդօրինակություն՝ հեղինակային ուղղումներով (ամբողջական), ինչպես և պատառիկներ: Ինքնագրերից և ոչ մեկը չունի որոշակի թվագրություն, սակայն նկատի ունենալով բանաստեղծի ստեղծագործական կենսագրության փաստերը, այլև ձեռագրական տվյալները, հանգել ենք այն եզրակացության, որ մշակումները կատարվել են 1923—1926 թթ., և ապա՝ Հայաստան վերջնականապես վերադառնալուց հետո՝ 1937 թվականին:

Ավ. Իսահակյանը Խորհրդային Հայաստան այցի եկած ժամանակաշրջանում (1926—30 թթ.) գրել է մի շարք պատմըվածքներ և բանաստեղծություններ, տպագրության է պատրաստել և հրատարակել «Լիլիթ» («Արևելյան տեսիլներ») արձակ լեզենդների, «Համբերանքի չիբուխը» պատմըվածքների ժողովածուները, «Աբու-Լալա Մահարի» պոեմը,

¹⁰⁸ «Սասմա Մհեր» պոեմի տպագրությունը դասագրքերում կատարվել է բանաստեղծից անկախ, ուստի հատվածների վերնագրերը պատկանում են դասագրքերը կազմողներին:

ինչպես նաև լրացուցիչ նյութեր հավաքել «Ուստա Կարո» վեպի համար: Չկան տվյալներ, որ նա այդ ժամանակ զբաղված լիներ «Սասմա Մհեր» վիպերգով: Թերևս դա պետք է բացատրել նրանով, որ պոեմի ձեռագրերը նա թողել էր Փարիզում: 1926 թ. դեկտեմբերի 7-ին Սոֆյա Իսահակյանին ուղղած նամակում բանաստեղծը գրել է. «Հիմարություն ունեցա և դրա մեջ Պողոս Մակինցյանն էլ շատ մեղավոր է, գուցե միակ, որ հետո չբերի ձեռագրերից և մշակված «Երգեր ու վերքերը» և ուրիշ դործեր («Սասմա Մհեր»), որ այստեղ հրատարակելի և փող ստանայի»¹⁰⁹: Նույնը պետք է ասել նաև նրա փարիզյան հինգ տարիների (1930—1935 թթ.) մասին: Նոր վերադարձած լինելով Խորհրդային Հայաստանից, Իսահակյանը եռանդուն գործունեություն է ծավալել «ՀԵԿ»-ի ֆրանսազայ ճյուղի աշխատանքներում, վարել փոխ-նախագահի պաշտոնը, մասնակցել «ՀԵԿ ամսագրի խմբագրմանը: Այդ տարիներին նա գրել է մի շարք արձակ երկեր, հուշեր, հոգվածներ, սակայն վիպերգին չի անդրադարձել:

«Սասմա Մհերի» հրատարակությունների, ինչպես նաև պահպանված ինքնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վիպերգը ունի երկու տարբերակ (1922 և 1938) և նրա մշակումները վերաբերում են կա՛մ մեկին, կա՛մ մյուսին, չհաշված, իհարկե, վերջին, անավարտ մշակումը, որի մասին հանգամանորեն խոսք կլինի առանձին:

Ինքնագրերի ուսումնասիրությունը հավաստում է, որ պոեմի երկրորդ (հիմնական) տարբերակը միանգամից չի ստեղծվել: Առաջին տարբերակի հրատարակությունից անմիջապես հետո ձեռնամուխ լինելով նրա վերամշակմանը, բանաստեղծը վերսկսում է ժողովրդական էպոսի հետագա համակողմանի ուսումնասիրությունը, ինչպես ինքն է վկայում մի գրառման մեջ. «Մհերի» վերջնական մշակման համար պետք է կարգալ բոլոր վարիանտները նորից» (20-ական թվ.): Պոեմի վերջերգը բանաստեղծը գրել է 1937 թ.՝ Խորհրդային Հայաստանում եղած ժամանակ արդեն, զեղար-

¹⁰⁹ Իսահակյանի ընտանիքի մոտ պահվող արխիվ:

վեաստորեն ընդհանրացնելով հայ ժողովրդի ազատագրման պատմական փաստը: Այս մասին նա գրել է Հովհ. Շիրազին՝ 1937 թ. օգոստոսի 30-ի նամակում. «...«Մհերի» վերջը վաղուց է ավարտել եմ և հանձնել եմ «Խորհրդային գրականությանը»: այս ամսում կեսը կհրատարակվի, կեսն էլ՝ մյուս ամսում, հետո՝ առանձին գրքույկով: Հարցնում ես, թե գոհ ես. երևակայիր, որ գեշ դուրս չեկավ, բավական հաջող է և գոհ եմ...»¹¹⁰:

Ինքնագրերին ծանոթանալիս, մեր աչքի առջև հառնում է Իսահակյան մտածողն ու փրկիսոփան, ստեղծագործողն ու գեղագետը՝ միշտ խորհող, որոնող, կատարյալին ձգտող: Այդ են հաստատում պոեմի՝ Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում¹¹¹ պահվող ինքնագրերը¹¹². տարբեր գույնի մատիտներով ու թանաքներով բազմաթիվ ուղղումներն ու ծրագրային նշումները վկայում են, որ հեղինակը իր գործին անդրադարձել է մի քանի անգամ, կրկին ու կրկին... Հաճախ միևնույն դարձվածքը, բառը, տեղանունը, դրվագը մնում են բանաստեղծի ուշադրության կենտրոնում այնքան ժամանակ, մինչև գտնում է վերջնականը: Այսպես, օրինակ, պոեմի սկիզբը՝

Ելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա,
Կըռիվ խոյացավ ի Մսրա վըրա:

Նախնական տարբերակում այն եղել է՝ «Կըռիվ խոյացավ դեպ Մսրա վըրա», այնուհետև բանաստեղծը որոշել է

¹¹⁰ ԳԱԹ, Ա.վ. Իսահակյանի ֆոնդ:

¹¹¹ ԳԱԹ. Ա.վ. Իսահակյանի ֆոնդ № 16:

¹¹² Քանի որ հետազայում խոսք է լինելու այդ ինքնագրերի մասին, դրանք պայմանականորեն համարակալել ենք այսպես. այն ինքնագիրը, որը մոտ է 1922 թ. հրատարակությանը՝ Ա, այն օրինակը, որը մոտենում է ավելի երկրորդին՝ Բ, իսկ հեղինակային ուղղումներով ընդօրինակությունը՝ Գ: Պատառիկները վերաբերում են պոեմի առաջին մշակմանը:

«Գեկար» հանել և դարձնել՝ «Կըռիվ խոյացաւ Մըսըրա վըրա», կորցրած վանկն ավելացնելով Մըսըրին, սակայն դրանով էլ չգոհանալով, ի վերջո դարձնում է «ի Մսրա վըրա»: Կամ, դրվագներից մեկում, սկզբում գրում է՝ «Սասմա ծուր, Ջոջենց պետեր», հետո դարձնում՝ «Ջոջ տան պետեր, Սասմա ծըրեր», մյուս ինքնագրերում փորձում «Ջոջ տան մեծեր, Սասմա ծուր» ձևը, ապա նորից վերադառնում «Ջոջ տան պետեր, Սասմա ծուր»-ին, չհավանելով դարձնում՝ «Ջոջ տան ծուր, Աղնանց պետեր» և ապա հասնում վերջնական՝ «Ջոջ տան պետեր, խոլ հսկաներ» ձևին:

Հարկ է նշել, որ Բ ինքնագիրը շատ հետաքրքրական է մեկ այլ առումով ևս. այստեղ Իսահակյանը փորձ է կատարել փոխել պոեմի լեզուն, ավելի դրականացնել, սակայն հետո վերադարձել է նախնական ձևին, վերականգնելով և օգտագործելով միջին հայերենին մոտ, հիմնականում՝ «Կը» ճյուղի բարբառների բառեր ու հոլովածներ: Այսպես օրինակ՝

Մահացաւ Դավիթ այն անհաղթ առյուծ
— Մահացաւ Դավիթ էն անհաղթ առյուծ

վերականգնել է նախնական տարբերակի էն ձևը. կամ՝

Վազում էր Մհեր շանթի ետևից
— Կը վազեր Մհեր շանթի ետևեն

Փետուր էր պոկում արծվի թևից
— Փետուր կը պոկեր արծվի թևեն

Ուտում էր յոթի կերը մեկ ժումով
— Ու յոթի կերը կուտեր մեկ ժումով

Ասում էին միշտ ճնճղափորիկ
Ու իրեն կնիկ
— Կասեին միշտ ճնճղափորիկ
Ու իրեն կնիկ:

Քեռիների հետ մկունդ էր խաղում
Ելնում որսասար
—Քեռիների հետ մկունդ կխաղար
Կելներ որսասար:

Գովքը երգեց օրվա—հացին
—Գովքը երգեց ավուր—հացին և այլն:

Այս փոփոխման կապակցությամբ ուշագրավ է բանաստեղծի ծրագրային մի դիտողությունը՝ «Նախ և առաջ ավելի հարմար է լեզուն՝ որպեսզի միջնադարյան լեզվին նմանի՝ գրել «կը» բարբառով: Ինչպես առաջ էր»:

«Սասմա Մհեր» վիպերգի ստեղծագործական պատմության լուսաբանման տեսակետից շատ հետաքրքրական է 1922 և 1938 թթ. հրատարակությունների համադրումը, որոնք մենք համարում ենք տարբերակներ, ելնելով բանաստեղծի կատարած կառուցվածքային, գեղարվեստաարտահայտչական, դեպքերի տրամաբանական ընթացքին, իսկ հիմնականում՝ Մհերի կերպարին վերաբերող նշանակալից փոփոխություններից: Բանաստեղծը հանում, տեղափոխում կամ ավելացնում է որոշ դրվագներ, հատվածներ, բառեր, տեղանուններ, սակայն շատ նրբորեն ու տեղին, իսահակյանական իր խորիմացությամբ և վարպետությամբ, լավագույնին, կատարյալին հասնելու, իսկ հաճախ էլ ժողովրդական բնագրին ավելի մոտենալու միտումով: Եվ ակնհայտ է, որ այս իմաստով ավելի շահել է երկրորդ տարբերակը:

Մանրամասնորեն անդրադառնա՞նք այդ փոփոխություններին ու տարբերություններին, սկսելով Մհերի կերպարից:

Մեծ ուժի տեր է մանուկ դյուցազնը, որը բանաստեղծն արտահայտում է հետևյալ կերպ.

Թեև Մհեր դեռ
Տղա էր, տխմար,
Իրեն ուժի տեր
Աշխարհ մարդ չկար:

(1-ին տարբերակ)

Ա, Բ, Գ ինքնագրերը սրա կրկնութիւնն են և միայն երկրորդ հրատարակութեան մեջ Իսահակյանը տխմար բառը, գտնելով ոչ տեղին, դարձրել է՝ տկար, ավելի ընդգծել հերոսի բնատուր ուժը. թույլ, անզոր երեխան ուժեղ է բոլորից և այստեղ էլ չափազանցութեան մեջ շրնկնելու համար բանաստեղծն աշխարհը փոխարինել է Սասունով.

Մհեր թեև դեռ տղա էր, տկար,
Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար:

Մհերն աչքի է ընկնում նաև իր հորից ժառանգած գեղեցկութեամբ.

Հոր պես վեմ-հսկա,
Աչքերը բոց-հուր,
Մեջք ու բազուկներ
Պողպատիկ ու կուռ:
(1-ին տարբերակ)

Ա և Բ ինքնագրերում ավելացրել է՝ «Հոր պես վեմ հսկա ֆաղթ ու ազնավուր», իսկ Գ ինքնագրում դուրսը թողնելով վեմ հսկան ու ֆաղթը, գրել է՝ հոր պես ազնավուր: Սակայն երկրորդ տարբերակում բանաստեղծը պատանու նկարագիրը գեղարվեստորեն անհամեմատ ավելի արտահայտիչ է դարձրել, նմանեցնելով արևային Վահագնին («Նա հուր հերուներ»).

Հոր նման պարթև, աչքերն ական-արև,
Հայացքն՝ արծվենի, ճակատն՝ արքենի,
Մազերը՝ բոց-հուր,
Մեջք ու բազուկներ պողպատիկ ու կուռ:

Հետաքրքրական է Մհերի բնավորութեան փոփոխութիւնը: Առաջին տարբերակում նա ներկայացվում է իր մեջ ամփոփած, բարկացկոտ, մարդկանցից փախչող, մռայլ.

Խեռ էր բնութքը, բորբ ու բարկացկոտ,
Օրերով խոժոռ, հոնքերը ժանգոտ,
Օրերով մենակ, ինքն իր հետ Մհեր՝
Մարդու չէր նայեր,
Մարդու չէր խոսար,
Մթար ու մլար՝
Հանցոր նեմրութ սար:

Ա ինքնագրում Իսահակյանը դարձրել է Հեստ էր բնութքը, մնացածը թողնելով նույնը, Բ ինքնագրում հատվածը սկզբում նույնությամբ թողնելով, հետո մատիտով ջնջել է՝ «Մարդու չէր նայում, մարդու չէր խոսում» նախադասությունները, որն ընդհանրապես արդեն բացակայում է Գ ինքնագրում: Այստեղ նա աշխատել է որոշ մեղմացնող երանգ մտցնել, փորձելով հետը դարձնել՝ խիստ, խուլ, ապա վես, իսկ բորբն ու բարկացկոտը՝ խիստ ու ցասկոտ: Սակայն, ի վերջո, ավելորդ գտնելով Մհերի բնավորության այդ գիծը, հանում է, ներկայացնելով նրան այսպես.

Վես էր բնութքը, խրոխտ ու ըմբոստ,
Հրով, խանդով վառ.

Եվ ապա ոչ թե ընդհանրապես, այլ՝

Զայրույթի պահին՝ մթար ու մլար
Հանց որ նեմրութ սար:

Մեկ նախադասությամբ, երբեմն մի քանի գծերով Իսահակյանը բոլորովին նոր գունավորում է հաղորդում Մհերի կերպարին. եթե առաջին մշակման մեջ նա երբեմն ինչ որ պարագաներում ավելի անօգնական է ու խեղճ, երկրորդում զգում ենք նրա անհատականության ուժեղացումը, սեփական իրավունքների հետզհետե աճող գիտակցումը: Հիշենք այն հատվածը, ուր Մհերն իմանալով հորեղբոր մոտ

դռնվող հոր ունեցվածքի մասին, գալիս է պահանջելու։ Սկզբնական տարբերակում Մհերը թեև բղավում է Ճնճղափորիկի վրա, բայց զգում ենք նրա՝ որոշ իմաստով անզօրությունը. նա ասես խնդրում է և ո՛չ պահանջում.

— Իմ հորըս ծովեն մեկ ափ ջուր չե՞ս տա։

Ու կիտեց հոնքերն իրարու վրա։

Ա, ինքնագրում հասվածը նույնն է մնացել, մի աննշան տարբերությամբ, որը և նախապատրաստում է հաջորդ փոփոխությունը.

— Իմ հորըս ծովեն մեկ ափ ջուր չե՞ս տա։

Ու լաբեց վստահ

Աղեղն հոնքերուն հորեղբոր վրա։

Բ, Գ ինքնագրերում, ինչպես նաև երկրորդ հրատարակության մեջ բոլորովին այլ բովանդակություն է ստանում Մհերի խոսքը։ Նա չի բղավում, այլ «լցված սրտով» է խոսում հորեղբոր հետ՝ գիտակցելով արդեն իր իրավունքները, որպես օրինական ժառանգ.

— Ես լինե՞մ Սասմա ժառանգ ու իշխան,

Ինձ էսպես ձգես ուրիշի դռան...

Բնականորեն, Իսահակյանը երկրորդ տարբերակում Մհերին դարձրել է ավելի ակտիվ ու ըմբոստ, ուժեղացրել նրա մեջ եղած բողոքն ու զայրույթը՝ շրջապատի անարդարության դեմ։ Հիշենք հորեղբոր հետ ունեցած Մհերի ընդհարման՝ վերը հիշած դրվագի շարունակությունը։ Ինչպես առաջին տարբերակում, այնպես էլ Ա, Բ, Գ ինքնագրերում հորեղբայրը զայրանում է Մհերի վրա, ծեծում ու տանից դուրս է անում.

Լախտն առավ Մհեր, որ զարկեր նրան,

Ձեռը չըգնաց հորեղբոր վրան:

(1-ին տարբերակ)

Մի հետաքրքրական նրբերանգ է ներմուծել Իսահակյանը երկրորդ հրատարակության ժամանակ. արտաքինից դուցե և ո՛չ էական թվացող մի տարբերությամբ նա ավելի է ընդգրծել Մհերի մոտ կուտակվող ներքին զայրույթը և միաժամանակ նրա անսահման բարի էությունը: Հորեղբոր ոչ մարդկային վերաբերմունքը նրան դուրս է բերում հավասարակշռությունից այնպես, որ նա այստեղ արդեն երկրորդ անգամ է փորձում ձեռք բարձրացնել Ճնճղափորիկի վրա և երկու անգամ էլ չի կարողանում վիրավորել իր խնամակալ-ազգականին:

Լախտն առավ Մհեր, որ զարկեր նրան,

Ձեռը չգնաց հորեղբոր վրան...

Գազազեց սաստիկ Ճնճղափորիկ,

Գոռաց ահառիկ,

Ու մահակն առավ,

Ծեծեց Մհերին, տնեն դուրս արավ:

Ետ դառավ Մհեր, որ զարկե նրան,

Նորեն Մհերի ձեռքը չգնաց

Հորեղբոր վրան:

Պոեմի երկրորդ մշակման ժամանակ բանաստեղծն էպոսային դյուցազն Մհերին որոշ դեպքերում ավելի մարդկայնացրել է, դրել ոեալ հողի վրա: Տրամաբանական է, որ մեծ մասամբ այնտեղ, ուր Մհերը բախվում է կյանքի լավ ու վատ պայմաններին, ճանաչում իրականությունը, Իսահակյանն աշխատում է նրան ավելի մարդկային կերպարանք տալ, ազատել հեքիաթային չափազանցություններից: Ըստ երևույթին, դրա համար է, օրինակ, երկրորդ տարբերակում հանել հետևյալ հատվածը (Մհերը Ոստանա քաղաքում փոնապանի մոտ աշխատելիս)՝

Քառասուն մարդու բան
Մեն մենակ կաներ
Սասմա տեր Մհեր¹¹³։

Հակառակ որոշ քննադատների՝ Մհերի կերպարի մոդեռնացման վերաբերյալ արած դիտողություն, Խաչակյանն ավելի ուժեղացրել է սոցիալական անարդարության դեմ հերոսի բողոքի ու ընդվզման փաստը։ Ահա այն դրվագը, ուր ռեսը թագավորի գլխահարկն է պահանջում Մհերից և վերջինս զայրացած հրաժարվում է։

Ռեսը ձենեց, ձենին եկան
Գեղ-գեղովի, գեղջուկ ոամիկ.
— Կապե՛ք, ասաց, կապեք ձեռ ոտ,
Երկաթ զարկե՛ք, տարե՛ք ձգե՛ք
Մութ բռնատուն։

(1-ին տարբերակ)

Ինքնազրկում, ինչպես նաև երկրորդ տարբերակում այստեղ ավելացված է երկու տող, հետաքրքրական՝ կոլորիտային առումով.

Ռեսը ձենեց, ձենին եկան
Գեղ-գեղովի, ճորտ ու մշակ,
Ուսերով վառ՝ փոկ ու ճուպան,
Անքերու տակ՝ բիր ու մահակ¹¹⁴։
— Կապե՛ք, ասաց, կապե՛ք ձեռ ոտ և այլն։

¹¹³ Ա, Բ ինքնազրկում այն պահանջվել է, իսկ Գ-ում մատիտով նշանակել է՝ դուրս թողնելու համար։

¹¹⁴ Ա ինքնազրկում՝ «Ուսերն ի վառ փոկ ու ճոպան

Անքերու տակ բիր ու ճուպան] մահակ։
[Ազդուներն՝ մուրն ու կրճան]։

Սրան հետևող մի հատված երկրորդ տարբերակում հավաստում է Մհերի կերպարի մեջ ըմբոստություն գիծն ավելի ուժեղացնելու մասին: Այդ հատվածը չկա ո՛չ առաջին հրատարակության մեջ և ո՛չ ինքնագրերում: Այդտեղ Մհերի՝ հետզհետե աճող բարկության պոռթկումն է.

— «Վա՛յ ձեզ, ճորտեր խեղճ ու տխմար,
Վերցրել եք դեն՝
Թափվել վրաս, հանց ձեր ահեղ
Թշնամու դեմ...
Մեկդի՛ք քաշվեք, մեկդի՛ հիմի
Ճամփա՛ տվեք, թող ռեսը գա,
Թագավորի հարկը տանի...
Ասավ Մհեր,
Ու անառիկ բերդի նման
Կանգնավ մնաց:

Հետաքրքրական է նույն դրվագում կատարված մեկ այլ փոփոխություն ևս. առաջին տարբերակում Մհերը լախտը քաշում է, զարկում տանուտերին և «յոթ օրվա մեռելի պես» փռում գետին: Ապա նորից է լախտը շարժում, «ժեռուտ քարից մի կտոր պոկվում է և սկսում է թռչել՝ հուր-հավիտյան»:

Բ, Գ ինքնագրերում, ինչպես նաև վիպերգի երկրորդ հրատարակության ժամանակ Իսահակյանը որոշ իմաստային փոփոխություն է կատարել. սկզբնական տարբերակում Մհերը դիտավորյալ է սպանում տանուտերին.

Մհեր հոնքեր ժողվեց իրար,
Լախտը քաշեց,
Քաշեց զարկեց
Տանուտերին,
Փռեց գետին
Յոթն օրվա մեռելի պես:

Երկրորդում վիճակը այլ է՝

Մհեր հոնքեր ժողվեց իրար,
Լախտը փարտեց,
Ծայրը լախտին դիպավ սանդին,
Աղասանդը փրթավ տեղեն,
Թռավ զնաց՝ կրակ կտրած,
Ու կթռնի մինչև հիմի:
Շորշոփն հզոր՝ լարած լախտին,
Շանթի նման փռեց գետին,
Փռեց գետին գեղապետին
Յոթըն օրվա մեռելի պես:

Այնուհետև բանաստեղծը դիմել է մեկ այլ փոփոխության, որ տրամաբանորեն բխում է նախորդից. առաջին տարբերակի՝

«Ժեռուտ քարեն մի փերթ փրթավ,
Թռավ, զնա՛ց,
Կերթա՛, կերթա՛ հուր-հավիտյան:
Լախտը փարտեց, ջարդեց, քափեց,
Ինչ որ ընկավ լախտի բերան.
Մնացածներ դումար փախան,
Յրիվ եկան,
Խոփվեցան»:

Հատվածից նա հանել է ընդգծված տողերը:

Այսպիսով, Մհերի վարմունքն այստեղ մեղմելով, Իսահակյանը նրա անողորմությանը տարել է պոեմի վերջը, ուր վիպերգի հերոսը ճակատագրական կովի է դուրս գալիս Սասնա տան «ջոջերի» հետ: Այստեղ, ի՛նչ խոսք, ավելի պատճառաբանված է Մհերի զայրույթի ծայրահեղ բռնկումը: Ինքնագրերից երևում է, որ այս հատվածը հղել է բանաստեղծին ամենից շատ զբաղեցնող դրվագներից մեկը, որ առաջին

հրատարակությունից մինչև երկրորդը մեծ փոփոխություն է կրել: Երկրորդը շահել է թե՛ գաղափարական, թե՛ գեղարվեստա-արտահայտչական տեսակետից: Համոզվենք օրինակով. առաջին տարբերակում՝

Սասմա ծուր
Ջոջենց պետեր.—
Քեռի-Թորոս, Ձենով-Օհան,
Ջոջ-Վերգոն ու Խոր-Գուսան,
Պարոն-Աստղիկ ու Խոր-Մանուկ,
Ճող-Վիրապ ու Խոռ-Վիրապ.
Քաղքի մարդիկ,
Կտրիճ, ռամիկ,
Դուռ ու պատկից
Ու հարեան,
Հագած-կապած
Զրահ, ճոշան,
Թուր ու աղեղ,
Դուռի տվին, եկան մեկտեղ,
Ձեռք. զարկեցին՝ Մհեր բռնեն.
Մհեր քաշեց Թուր-Համլունին,
Կտրեց, թափեց՝ ինչ որ ընկավ
Թրի բերան.
Մնացածներ գումար փախան,
Ցրիվ եկան
Խռիվ եղան.
Արունն ելավ գոչ-գոչ գնաց...

Ա ինքնագրում արդեն Իսահակյանը բավականին փոփոխություններ և ուղղումներ է մտցրել: Այստեղ Ջոջ տան պետերը ո՛չ թե միանգամից են հարձակվում Մհերի վրա, այլ սկզբում նախազգուշացնում են, աշխատելով համոզել, դարձի բերել նրան.

—է՛յ դու Մհեր,
 Դուն տնավեր,
 Վա՛ր էջ ձիեն, ժամառո՛ւն գընա՛,
 Թուր-Հավլունին դիր սուրբ շեմին,
 Ու քառսուն օր,
 Գիշեր ու զոր,
 Զղջում արա, լա՛ց, որոտա,
 Որ ինք Աստված քեզի դարձ տա
 Խորհուրդներեն շար-սատանին.
 Թե որ կուզես մահ ու քսպան՝
 Ավուրն ահեղ դատաստանին
 Պարտիք մընաս ու պարտապան:
 Կըռի՞վ կուզես, մեղքը քեզնեց.
 էսօր եկթ
 Քեզ կը խառնենք հազար տարվա
 Մեռելներուն.
 Լույս-պապերուդ ճամբո՛վ գընա,
 Խելքի արի, ափսո՞ս ես դուն:

Սա՛կայն անօգուտ: Մհերի բարկությունը հասել է իր դա-
 ղաթնակետին: Զղուշացումներն ու սպառնալիքները չեն ազ-
 դում հանուն արգարության պայքարի ելած դուցազնի վրա.

Մհեր կեցավ անպատասխան
 Անպատասխան-լեռ անսասան:

Բ ինքնագրում հատվածը նույնն է թողնված. ընդգծված
 են որոշ տողեր՝ հանելու նպատակով, ինչպես պարզվում է
 Գ ինքնագրին ծանոթանալիս: Այստեղ արդեն կատարված
 են որոշակի փոփոխություններ: Այդպես է վարվել բանաս-
 տեղծը նաև պոեմի երկրորդ հրատարակության ժամանակ:
 Հակառակորդների խոսքը նա դարձրել է ավելի հավաք,
 խիստ ու ազդու, մանավանդ վերջից կրճատելով «Լույս պա-
 պերիդ նամփով գընա» և դրան հաջորդող տողերը, որոնք

որոշ իմաստով թուլացնում էին նախորդների ազդեցությունը: Այս է հատվածի վերջնական տեսքը.

—է՛յ դե Մհեր,
Վար էջ ձիեն, ժամտուն գընա,
կա՛ց, որոտա ու դարձ արա
Խորհուրդներեն չար սատանին:
Կոխ՞վ կուզես... Մեղքը վըրեդ,
էսօր եկթ
Քեզ կը խառնենք հազար տարվա
Մեռելոց հետ:
Մհեր կեցավ անպատասխան
Անպատասխան—լեռ անսասան:

Պոեմի երկրորդ հրատարակության ժամանակ բանաստեղծը կատարել է այս դրվագի ամենակարևոր փոփոխությունը. ավելի ցայտուն է դարձրել, թե ո՛վ է Մհերի թշնամին. հասարակ ժողովուրդը իր կամքով չէ, որ ելնում է դուրացանի դեմ. նրան բռնի բերել են իշխանները, հարուստները.

< >
Ոստանիկներ ու Սեպուհներ,
Ու Ազատներ ու Ավատներ,
Հագած-կապած վերտ ու վահան,
Սուր ու աշտե, տեգ ու նիզակ,
Իրենց առջևն առած-բերած
Հո՞ծ ժողովուրդ—գեղ ու քաղաք,
Գեղջուկ, մշակ, ճորտ ու ռամիկ,
Հագած-կապած զրահ-շապիկ...

Բոլորովին նոր մի հատվածով բանաստեղծը մեկ անգամ էս հավաստում է, որ դեպքերի զարգացման ընթացքում Մհերը հասունանում է դադափարապես. նա արյուն է թափում, սակայն ո՛չ հասարակ ժողովրդի, «խեղճ ու կրակ» ռամիկի, այլ իր իսկական թշնամիների, որոնց նա արդեն ճանաչել է.

Մղեց, եկավ, կանգնավ խիղախ
Դեմ-հանդիման, ճակատ-ճակատ,
Իշխաններուն, Սեպուհներուն,
Ավատներուն, Աղատներուն...

Շարունակությունը, որոշ տարբերությամբ, համապատասխանում է առաջին տարբերակի և ինքնագրերի նույն հատվածին¹¹⁵:

Ա ինքնագրում արդեն Իսահակյանն աշխատել է ավելի խտացնել գույները, ավելացրել է «ալբել, քափել» արտահայտությունը: Ի դեպ, ծրագրային գրառումներում նշված է՝ «Սասունցիներին կոտորելը մեղմել: Ոչ թե կտրեց, թափեց, լափեց, արյունն ելավ գոշ-գոշ գնաց»: Ուշագրավ է, որ, այդուհանդերձ նա պահպանել է Մհերի արյունահեղությունը, սակայն փոխելով իրադրությունը, որի հետևանքով դուրս գալիս գործողությունն արդեն դիտվում է որպես ռամկի կեղեքիչների նկատմամբ անողոքության և ոչ թե ընդհանրապես դաժանության արտահայտություն: Հաջորդ դրվագում Իսահակյանը նորից հաստատում է այն միտքը, որ ժողովրդին ոտքի հանողները տիրողներն են՝ իշխանները, ջոջերը, ժամերեցները¹¹⁶...

Սև ագռավի մռայլ կառանչ՝

Սև լուրն հառավ Սասմա աղանջ:

Իշխան, ջոջեր, ժամերեցներ

Ելան ժամի կոշնակ տվին.

Ու չորս դիեն ծեր-հալեոր...

(2-րդ տարբերակ)

¹¹⁵ Ինքնագրերի և երկրորդ հրատարակության տարբերություններն աննշան են, ուստի ուղղորդյան չենք առնում.

¹¹⁶ Ավելացումը կատարված է միայն երկրորդ հրատարակության ժամանակ:

Մհերն իր հայտնի եզրակացություններին հանգում է, ականատես լինելով ռամկի շարքաշ կյանքին, ինչպես արտհունձի դրվագում, որը պուղացու դառը ճակատագրի պերճախոս նկարագիրն է։ Այս և նման փաստերն են մտածմունքի տեղիք տալիս Մհերին, և նա օր ու գիշեր խորհում է՝

Ռամիկ, գեղջուկ
Ամբար-մառան
Կը լեցնեք դուք
Իշխաններուն ու պարոնին
Ու կը մնաք նորեն-նորեն
Մերկ ի մորեն...

(1-ին տարբերակ)

Ինքնագրերը և երկրորդ տարբերակը, չնչին տարբերությունամբ, նույն միտքն են արտահայտում։

Պոեմի երկրորդ մշակման ժամանակ բանաստեղծը ավելի մեծ փոփոխություն է կատարել այն դրվագում, ուր Մհերը վկա է դառնում շինարարության վրա աշխատող բանվորի վայր ընկնելուն ու ջարդվելուն։ Առաջին տարբերակում Սասնա տան ժառանգը բավականանում է տրտունջի մի քանի խոսքով և հեռանում քաղաքից՝

Մհեր էս տեսավ,
«Ա՛խ» քաշեց, ասավ.
Ռամիկ անտուն մարդ
Դարպաս կըշինե,
Ու իրեն համար
Անտապան հողվար...

Ճանապարհին հանդիպելով «ազատ ու անպարտ» վայրի հավքերին, Մհերը երանի է տալիս նրանց ու ակեկոծ հոգով «դառնում ասում իրեն սրտին ու աշխարքին».

— Ռամիկ դատի՛
Աշխարհ ուտե,
Նորեն մնա
Ինքն անոթի՞...

Երկրորդ մշակման ժամանակ Իսահակյանն ավելի հարմար է գտել այս երկու հատվածները, որոշ փոփոխություններով, միացնելը, որից, իհարկե, հերոսի կերպարը դառնում է գաղափարապես ավելի ակտիվ ու հասուն: Այս դրվագում է, որ Մհերը հանգում է աշխարհի վերափոխման մասին իր հայտնի գաղափարին, ուստի բանաստեղծը ձգտել է այն դարձնել առավել արտահայտիչ, հասնել լավագույն տարբերակին. այդ են վկայում ինքնագրերում առկա բազմաթիվ շտկումները, ուղղումները, որոնց հիման վրա էլ կատարված է երկրորդ հրատարակությունը: Այստեղ Մհերի խոսքը դառնում է մշակին, ճորտին, բանվորին ուղղված մարտակոչ: Մհերը զգում է, որ «դուրք ու դարպաս շինող» այդ մարդիկ իրենց համար պատրաստում են «լուծ ու անուր, զնդան ամուր»: Հերոսն այստեղ պատկերված է լի հավատով, որ ինքը մենակ չէ, որ նրան կօգնեն՝ իր դժվար դործում.

Երթամ շինեմ բերդ ու պատվար՝
Նեղ ու դժար օրվա համար.
Առնեմ իմ հոր զենքերն ու ձին,
Ու Սասմանց տան կուռ կտրիճներ՝
Կռվիս համար վիգ ու սատար:

Եվ տրամաբանորեն սրանից բխում է հատվածի վերջավորությունը, որը և՛ գեղարվեստորեն, և՛ հատկապես գաղափարական տեսակետից ավելի լիարժեք է, քան առաջին տարբերակում.

Ելնենք գուպար
Աշխարքի դեմ զրկող ու չար.

Ողջ ավերենք
Ու ռամկուծյուն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Մհերի կերպարի գաղափարական ուժեղացման մասին է վկայում երկրորդ մշակման ժամանակ ավելացրած մեկ այլ մանրամասն: Մհերն ընդմիջտ բանտարկված է Ագռավաքարում.

Մեջ քարայրին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Սասմա Մհեր.
Ո՛չ լաց կուլա, ո՛չ կզղջա,
Որ Քրիստոս խղճա, գթա,
Թողուծյուն տա:

Այսպես է առաջին տարբերակում: Սակայն պոեմի երկրորդ մշակման առաջին իսկ փորձերից բանաստեղծն այստեղ ներմուծել է մի կարևոր նրբերանգ. Մհերը փակված է այրում, բայց նրան հանգիստ չեն տալիս մտածումներն աշխարհի, կյանքի մասին.

Ու կըմտֆե անմահ Մհեր
Աշխարհի բան.
Աշխարհի բան հանց որ իժ-օձ,
Կը խեթըթե սիրտն ու հոգին:
Ու ո՛չ կուլա, ո՛չ կը զղջա,
Որ Քրիստոս խղճա-գթա,
Վեա արարքին թողուծյուն տա:

Այս դրվագում նկատենք մեկ այլ կարևոր փոփոխություն ևս, մի նոր ապացույց այն բանի, որ բանաստեղծն աշխատել է հարազատ մնալ ժողովրդական սկզբնաղբյուրին: Ավելացումը կատարված է Ա ինքնագրում, պահպանվել է

Բ, Գ ինքնագրերում և կիրառվել է պոեմի երկրորդ հրատարակության ժամանակ: Խոսքը վերաբերում է դրվագի սկզբին.

Մեջ անձավին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Յասման Մհեր.
Գլխու վերև—նըսեմ ճրագ՝
Գիշեր-ցերեկ հավիտյան վառ.
Խմած ջուրը՝ մեկ ըսկահակ,
Հացը օրեն՝ երեք նշխար:
Մեկ խուրձ առույտ Զիու առաջ
Ամառ-ձմեռ դալար-կանաչ:

Բանաստեղծն այստեղ օգտագործել է Երվանդ Լալայանի՝ 1905 թ. գրի առած պատումի հետևյալ տողերը.

Վիրան ուտվածքն օրական Վիրեք նշխարք ա.
Երկու կուշտը մեկ մեկ մոմ վառուկ ա՝ գիշեր, ցերեկ,
< >
Զիան յոնջին յառեջն ա,
Ամառ-ձմեռ կանանչ ա:

Պոեմի երկրորդ մշակման ժամանակ Իսահակյանը ավելի շատ է օգտագործել Մհերի կերպարը բնորոշող համապատասխան մակդիրներ, երբեմն հիշեցնելով նաև հերոսի դիցաբանական ծագումը: Այսպես, օրինակ՝ «Ազնահուր Մհեր չվեց ու հասավ Պղնձե քաղաք», «Հեծավ Մհերն արևագուն...», «Ու կմտքե անմահ Մհեր աշխարքի բան», «Նզովք արին զոռ Մհերին», «Երբ ռամկասեր Մհերը վես...», «Կա և կապրի Յասման Մհեր», «Ազնանց Մհեր լախտն առավ», «Աշխարքի բան միտք կաներ միտք Զոջանց Մհեր»:

«Սասմա Մհեր» վիպերգի տարբերակների ու ինքնագրերի համեմատությունը մեզ բերում է այն հզորակացության, որ Իսահակյանը որոշ դեպքերում դիմում է փոփոխությունների ու շտկումների՝ տրամաբանական այս կամ այն

ելակետից, մեկ անգամ ևս հաստատելով՝ միջնադարյան կյանքին և այն պատկերող էպոսին հարազատ մնալու իր սկզբունքը: Հիշենք այն դրվագը, ուր արտատերը Մհերին ուղարկում է արտում աշխատելու.

Մհեր գնաց մշակներու քով (1-ին տարբերակ)

Եկավ Մհեր նորտերու քով (2-րդ տարբերակ)

Մշակները դարձնելով նորտեր, նա դարձրել է ավելի համահնչուն էպոսի դարաշրջանին:

Հիշենք մեկ այլ փոփոխություն: Ճնճղափորիկը և կինը որոշում են Մհերին «խապառ» վտարել հայրական տանից, Ջոջ Վերգոյի հետ նրան ուղարկելով Կապուտկող՝ պապի մոտ:

Առաջին հրատարակության մեջ և Ա ինքնագրում դրվագն ընդհանրապես բացակայում է, Բ ինքնագրում այն դարձրել է՝

Ելան ճամփեցին մեկ ծառայի հետ,

և հետո մատիտով ավելացրել՝ Ջոջ-Վերգոյի հետ, ավելի տրամաբանական համարելով, որ երեխային ուղեկցողը լինե՞ր ազգականը. փոփոխությունը, ինչպես տեսնում ենք, ուժի մեջ է մնացել նաև հետագայում:

Կամ՝ Մհերին հայտնում են հոր ունեցվածքի և հորեղբոր անիրավության մասին. առաջին տարբերակում Մհերն այդ իմանում է մի պատահական որսորդից, իսկ երկրորդում՝ նրան պատմում է իր Թեաթորոս քեռին, որ ավելի տրամաբանական է:

Թե՞ առաջին և թե՞ երկրորդ տարբերակներում Մհերն իմանալով հորեղբոր անարդար վարմունքի մասին, գալիս է նրանից հաշիվ պահանջելու: Այդ պահանջն անելիս, վիպերգի առաջին տարբերակում Մհերը դեռ երեխա է, իսկ երկրորդում իսահակյանն իր հերոսին այդ իրադրության մեջ է դնում նրան յոթ տարի Կապուտկողում պահելուց հետո, երբ փոքրիկ դյուցազնը մեծանում է, հասունանում թե՞ մտավո-

րապես, թե՛ ֆիզիկապես, որով նրա գործողությունները դառնում են տրամաբանական ու համոզիչ:

Մեկ ուրիշ հետաքրքրական փաստ ևս, հայտնի դրվագներից մեկի հետ կապված: Մհերը Ոստանա քաղաքում փրոնապանի մոտ աշխատելիս, երբ իր աշխատավարձի չափով չի վարձատրվում և մնում է քաղցած, կոտորում է փականքը և ցանկացած չափով հաց վերցնում: Առաջին հրատարակության մեջ, ինչպես նաև Ա., Բ ինքնագրերում փոնապանը դանդաղ է գնում դատավորի մոտ, որը Մհերին սպառնում է օրենքով ու դատաստանով: Զարմացած Մհերը պատասխանում է՝

—էդ պատիժ, օրենք,
ես չեմ հասկանա.
Ի՞նչ կուզեք, ասեք,
ես դատում կանեմ,
իրավունք ունեմ
Անոթցած ասեմ
Չափովս ուտեմ:
Բա՛, էս օրենք է,
Դրժար բաները
ես եմ անողը,
Համով բաները
Ինքն է ուտողը
Թե գանձ կապողը:

Գ ինքնագրում արդեն և երկրորդ հրատարակության մեջ Խաչակյանը ավելորդ է համարել դատավորի հետ կապված միջադեպը, և Մհերն իր ասելիքն ուղղում է անմիջապես փոնապանին, որով, առանց միջնորդավորման, նրա բողոքը դառնում է ավելի նպատակասլաց:

Վիպերգի ինքնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խաչակյանը խորհել է ամեն բառի, նախադասության վրա, աշխատելով դրանք դարձնել, ըստ հնարավո-

րին, ավելի համոզիչ ու հստակ: Հիշենք այն հատվածը, ուր Մհերն իր բերդը կառուցելու համար տարոնեցիներից (առաջին տարբերակում՝ ջղիրեցիներից) պահանջում է վարպետների ու բանվորների: Առաջին տարբերակում Մհերը խոսքն ուղղում է բոլոր քաղաքացիներին՝ — է՛յ Զգիրցիք, կուտաք ինձի...

Երկրորդ տարբերակում բանաստեղծն ավելի հստակություն է մտցնում, նշելով, որ նրա պահանջը վերաբերում է միայն իշխան-տերերին.

է՛յ Տարոնա իշխան-ջոջեր,
Ականթոթափ
Ժողվեք բերեք, տվեք ինձի... և այլն:

Հաջորդ շտկումը վերաբերում է վարպետների ու բանվորների քանակին, որն առաջին տարբերակում հավասարեցված է (հազար-հազար...), մշակելիս տարբերակել է՝

Հարյուր վարպետ, որ վեմ տաշեն,
Հարյուր վարպետ, որ պատ քաշեն և ապա՝ հազար

բանվոր, մշակ և այլն: Այս հատվածը հիշեցնում է էպոսի երրորդ ճյուղում Մարութա վանքի վերաշինումը Դավթի կողմից:

Առաջին տարբերակում և ինքնագրերում, երբ Մհերը զնում է հոր ու մոր գերեզմաններին այցելության և պատմում իր անեկանելի վիճակի մասին, ծնողները ուղարկում են նրան Ագռավու այր, պատվիրելով՝

Քար քաղե՛,
Ավազ մաղե,
Լաց ու զղջա՛,
Որ Քրիստոս
Քեզի խղճա:

Երկրորդ հրատարակության ժամանակ բանաստեղծը
երկու բառի հավելումով ավելի իմաստավորել է պատկերը.

Հաց ու զղջա,
Որ Քրիստոս քեզի խղճա
Թողություն տա:

Ուշագրավ է վիպերգի վերջում Մհերի և ծեր հովվի
զրույցի հետ կապված մի փոփոխություն ևս, որի շնորհիվ
Երկրորդ տարբերակում այդ դրվագը որակապես և գաղափա-
րապես նոր երանգ է ստացել¹¹⁷: Հովվի այն հարցին, թե երբ
է դուրս գալու այրից, առաջին տարբերակում Մհերը պա-
տասխանում է.

Երբ ռամիկ ուզենա...

Ա ինքնագրում հատվածը մասնակի փոփոխություն է
կրել՝

Երբ ռամիկ ինձ ձեն տա,
Ազատվիլ կամենա,
Դուրս կուգամ ես էն պահ,
Որ զրկողներու
[Բռնավորներու]
Աշխարհն ավերեմ
Հիմեն ու ամեն,
Ռամկություն բերեմ,
Իրավունք ռամկին,
Որ ինք տեք դառնա
Իր աշխատանքին:

¹¹⁷ Պոեմի վերջը շատ է զբաղեցրել բանաստեղծին, որի մասին վկա-
յում են նրա բաղմամբիվ գրառումները: Ահա դրանցից մեկը. «Վերջը: Վեր-
ջի մասին խորհել: Թերևս այսպես՝ ես դուրս կգամ, երբ ժողովուրդը շատ
աղքատանա, թելը թելին երնեկ տա, քար կրծե, դանակը ոսկորին հասնի
ու ինձ կանչե, հառաչանքով, վրեժով...»:

Ջնջելով վերջին, մեր կողմից ընդգծված երկու տողը,
բանաստեղծն ավելացրել է՝

Ու նահատակվեմ
Մեջ էդ սուրբ կովին:

Այստեղ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել
մի հետաքրքրական փաստի վրա: Նախ, հիշենք, որ այս
մշակումը կատարված է Գ. Հովսեփյանի գրի առած պատու-
մի հիման վրա:

...Մհերն ու ուր ձին կը գան ախշար.
Նոր Մհեր կուտուրում կ'էնի,
Վերջ կը մարտիրոսվի¹¹⁸ (ընդգծ. իմն է—Հ. Ա.):

Առաջին մշակման մեջ, ավելի ճիշտ, այն տեքստում,
որ բանաստեղծն ուղարկել է Սիմ. Հակոբյանին՝ «Արեգում»
տպագրելու համար, այդ նախադասությունը եղել է, բայց
հանվել է խմբագրի կողմից: Սիմ. Հակոբյանը՝ 1922 թ. ապ-
րիլի 24-ի նամակում Ավ. Իսահակյանին գրել է. «...Ու նա-
հատակվեմ մեջ սուրբ կովին» խոսքը ես հանել եմ գիտակ-
ցաբար, որովհետև քո նամակներից մեկի մեջ գրել էիր, որ
եթե ուզում եմ՝ կարող եմ հանել: Հիշո՞ւմ ես, ամենից առաջ
ես քեզ գրեցի, որ այդ կտորը կարող է մնալ, բայց հետո,
երբ այդ մասը դու լրացրիր ուրիշ խոսքերով՝ ես իսկապես
ավելորդ գտա այն և հանեցի: Մանավանդ որ՝ ինչո՞ւ պետք
է անպայման նահատակվեր Մհերը սոցիալական պայքարի
մեջ, քանի որ կարող էր հաղթել և ապրել: Առանց այն էլ այ-
րի մեջ անցրած տանջանքները բավական են, իբրև նահա-
տակություն: Ավելի նահատակությունը կլինի ավելորդ»:
Ինքը՝ բանաստեղծը համաձայն է եղել այդ փոփոխմանը,
ինչպես երևում է 20-ական թվականներին վերաբերող նրա
մի գրառումից. «Գուցե ջնջեմ՝ «Եվ նահատակվեմ մեջ էդ

¹¹⁸ Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, Բ պատում, էջ 102:

սուրբ կռվին»»։ Եվ իսկապես, հաջորդ ինքնագրերում, ինչպես նաև երկրորդ հրատարակության մեջ նա լրիվ հանել է այս նախադասությունը։

Ի ինքնագրում հատվածը համարյա նույնն է (աննշան տարբերությամբ), իսկ Գ ինքնագրում այն արդեն ենթարկվել է որոշակի փոփոխության, որը և հիմք է հանդիսացել երկրորդ հրատարակության համար. բանաստեղծն այն դարձրել է ավելի կոռ, արտահայտիչ և գաղափարապես հագեցված։

Երբ շեղբն հասնի

Ոսկորին,

Ռամիկ կանչե

Մհերին,

Պատգամ տվավ Յասման Մհեր։

Իրոք, «հաղար-հաղար չար տարիներ հետո» ճորտ ու ստրուկ, բանվոր, մշակ կանչեցին Մհերին և բոլորը միասին ավերեցին չար աշխարհը, «բերեցին ռամկություն»։ Այսպես է վերջանում վիպերգի երկրորդ մշակումը (1938)։ Անխուսափելի ու անհրաժեշտ տրամաբանական այս փոփոխությունը սերտորեն առնչվում է պոեմի գաղափարական բովանդակության հետ, և, ինչպես բանաստեղծն է գրել, «վիպերգի տրամաբանական վախճանն է»։

«Սասմա Մհերը» մշակելիս Իսահակյանը հատուկ ուշադրություն է դարձրել նաև նրա գեղարվեստական որակը բարձրացնելու վրա, կատարել անհրաժեշտ փոփոխություններ ու շտկումներ, որից, անտարակույս, շահել է երկրորդ տարբերակը։ 20-ական թվականներին կատարված մի գրառման մեջ բանաստեղծը այս առիթով նշել է. ««Մհերը» չոր չգրել, կտրուկ, բայց նորեն գեղեցիկ, պերճ։ Նկարագրություններ, պատկերներ, համեմատություններ։

Օրինակ՝ արևով խարկված, անձրևով ցողված, աչքը որ ընկավ գեղացոց վրա, ասես թե կայծակը զարկեց նրանց գլխին։

Հավքերը՝ ոսկե, սիրուն և այլն: Սարի ծաղիկները...
Ժայռերը ամպերի մեջ, աղբյուրները՝ լեռներ...

—Օր կդատիք
Զոր կուտեք...
Պարապ կնստի
Մեղր կուտե:
—Ամպերն եկան հրով-ջրով,
Թուր շարժեցին, հուր ցաթեցին,
Հեղեղներով ջուր թափեցին...

—Մհերը:

Լախտն ձեռքն առավ,
Ճամփան ոտքն առավ:
—Ամպի վրա շինեց իր ամրոցը»:

Նոր ու զունագեղ արտահայտչամիջոցներով Իսահակ-
յանն առավել վառ ու կենդանի է պատկերել վիպերգի հերո-
սին: Մանուկ Մհերն առաջին տարբերակում նկարագրված է
այսպես.

Հոր պես վեմ-հսկա,
Աչքերը բոց-հուր
Մեջք ու բազուկներ
Պողպատիկ ու կուռ:

Երկրորդ տարբերակում դարձրել է՝

Հոր նման պարթև, աչքերն՝ ակն-արև,
Հայացքն՝ արծվենի, նակատն՝ արֆենի,
Մազերը բոց հուր,
Մեջք ու բազուկներ պողպատիկ ու կուռ:

Բանաստեղծը երբեմն մեկ-երկու բառ ավելացնելով կամ փոխելով ավելի արտահայտիչ է դարձրել Մհերի հոգեկան տվյալանքները։ Տեսնենք այդ կարգի փոփոխություններից մի քանիսը։

Ա. տարբերակ՝

—Մհեր զուրկ ու մերկ,
Անոթի, ծարավ,
Հախտը ձեռքն առավ,
Ճամբան ոտքն առավ...

Բ. տարբերակ՝

—Մհեր զուրկ ու մերկ, ծարավ, անոթի
Ու վտառանդի,
Հեռուն աչքն առավ,
Ճամբան ոտքն առավ...

Կամ, տանուտերի մոտ աշխատելիս, տեսնելով կյանքի անարդարությունները, Մհերը եզրակացնում է.

Ա. տարբերակ՝

—էս էլ կյանք չէ,
էս չար մահ է։

Ա. ինքնագրից սկսած մինչև երկրորդ տարբերակը բանաստեղծն ավելի ուժեղացրել է Մհերի խոսքը, ավելացնելով՝

—էս էլ կյանք չէ,
էս չար մահ է,
Հացն ու ջուրը էս պիղծ տեղի,
Օձու լեղի։

Առաջին տարբերակում Իսահակյանն այսպես է արտահայտել Մհերի զայրույթը, երբ հնձից հետո ումիկը մնում է ձեռնոռնայն՝

էս որ տեսավ
Կրակ վառվեց Մհերի ծոց:

Երկրորդ մշակման ժամանակ բանաստեղծը գտնում է
առավել արտահայտիչ տարբերակը.

էս որ տեսավ՝ կրակ ու բոց
Բռնկեցավ Մհերի ծոց:

Հիշենք մի քանի այլ օրինակ ևս.
Ա տարբերակ՝

Ու կալի մեջ
Դիզել շեղջ-շեղջ
Ոսկի ցորեն...

Բ տարբերակ՝

Ու կալի մեջ դիզել շեղջ-շեղջ
Յոլցլալեն ոսկի ցորեն.

Կամ, Ա տարբերակ՝

Եղավ իրկուն,
Մեկ աշտուն հաց տվին՝ ուտի...

Բ տարբերակ՝

Եղավ իրկուն
Ճորտերու հետ դառ ու դադրած
Մտավ մեկ հյուսի՝ գեջ ու խավար.
Իբար վրա եղան ծվար:
Մեկ աշտուն հաց տվին՝ ուտի...

Եվ կամ, Ա. տարբերակ՝

Ելավ զնաց
Մեկ ահագին քերձ ապառաժ
Ժեռ կողերեն սարի պոկեց
Դղոր-դղոր
Գլոր-գլոր...

Բ. տարբերակ՝

Վարգեց հասավ Քարֆե սարին
Մեկ ապառաժ վեմ վիթխարի
Ժեռ ֆաբերեն Քարֆե սարի
Մղեց, բերեց
Դղոր-գլոր
Դղոր-դղոր:

Պոեմի վերջում, երբ Մհերը մենամարտում է Սասնա ջու-
ջերի հետ և արյուն թափում, առաջին տարբերակում աս-
վում է՝

Սև լուրն հասավ Սասմա ականջ,
Ելան ժամի կոշնակ տվին...

Երկրորդ տարբերակում իրադրությունը շատ հարմար
պատկերով է սկսում բանաստեղծը՝

Սև ագռավի մռայլ կառանչ՝
Սև լուրն հասավ Սասմա ականջ:

Նկատենք, որ վիպերգը մշակելիս Խաչակյանն աշխա-
տում է օգտագործել ժողովրդական բանահյուսության որոշ
տարրեր, էպոսային կրկնություններ: Այսպես օրինակ՝ Մհերը
վտարվում է Սասունից և ճանապարհ ընկնում.

Գնաց ու հասավ Ճապաղջուրի դաշտ.
Որ եկավ հասավ Ճապաղջուրի դաշտ...

Կամ, այն հատվածը, ուր Մհերը երանի է տալիս հավ-
քերին.

Ելավ Մհեր սիրտը՝ խոլոր,
Միտքը՝ մոլոր,
Ճամփա ընկավ,
Ճամփան տեսավ՝
Սարի կանանչ մարմանդներով... և այլն:

Վիպերգի գեղարվեստական մշակման չափազանց բնո-
րոշ մի օրինակ է նաև այն հատվածը, ուր նկարագրված է
կյանքի դառնությունները ճաշակած Մհերի վերադարձը Սա-
սուն: Ահա առաջին տարբերակը՝

Ինքը թռավ,
Գնաց ելավ
Սասմա սարեր
Բանձր ու ահիկ,
Սասմա սարեր.
Էն անառիկ
Սեգ—Ծովասար,
Որ ամպերուն է հավասար:

Վերամշակելիս այս հատվածը բավականաչափ զբաղեց-
րել է բանաստեղծին. նա ձգտել է թանձր ու գունեղ պատ-
կերներով տալ Սասնա լեռնաշխարհի ինքնատիպ գեղեցկու-
թյունը.

Ու կրակված թռավ Մհեր,
Եկավ, ելավ
Սիմ ու Սասուն—Սասունա սար:

Սասունա սար՝ վեստ ու վիթխար,
Հանց երկնամուխ
Յըլի գլուխ,
Որ կը փնշե գոռ ու ահոիկ
Բուք—մըրըրիկ:
Կիրճերու մեջ Սասմա գետեր,
Հանց մերկ ու կեռ կայծակ-թրեր,
էն ձյունափառ սեգ Ծովասար,
Որ աստղերուն է հավասար:

Իսահակյանը ուշադրությունը կենտրոնացրել է նաև վի-
պերդի այն հատվածին, ուր Մհերը փակված է այրում.

Ամպեր կուգան՝
Հրով-ջրով՝
Մասըսա սարեն,
Վանա ծովեն
Ու Մհերի Դուռն ի վեր,
Ազոավու Քարի վրեն
Կըկայծկտեն,
Կը գոռգոռան
Կանցնին, կերթան:

Նրան չի բավարարել այս ձևը և սկսել է որոնել նոր,
ավելի գունազեղ պատկերներ (այդ են վկայում Ա, Բ, Գ ինք-
նագրերը), մինչև հասել է գոհացուցիչ վերջնական արդյուն-
քին.

Ու թիռ կուգան
Բադ-բադ ամպեր՝ հրով-ջրով
Լույս Մասիսի վեհ գագաթեն
Սիվան սարեն, Ծիպան ծովեն
Կայծակ կուտան
Ազոավու լերկ Քարի վրեն

Ու Մհերի գոց Դուռն ի վեր,
Կը գոռգոռան, կը ուրուտան
Փըխրին, կերթան:

Հետաքրքրական է նաև սրան հաջորդող՝ Համբարձման տոնի դրվագի մշակումը, որ, ինչպես երևում է, բանաստեղծը կատարել է ավելի ուշ: Սկզբնական տարբերակում և բոլոր ինքնագրերում այսպես է՝

Ամեն տարի¹¹⁹ օրն Համբարձման,
Ամեն փակ դուռ որ կբացվի,
Գեղ ու քաղաք կը վախենան՝
Թե կբացվի Ազոավու Քար և այլն:

Երկրորդ տարբերակում¹²⁰ բանաստեղծն ավելացրել է՝

Ամեն տարի օրն Համբարձման,
Երբ իրարու համբույր կուտան
Երկինք-երկիր, թե հուր ու ջուր,
Ամեն տարի օրն Համբարձման
Երբ կբացվի ամեն փակ դուռ և այլն:

Ցայտուն մի օրինակ է նաև Մհերի բերդի շինությանը վերաբերող հատվածը, որը երկրորդ տարբերակում առավել հղկված է ու արտահայտիչ: Բերդի անվան փոփոխությունը խորիմաստ է. առաջին տարբերակի «Մհերի Տապանը» բանաստեղծը դարձրել է՝ «Մհերի Քեն»:

Ու անունը բերդի դրավ՝
«Մհերի Քեն».
Անունը սոսկ, բերդի վրան
Մինչև էսօր սպառագեն
Գուռ պահապան¹²¹:

¹¹⁹ Ա ինքնագրում՝ «Ամեն տարի սուրբ համբարձման»:

¹²⁰ Գ ինքնագրում եղել է այնպես, ինչպես սկզբնական տարբերակում է, հետո անդրադառնալով՝ բանաստեղծը ջնջել է առաջին երեք տողը և ավելացրել վերոհիշյալ հատվածը:

¹²¹ Իսահակյանը փորձել է նաև «Մհերաշեն» ձևը, որից, սակայն, հրաժարվել է.

«Սասմա Մհեր» վիպերգի երկրորդ մշակման մեջ որոշակի տեղ են զբաղեցնում նաև կառուցվածքային փոփոխությունները, որոնց մեծ մասը սերտ առնչվում են գեղարվեստա-արտահայտչական միջոցներին, դեպքերի տրամաբանական ընթացքին, ինչպես նաև Մհերի կերպարին: Հիշենք Մհերի բերդի շինության հատվածը: Ինչպես ասվեց, կատարված կառուցվածքային փոփոխությունից շահել է երկրորդ տարբերակը: Եվ կամ՝ արտհունձի հատվածում, ուր Մհերը դառնանալով, «կրակն ու բոցը» սրտում՝ սկսում է խորհել «աշխարհի բանը»:

Օր ու գիշեր

«Ախ» կը քաշեր.

Աշխարհի բան միտք կաներ միտք

Աշխարհի բան հանց որ թույն օձ¹²²

Կըխեթեթեր սիրտն ու հոգին:

Ա, Բ, Գ ինքնագրերում, նաև երկրորդ տարբերակում Խաչակյանը այս վերջին երկու տողը տեղափոխել է պոեմի վերջը, այնտեղ, ուր այրում փակված «անմահ» Մհերը «մըտքում է» աշխարհի մասին և, իհարկե, այսպես ավելի ճիշտ է դտնված պատկերի տեղը:

Նորից անդրադառնանք Մհերի՝ փոնապանի մոտ աշխատելու դրվագին, ուր փականքը կոտրելու և հացն ուտելու համար նա արժանանում է տիրոջ զայրույթին ու սպառնալիքներին: Երկրորդ մշակման ժամանակ այս հատվածում կատարված կառուցվածքային փոփոխությունը, որի մասին արդեն խոսվել է, դրական արդյունք է ունեցել: Այդ դատավորի հետ կապված միջադեպն է, որը բանաստեղծը անտրամա-

Ու անունը դրավ բերդի «Մհերաշեն»

էն Օրվանեն մինչև էսօր

անունը սոսկ բերդի վրան

Սպառազեն դոռ պահապան:

¹²² Երկրորդ տարբերակում՝ «հանց որ իմ-օձ»:

բանական համարելով՝ երկրորդ հրատարակության ժամանակ հանել է:

Այս առիթով հիշենք մի կառուցվածքային փոփոխություն: Եթե չլիներ Իսահակյանի արխիվում պահվող, նրան պրած Սիմ. Հակոբյանի նամակը (1922 թ. ապրիլի 24, Վիեննա), կարող էինք ենթադրել, որ պոեմի սկիզբը՝ Մհերի ծննդին վերաբերող հատվածը, բանաստեղծն ավելացրել է կամ հետո, կամ մեղ անհայտ ինչ-որ նկատառումներով, դուրս թողել, քանի որ առաջին հրատարակության մեջ վիպերգը սկսվում է ուղղակի Դավթի և Խանդութի մահվան հիշատակումով: Պարզվում է, որ կրճատումը կատարել է Ս. Հակոբյանը. «...Գրում ես, թե «Սասմա Մհերի» մեջ սխալներ կան... Իմ կարծիքով, քո ուղածից պակասում է երկու բան.—մեկ՝ ծնունդը, որ ես դարձյալ պնդում եմ, որ տպագրության մեջ չգնես: Շատ ավելի լավ է այնպես, ինչպես սկսվում է: Մհերը որք է մնում հորից ու մորից հետո, և ինչ որ անում է այնուհետև, անում է անկախ իր իշխանական ծնողներից: Ամենևին լավ չէ, ներքին պայքարով միայն ապրող Մհերը այդ բանի համար նախատեսություն ստանա արտաքին պատերազմների մեջ իր կյանքն անցրած հորից»:

Իսահակյանը համաձայն չի եղել «Արեգի» խմբագրի կարծիքին և հիշյալ հատվածը, իրավամբ, հետագա հրատարակություններում վերականգնել է:

Հիշատակենք վիպերգի առաջին գլխում կատարված մի քանի հետաքրքիր փոփոխություն ևս. մանուկ Մհերին հորեղբայրն ուղարկում է հսկելու Սասնա հանդերը. նա, չկշտանալով տրված հացով, քաղցած է վերադառնում տուն և զանգատվում: Բողոքում է նաև տրեխները մաշվելուց: Առաջին տարբերակում ճնճղափորիկն ու կինը վտանգ են նախազգում Մհերից և մտածում վտարել Սասունից, ապա նոր նրան ուղարկում Սասնա հանդ ու հանդաստան հսկելու: Շատ ավելի պատճառաբանված է երկրորդ մշակման ժամանակ արված փոփոխությունը. որբուկին հանդերն ուղարկելու և նրա՝ քաղցած վերադառնալու հատվածը առաջ է տարվել,

ինչպես և այն հատվածը, ուր Մհերը պատկերված է բնության մեջ:

Սրան հետևում է Զոռանց փարախը փլվելուց ազատելու դրվագը, որ չկա առաջին տարբերակում, ապա Մհերի վերադարձը տուն՝ մաշված տրեխներով:

Առաջին տարբերակում Մհերը՝ հոտաղ եղած ժամանակ սարերում ու հանդերում թափառելիս պատահաբար է որսկանից իմանում իր ժառանգության մասին և գալիս է հորեղբորից պահանջելու այն: Զայրացած Ճնճղափորիկը նրան տանից դուրս է անում: Երկրորդ տարբերակում բանաստեղծն այդ դրվագը առաջ է տարիլ. պարզ է, յոթը տարի պապի մոտ մնալուց և ճշմարտությունն իմացած վերադառնալուց հետո Մհերն ավելի մտածված ձևով կարող էր դնել իր ժառանգական իրավունքների հարցը:

Վիպերգի կառուցվածքային փոփոխություններին, այս կամ այն առիթով, արդեն անդրադարձել ենք, ուստի և, կրկնություններից խուսափելու համար, այլևս մանրամասնորեն կանգ չենք առնի դրանց վրա, կնշենք միայն մի քանիսը: Այսպես, երկրորդ մշակման ժամանակ բանվոր տղալի մահվան հետ կապված դրվագը հա տանելով, բանաստեղծը ճիշտ է գտել դրա տեղը: Առաջ է տարված վայրի հավերթին երանի տալու հատվածը, իսկ երրորդ գլխի սկիզբը՝ «Ու կրակված թռավ Մհեր»-ից մինչև «էն ձյունափառ սեգ Ծովասար, որ ամպերուն է հավասար», ինչպես նաև Մհերի՝ վազրին պատառոտելու դրվագը հա են տարված:

Պոեմի մշակման ընթացքում Իսահակյանը հատուկ ուշադրություն է դարձրել նաև տեղանուններին, երկրորդ տարբերակում ավելացնելով դրանց քանակը, որն, անտարակույս, օգնել է նրան պահպանելու միջնադարյան կոլորիտը, ինչպես նաև տալու Սասնա բնաշխարհի գեղարվեստական պատկերը: Այսպես, օրինակ, երկրորդ մշակման ժամանակ ավելացրել է Մսրը, Կապուտկող, Լաթարա հող, Արև-Առինձ, Պղնձե քաղաք, ինչպես նաև Ճապաղջուրի դաշտ, Տարոնադաշտ տեղանունները. վերջինիս փոխարեն առաջին տարբե-

րակում հղել է Զգիրու դաշտ¹²³։ Զգիրու Շատ գետը դարձրել է՝ Արածանի, Տարոնա գետ։ Բոլորովին նոր են Անգղա գետ և Ծիպան ծով (Վանա ծով), ինչպես և Սասունա, Քարքե, Գրգուռ, Սիփան ու Սեղան (սարեր), Առյուծաբերդ, Մարաթուք՝ Ծծմակաքիթ, Սիմ ու Սասուն և Ծոփաց Դուռ տեղանունները։ Նշենք նաև, որ փորձել է Լաթարա հողի ու դաշտի փոխարեն գործածել՝ Վիշապա հող ու դաշտ (Ա ինքնագիր), Ծոփաց Դուռ անվան փոխարեն՝ Ծոփաց փոր (Բ) և Ծոփափոր (Գ), ինչպես նաև Սիմ ու Սասունի հետ՝ Յից ու Յասում ձևերը։

Լիզվա-ոճական տեսակետից ևս ակնհայտ է Իսահակյանի ձգտումը առավել հարազատ մնալու էպոսին և միջնադարյան իրականությունը։ Այդ մասին ունենք հենց իր՝ բանաստեղծի վկայությունը։ «Ինչպես եմ մշակել «Սասմա Մհերը»» սևագիր հոդվածում (1939) նա գրել է. «...Միջին դարերի լիզվական կուլտուրան տալու համար գործ եմ ածել արխաիկ բառեր, որոնք թեև հիմա չեն կիրառվում, բայց ապրել են միջին դարերում և սրանցից շատերը գործածական են մեր ժողովրդական բարբառների մեջ։ Ինձ թվում է, որ սրանք ոճավորում են էպոսը...»։ Իսահակյանի գրառումներում կան հենց այս բառերին ու դարձվածքներին վերաբերող տարբեր «բառթերթեր», մեծ մասամբ իրենց բացատրություններով, որ նա գործածել է պոեմի թե՛ առաջին և թե՛ երկրորդ տարբերակներում։ Բացի այդ, կան բավականին շատ դարձվածքներ, ասույթներ, աֆորիզմներ՝ առնված էպոսից և նշված՝ վիպերգում կիրառելու համար¹²⁴։

¹²³ Այս մասին տե՛ս նախորդ գլխում։

¹²⁴ Այդ նույն թերթիկներում գտնվում են նաև Վաղարշ Վաղարշյանի «Սասունցի Դավիթ» (Երևան, 1938) ողբերգությանը վերաբերող գրառումներ։ Դրանք առանձին մտքեր են, դիպուկ և հետաքրքիր նկատողություններ։ Ահա դրանցից մի քանիսը. «—Դավիթը շատ արդիական է։ Նրա էությունը պիտի բխե էպոսի էությունից»։ Կամ՝ «Դավիթի նախորդողական մասը, երկար է շատ թեև, բայց համով է։ Հարամիների մասը, քարայրը հեքիաթային է»։ «Այս դրաման—իրականության լավ, աջող կոնկրետացումն է»։ «Վաղարշի պիեսի մեջ սիրո քանակը դառել է որակ։ Որովհետև

Վերոհիշյալ սեագիր-հոդվածում իսահակյանը անդրադառնալով Թումանյանի «Սասունցի Դավիթին», զուգահեռ է անցկացնում երկու պոեմների միջև. «Իմ «Սասմա Մհերը» համեմատության կարգով ասեմ, որ իր ստեղծագործական մեթոդով, կառուցվածքով և լեզվական ֆակտուրայով հիմնովին տարբեր է Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ից: Հ. Թումանյանը շատ մեծ տաղանդով է «Սասմա ծռերի» չորս վարիանտից կատարել իր սինթեզը, առանց իր կողմից ավելացնելու նոր մոմենտներ, էպիզոդներ, հարազատ մնալով էպոսի կառուցվածքին և դրվագներին... Բարբառը վերածել է արևելահայ բարբառի, պահելով բնագրի հիմնական գործածությունը...»:

Ի դեպ՝ Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի մասին իսահակյանն իր կարծիքն արտահայտել է դեռ 1902 թ. հունիսի 21-ի՝ վերջերս հայտնաբերված նամակում (անտիպ), ուր անդրադառնում է նաև Մհերի կերպարին և էպոսի այդ ճյուղի գրական մշակման դժվարություններին. ««Սասունցի Դավիթը» մասին նորից կարդացի. միակ պակասությունը նրանումն է, որ բնության նկարագրեր չկան, բոռնք քեզ շատ կհաջողվեին՝ իբրև էպիկի, բայց որ Սասունը չես տեսել, ի՞նչ նկարագրես. իսկ այն ևս ճշմարիտ է, որ ամբողջ պոեմը, կարծես, լրջորեն, խորը մտածած չես գրել, հավատարիմ ես մնացել նախկին որոշմունքիդ—մանուկների համար—բայց ավելի լուրջ և ծանրախոհ կարելի էր գրել, ինչպես Ֆիրդուսու «Շահնամեն», Յորդանի «Նիբելունգը» և Հերդերի «Սիդը», որտեղ, բացի բուն նյութից կա և անհատական ստեղծագործություն. քոնը ուղղակի նյութի ոտանավոր, մի փոքր մշակված վերածումն է:

Ինչ ամենից շատ գրավում են ժողովրդական ոճերն ու դարձվածքները, որոնցով չափազանց հարուստ է, և մանավանդ էպիկական պատմելու ձևը—հանգիստ, վեհորեն հանգիստ, և հումորը. հույս ունիմ, որ խանդավառ սերը հաջող շատ է խոսում սիրո մասին»: «—էպոսը չի կարելի կոնկրետացնել բեմի վրա, պատկերացնել»:

դուրս բերես, բայց նախօրոք զգում եմ Մհերի անհաջողությունը.— Մհերը կիսատ, ջարդված հերոս է, լիքը հակասություններով. երևի պետք է նորանոր վարիանտներ գտնել՝ լրացնելու այդ պակասը. ժողովուրդը Դավիթին է սիրել ու սիրում, ու նրան հարստացրել է, իսկ Մհերին ատում է և այդ պատճառով նրանով շատ չէ զբաղվել, տալով ատելի մոռացության, արհամարհանքի...»¹²⁵:

Թումանյանը և Իսահակյանը որքան մեծ, նույնքան և տարբեր ստեղծագործական անհատականություններ են: Ընտրելով և մշակելով միևնույն սյուժեները («Քաջ Նազար» — «Աղա Նազար», «Կիկոսի մահը», «Գասպար»՝ հեքիաթ), նրանք գեղարվեստական մարմնավորման ժամանակ տարբեր մոտեցում են ցուցաբերել: Խոսքը մասնավորելով Թումանյանի «Սասունցի Դավիթ» և Իսահակյանի «Սասմա Մհեր» պոեմների մասին, պետք է ասել հետևյալը: Մշակման համար նրանք ընտրել են տարբեր ճյուղեր, տարբեր է նաև լեզվական ատաղձի ընտրությունը: Թումանյանի պոեմը հիմնականում գրված է գրական լեզվով, սակայն ժողովրդական ոճերի, բառ ու բանի օգտագործմամբ: Սա, թերևս, մանուկների համար գրված լինելու պատճառով է արված, չնայած որ պոեմն իր արժեքով բնավ էլ չի սահմանափակվում մանկական գրականության շրջանակներում, ինչպես և նրա շատ ուրիշ՝ մանկական համարված երկերը¹²⁶:

«Սասունցի Դավիթ» պոեմում դրսևորված է էպիկ Թումանյանի արվեստը, պատմողի, վիպողի անգերազանց ձիրքը:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ 1922 թ. «Արեգում» տպագրված Իսահակյանի մի բանի ստեղծագործությունների, այդ թվում նաև «Սասմա

¹²⁵ Թումանյանի ընտանիքի մոտ պահվող արխիվ:

¹²⁶ Ձեռնարկելով «Սասունցի Դավիթ» պոեմը, Թումանյանը, ինչպես ինքը խոստովանում է, նպատակ է ունեցել «երեխաների ու ժողովրդի ընթերցանությանը հարմարեցնել» (նժ, V, էջ 227):

Մհերի» մասին Հակոբ Օշականի՝ անհիմն մեղադրանքներով լի գրախոսականին¹²⁷։

Օշականը փորձել է համեմատել Թումանյանի և Իսահակյանի պոեմները և անիրավացի պնդել, որ «Պ. Իսահակյան շատ տեղեր գրեթե փոխ կառնե Թումանյանին բառ ու կշռույթ»։ «Սասմա Մհերը» մեզի համար անակնկալ մը չէ, երբ էջերուն վրա մյուսին, Թումանյանին ստվերը անդիմադրելի ճնշումով կծագի ինքն իրեն»,—գրում է նա և շարունակում՝ «Դժբախտությւնն է, որ նոր գործ մը այսքան հայտնի եղանակով հիշեցնե ուրիշ մը» (ընդգծ. իմն է—Հ. Ա.)։ Մինչդեռ, այդպիսի տեղ անհնար է ցույց տալ և ընդհանրապես սխալ կլինի այդ երկու ինքնատիպ ստեղծագործությունների նույնացումը, ինչպես և հակադրումը։ Իսահակյանը, ինչպես երևում է արխիվային նյութերից, մտադիր է եղել պատասխանել Օշականին, սակայն ինչ-ինչ նկատառումներով պատասխան հոգւվածը թողել է սեւագիր, անավարտ վիճակում։ Այդտեղ անդրադառնալով Թումանյանի և իր պոեմների «նմանությունը», Իսահակյանը գրել է. «Թումանյանի հետ ոչ մի նմանություն չունի. եթե պարոնը գտել է, որ ունի, պատճառը բուն աղբյուրներն են, երկուսն էլ օգտվել են վարիանտներից՝ և հետևապես միևնույն արսենալից, քաղելով, ստիլիզե անելով ժողովրդական լեզուն»։ Այնուհետև հոգւվածագրին «անհարմար» է թվում «պ. Իսահակյանի ոճը, որ պզտիկ ու միակ տողի վրա սպառող շունչեն կառնե իր սլացքը»։ Իսահակյանը օրինակներ բերելով համաշխարհային էպոսից, հավաստում է, որ «...վեպը միայն չի ձևավորված երկարատև տողերի մեջ, իսպանական «Սիդը»՝ Herder-ի մշակածը՝ շատ կարճ է։

Ֆինների «Կալեւալան» էլ՝ կարճ է, «էդդա» սկանդինավական էպոսների մեծ մասը կարճ է և շատ ուրիշները»։ «Ցանկացել եմ հավատարիմ լինել էպոսի ութմին, տաղաչափությունը և կիրառել եմ մեծ քանակով ալիտերացիաներ, որ էպոսին հատուկ է շատ»,—հավաստում է բանաստեղծը։

¹²⁷ «Բարձրավանք», Կ. Պոլիս, 1922, Դ թիվ։

Օշականը թերահավատորեն է վերաբերվում «Սասմա Մհերում» արծարծվող հիմնական գաղափարի ժողովրդական ակունքին, գտնելով, որ «ռամկի իրավունք», «ռամկություն բերողի» քիչ մը շատ պատեհապաշտ այս հավատավորությունը «սոցիալական» հատվածի մը համար կրնար գետին ծառայել: Բայց անիկա զետեղել ազգային ավանդության ծոցը, հանճարային ձեռնարկ մըն է ու պ. Իսահակյանի քարը շատ ազազուն է դիմանալու համար այդ բեռին»: Ապա նա եղրակացնում է՝ «...պ. Իսահակյան հիմնովին կշարափոխե հեքիաթը և մեր ժողովրդին կհագցնե տարազներ, որոնք մուրացված են դժբախտաբար»: Օշականի այս կարծիքը Իսահակյանը բացատրում է նրա «տգիտությամբ՝ ընդհանուր առմամբ մեր էպոսի և մասնավորաբար «Մհերի» զանազան վարիանտների նկատմամբ»: Եվ ապա նորից ապացուցելով իր իրավացիությունը, հավաստում՝ «Առնվազը 11 վարիանտ եմ կարդացել և իմ հատուկենտ ունեցածները, որ լսել եմ շատ տարիներ առաջ Կաղզվան և Բասեն (ռուսահայի), որ Մհեր պիտի դուրս գա ռամկություն բերի. պիտի նա մարտիրոսվի»:

Ուրեմն հայկական ծագում ունի»:

ԳԼՈՒԽ Դ

«ՍԱՍՄԱ ՄՀԵՐ» ՎԻՊԵՐԳԻ ԵՐՐՈՐԴ ԱՆԱՎԱՐՏ ՄՇԱԿՈՒՄԸ

1

1939 թ. աննախընթաց հանդիսավորությամբ տոնվեց «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի 1000-ամյա հոբելյանը, որի նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 1938 թվականից։ Տոնակատարությանն իր գործուն մասնակցությունն ունեցավ նաև մեծ վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, հանդես գալով հետաքրքրական հոդվածներով, ելույթներով ու ճառերով, ինչպես նաև «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» ուսումնասիրությամբ։ Ավգային էպոսի հոբելյանը առիթ տվեց բանաստեղծին՝ նորից անդրադառնալու իր վիպերգին, վերանայելու և ճշտելու որոշ հարցեր։ Այս մասին վկայում է Իսահակյանը՝ «Գրական թերթի» աշխատակցի հետ ունեցած զրույցում. «Մեր հոյակապ էպոս «Սասունցի Դավիթ» հազարամյա հոբելյանի կապակցությամբ գրում եմ մեկ հոդված, որտեղ խոսելու եմ այն մասին, թե ինչպես եմ գրել ես «Սասմա Մհերը», ինչպես եմ հասկացել մեր անմահ էպոսը և ինչպես եմ այն օգտագործել»¹²⁸։ Իսկ «Հայ գրականության տասնօրյակը Մոսկվայում» հոդվածում արդեն (1941) բանաստեղծն ասում է. «Օգտվե-

¹²⁸ «Գրական թերթ», 1939, հունիսի 30, № 18.

լով մեր ամենահարուստ ֆուկլորից, ես մշակեցի «Սասմա Մհեր» էպոսը և այժմ աշխատում եմ նրա վրա, լրացնելով այն»¹²⁹։ Այսպիսով, արդեն ավարտած իր վիպերգի նոր մշակումը Իսահակյանը սկսել է հենց տոնակատարության օրերին և շարունակել մինչև կյանքի վերջը՝ վերահաս մահվան պատճառով, ցավոք, այդպես էլ չկարողանալով ավարտին հասցնել այն։

«Սասմա Մհերի» վերջին մշակմանը վերաբերող բազմաթիվ սևագիր էջերը, ձեռագրային նշումները, պոեմի 1938 թ. առանձին հրատարակության վրա կատարած ուղղումները, գրառումները՝ վկայում են բանաստեղծի նոր, երկարատև ու հանգամանալից պրպտումների մասին։ Եվ այս ամբողջ նյութի խորն ուսումնասիրությունը պարզում է պոեմում կատարվելիք փոփոխությունների և լրացումների բնույթը։

Ի՞նչ փոփոխություններ է նախատեսել Իսահակյանը իր վիպերգում։ «Գրական թերթի» թղթակցի հետ ունեցած վերոհիշյալ զրույցի ժամանակ նա նշել է. «Շուտով կավարտեմ նաև «Սասմա Մհերի» 2—3 հավելյալ գլուխները»։ Պոեմի երրորդ մշակման սևագիր նյութերը հիմք են տալիս եզրակացնելու, որ «հավելյալ գլուխները» բովանդակելու էին՝ ա) Մհերի պայքարն օտար նվաճողների դեմ, բ) Մհերի սերը¹³⁰։ Արվելու էին նաև հավելումներ՝ վիպերգում սոցիալական բովանդակության խորացման ուղղությամբ։ Բանաստեղծը հատկապես աշխատել է ավելի հարստացնել ու ամբողջացնել Մհերի կերպարը, ընդգծելով նրա բնավորության բնորոշ գծերը, կատարել նաև կառուցվածքային փոփոխություններ։ Երրորդ մշակման ընթացքում առավել որոշակի է արտահայտվել Իսահակյանի միտումը՝ հարազատ մնալու հայկական ժողովրդական էպոսին, և վերը հիշված հիմնական գլուխների հավելումն էլ թելադրված է գլխավորապես

¹²⁹ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 268—269։

¹³⁰ Վաստակաշատ գրականագետ և բանագետ Արամ Ղանալանյանը պատմում է, որ նույն ժամանակամիջոցում վարպետի հետ ունեցած զրույցներից մեկը վերաբերել է հենց այս փոփոխություններին։

այդ ձգտումով: Դրանով պետք է բացատրել նաև այն, որ վերջին տարբերակում նա մտադիր է եղել վիպերգը վերջացնել Մհերի՝ քարայրում ընդմիշտ բանտարկությանը:

Խիստ ուշագրավ է մի փոփոխություն ևս՝ կապված Մհերի պայքարի գաղափարական իմաստի հետ. ռամկի ազատության պահանջն այստեղ վերաճում է հասարակ մարդանհատի բոլոր կապանքներից ազատ լինելու գաղափարին: Հայաստանի գրողների II համագումարի իր բացման խոսքում¹³¹, բնութագրելով հայկական ժողովրդական էպոսը, նրա հիմնական բովանդակությունը Իսահակյանը համարում է օտար նվաճողների դեմ պայքարի հետ մեկտեղ՝ «համամարդկային կռիվը հին, անարդար աշխարհի դեմ՝ նրա կործանման ի խնդիր, հանուն նոր, արդար և ազատ աշխարհի կառուցման: Կռիվ աստծու դեմ՝ ճակատագրի դեմ, բռնության դեմ՝ հանուն բացառձակ ազատության, բացառձակ մարդու»: Մեր ընդգծած բառերը արտահայտում են այն նպատակային խնդիրը, որ բանաստեղծն առաջադրել էր իր վիպերգի երրորդ մշակման ընթացքում:

Այժմ մեկ առ մեկ անդրադառնանք «Սասմա Մհերի» երրորդ մշակման ժամանակ Իսահակյանի ծրագրած փոփոխություններին և հավելումներին:

2

Մհերի պայքարն օտար նվաճողների դեմ.—Հայկական ժողովրդական էպոսի հիմնական պաթոսը հայրենասիրությունն է՝ պայքարն օտար նվաճողների դեմ: Դարեր շարունակ հայ ժողովուրդը կյանքի ու մահու կռվում աշխատել է պահպանել իր ինքնուրույնությունը, անկախությունը. «Նա պայքարել է շարունակ իր հայրենիքի պաշտպանության համար: Ինքնապաշտպանման, ինքնագոյության կռիվ է մղել միշտ»¹³²: Այս ամենի գեղարվեստական մարմնացումն է «Սասունցի Դավիթը»: Էպոսի հոբելյանական տոնակատա-

¹³¹ Ալ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 317:

¹³² ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, 1939 թվականի փետրվարին Թբիլիսիի ռադիոյով ունեցած ելույթից:

րությունը տեղի էր ունենում մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ սկսվել էր համաշխարհային երկրորդ պատերազմը. քաղաքական իրավիճակը պահանջում էր ժողովրդի մարտունակությունը բարձրացնող ստեղծագործություններ:

Հաշվի առնելով այս հիմնական հանգամանքը և ղեկավարվելով էպոսին առավել ևս հարազատ մնալու ձգտումով, Խաչակյանը ծրագրել է Մհերին կռվի դուրս բերել «իր երկրի թշնամիների դեմ, որոնք հրով ու սրով ծանր հարկերով ուզում են ստրկացնել Հայաստանը»¹³³:

«Սասմա Մհերի» երրորդ մշակմանը վերաբերող գրառումներում հանդիպում ենք այնպիսի ծրագրային նշումների՝ «Մհերը և արտաքին թշնամիները», «Մհերը կռվում է արտաքին թշնամիների դեմ», կամ՝ «Մհերը կռվում է ներքին և արտաքին թշնամիների դեմ: Ներքին՝ հարստահարիչների, շահագործողների, արտաքին՝ Մսրա դեմ, Մսրա Մելիքի ժառանգների դեմ, որ գալիս էին նորից հարկ պահանջելու, գալիս էին լծի տակ քաշելու հայ ժողովրդին» (40-ական թվ.):

«Սասնա ծռերի» բոլոր պատումներում բավականին ծավալուն և շատ հանգամանալից պատկերված է Դավթի կռիվը օտար նվաճողների դեմ և հաղթանակը: Մհերի գործողություններն այս ուղղությամբ շատ ավելի սահմանափակ են նկարագրված, և բանաստեղծը անհրաժեշտ է համարել օգտագործել նաև Դավթի հետ կապված որոշ մանրամասներ, քանի որ «Դյուցազն Դավթի մեջ լրիվ կերպով շոշափվում է հայ ժողովուրդը: Դավթի՞ն հայրենասեր է, ժողովրդասեր, ռամիկի և աշխատավորների պաշտպան, անձնուրաց քաջ է, մարդասեր և խաղաղասեր...»¹³⁴:

Ըստ Խաչակյանի ծրագրային նշումների՝ Մսրա Մելիքի ժառանգները գալիս են Սասունից քսան տարվա հարկը վերցնելու: Հակառակ դեպքում նրանք սպառնում են ավերել երկիրը: Մհերը ճանապարհին հանդիպում է հարկահաններին: «1941 թ. 10 հունիսի» թվագրված թերթիկում կարդում

¹³³ Ավ. Խաչակյան, Երկեր, հատ. 4, էջ 209:

¹³⁴ Նույնը, էջ 201:

ենք՝ «Այնտեղից Մհերը ելնում է, գնում է: Ճանապարհին ձիավորներ, ուղտերի քարավան. Մսրա-Մեկիքի թոռներն են՝ հարկի համար են եկել, սպառնալից: Մհերը կանգնում է նրանց առաջ. — «Ձեր եկած ճամփով ե՛տ դարձեք, թե չեք ուղում մեռնել. Մսրա Մեկիք ի՞նչ բան ունի էստեղ, Սասնա տերը Սասունն է, դուք ի՞նչ բան ունեք էստեղ»»: Մեկ այլ տեղ նա ճշտում է հանդիպման վայրը. «Երբ Մհերը գնում էր դեպի Պղնձե քաղաք, ուր տեսավ նա մի բանվորի մահճը, — մինչև հասնելը տեսավ մի խումբ ձիավոր է գնում, ոսկե սարքով, և ծառաները հտեններից վազելով...»: Ճշտում է նաև, որ հարկահավաքները ո՛չ միայն Մեկիքի թոռներն են, այլև Կողբադինի և Չադիի:

Իսահակյանի մտահղացման մասին առավել ամբողջական պատկերացում է տալիս 1944 թ. հունվարի 17 թվագրովյալ մեկ պրահումբը, վերնագրված՝ «Մհերը և արտաքին թշնամիները»: «...Մհերը դարբինի աշակերտ էր. սովորում էր խոփ, նիզակ, աշտե, սուր շինել, երբ մի օր լսեց, որ Մսրա Մեկիքի տղաները և ծառաները՝ Կողբադնու տղան և այլն... եկել են Տարոնա աշխարհը, խստորեն հարկ են պահանջում, ասելով. — «Դուք մեր հարկատուն եք, Դավիթը չկա, հիմի երկիրն անտեր է, մենք ենք Սասնա աշխարհի տերը, հին ժամանակվա պես»:

Ժողովրդի մեծերն ասում են. — «Երկիրն անտեր է, Դավիթը մեռել է. ո՞վ պիտի մեզ պաշտպանե, Ճնճղափորիկը ասել է, որ հարկը տանք, հնար չկա ուժի դիմաց ուժ դնենք»:

Մհերն ասում է. — «Ես կամ, երկրի տերը ես եմ, Դավիթ աթոռքի տերը ես եմ»:

Եվ կոտորելով մարցիներին՝ ասում է. — «Գնացեք հայրենիք, և իմացեք, որ Հայու աշխարհը տեր ունի, էլ ոտք չկոխեք, Մհերն է ձեր դեմ կռվողը՝ Դավիթի տղեն»:

Սրանից հետո է, որ վճռվում է բերդ շինել, հավաքել կտրիճներին և կռիվ մղել թշնամիների դեմ՝ ներքին և արտաքին, նոր, ազատ աշխարհ ստեղծել, որ աշխատող մարդն իր երկրի, հացի տերը լինի...»: Այս ծրագրային գրառումը

կատարելիս Իսահակյանը որոշ չափով հիմք է ընդունել Գ. Հովսեփյանի «Դավիթ և Մհեր» պատումը¹³⁵։

Իսահակյանն ուշագրություն է առել ժողովրդական ստեղծագործության միայն այս պատումում շեշտված մի հանգամանք. Մհերի ժամանակ Հայաստանն ասպատակելու հերթը հասել է արդեն Մսրա Մելիքի ժառանգներին։ Իր գրառումներում բանաստեղծը, ինչպես տեսնում ենք, նույնպես ընդգծում է, որ Մհերը գործ ունի Մսրա Մելիքի և մյուսների սղաների, թոռների հետ։ Որոշակի երևում է նրա միտումը՝ ցույց տալ, որ Մհերի կոիվը ոչ թե հասարակ ժողովրդի հետ է, այլ պատերազմը հրահրողների. «Մհեր լախտը քաշում է, զարկում է մեծերին, (ընդգծ. իմն է—Հ. Ա.) մյուսները փախչում են...»։ Կամ՝ «...Մհերը լախտը քաշեց, զարկեց. Մսրա Մելիքի թոռան գլուխը թռավ, մարմինը մնաց, Կողբադինի թոռան գլուխը թռավ, մարմինը մնաց, Զադիի թոռան գլուխը թռավ, մարմինը մնաց. մնացածները՝ ծառաները (ընդգծ. իմն է—Հ. Ա.) փախան Մսրա աշխարք...»։

Իր հոր՝ դյուցազն Դավթի նման, որը Մսրա բանակի վրա հարձակվելուց առաջ արթնացնում էր բոլորին, որ չասեն «Դավիթ գող էր, գող իրի, գող գնաց», Մհերը նախազգուշացնում է թշնամու զորքին և նրանց գլխավորողներին, թե՛ «Ձիերից իջեք և ի՛նչ ճամփով եկել եք, է՛ն ճամփով էլ ետ դարձեք։ Սասմա ժողովուրդը ձեզ հարկ տվող չէ, իր աշխարքի տերն է նա։ Գնացեք, թե որ չեք ուզի ձեր ոսկորները էստեղ թողնեք»։ Եվ հետաքրքրական է նաև այն, որ ավելի ուշ շրջանի՝ 50-ական թվականների սկզբի մի գրառման մեջ Իսահակյանը շատ որոշակի ծրագրել է ցույց տալ նաև հայ ժողովրդի մասնակցությունը օտար նվաճողների դեմ մղվող կռվում. այստեղ Մհերը մարտի է դուրս գալիս ո՛չ մենակ. «...Ժողովրդին, որ կանգնած էր հոծ, ասաց. «Հետս եկեք, երթանք Մսրա զորքը մեր երկրեն վանենք հեռու։ Ես գնացի»։ Ելավ, հասավ, զորքին ձենեց՝ ժողովրդի հետ, որ զինված են բրով, թրով, սրով, մանգաղով...

¹³⁵ Սասնա ծռեր, Ա հատոր, Ե պատում, էջ 228։

—Չքվե՛ք, կորե՛ք մեր երկրին, թե ոչ՝ մեղք ձեր վիզը։
Նրանք չգնացին, և բոռ (փող) զարկեցին, որ կռիվն
սկսեն. Մհերը ժողովրդով գրոհ տվեց նրանց վրա, մուրճը
ճոճեց, հարվածեց (փարտեց) աջ ու ձախ, շատ մարդիկ
ջախջախվեցին, մնացածները փախան... քամու պես փա-
խան...

Մհերը նրանց հետեից մուրճը լորտեց, ձգեց, մուրճը
հասավ զորքի մեջ ջարդեց, ջախեց, ջախջախեց...

Մհերը նրանց հետեից ձենեց.— «Չքվե՛ք, կորե՛ք, էլ
չդաք մեր հողն հայրենի»։

Իսահակյանն այստեղ նախատեսել է օգտագործել նաև
մի հիպերբոլիկ պատկեր, որը հիշեցնում է որոշ չափով
Դավթի կռիվը՝ Մսրա Մելիքի հետ. «Երբ Մհերը իրեն հայ-
րական երկրից քշեց ծեծելով, ջարդելով Մսրա Մելիքի ժա-
ռանգներին, նրա լախտը կամ մուրճը այնպիսի աղմուկ,
դղրդոց, ցնցում առաջ բերեց, որ հյուսիսի կողմի աշխարքը
կարծեց, թե ժաժք եղավ, որ հարավի կողմը կարծեց, թե՝
երկինքը փուլ եկավ երկրի վրա»¹³⁶։

Իսահակյանի նպատակն է եղել ցույց տալ, որ օտար
նվաճողները պատրաստվում են ասպատակել ողջ Հայաս-
տանը, ստրկացնել հայ ժողովրդին. և այս առումով նրա
գրառումներում զգացվում են որոշ հրանգային տարբերու-
թյուններ։ Մի տեղ Մսրա զորքը գալիս է հարկ պահանջելու
Սասունից, մեկ այլ տեղ նրանք «եկել են Տառնա աշխար-
հը», իսկ մեկ ուրիշ տարբերակում «Մսրա Մելիքի զարմը
սիրտ է արել գալու Հալոց աշխարհ» և մտնելու Լաթարա
հողը։ «է՛յ, որտե՞ղ ես Դավիթ, գլուխդ վերցրու էսօր եկել
են Լաթար, վաղը Տարոն, Սասուն...»,—գրում է բանաս-
տեղծը։

էս որ լսում է Մհեր, ասում է.—

Մհեր կա՝ Դավթի տղան,

Դավիթ կա՝ Սասմա իշխան։

Եվ հարձակվում է Մելիքի տղայի և զորքի վրա, մուր-

¹³⁶ Սասնա ծռեր, Ա հատոր, ԺԲ պատում, էջ 638։

ճով ջարդում է նրանց, մնացածները փախչում են, Մհեր ասում է,—«էլ չգաք Հայոց աշխարհ, ձեզի խրատ՝ զարմե-
զարմ»:

Նկատելի է, որ, հատկապես սկզբնական շրջանի գրա-
ռումներում, Իսահակյանը ձգտել է օգտագործել ժողովրդա-
կան ավանդույթյունները. «Մհերը մեկ մեծ քար վերցրեց,
շարտեց նրանց ետևից. քարը թռավ, ընկավ այսինչ դաշ-
տում, մինչև էսօր քարն էնտեղ է. 100 մարդ (40) մարդ, չի
կարող տեղից շարժել»: 30-ական թվականների երկրորդ կեսի
մի գրառման մեջ նա ճշտում է, որ այդ պարսատիկի քա-
րը «մինչև հիմա ընկած կա Մշու աշխարհում: Հոտաղները
իրենց շեղբը սրում են այդ քարի վրա»: Մեկ այլ տեղ այդ
քարը՝ «ահագին մի ժայռ ընկած կա մինչև էսօր Ջեզիրի
ճամբու վրա»: 1941 թ. հունիսի 10-ի գրառման մեջ բա-
նաստեղծն այն դարձրել է Մսրա դաշտ, սակայն ինքն էլ
տարակուսելով՝ կողքը հարցական նշան դրել:

Իսահակյանն այս ամբողջ հավելումը ծրագրել էր կա-
տարելու (ինչպես արդեն ասել ենք) Մհերի՝ Պղնձե քաղաք
մտնելու զրվագից առաջ: Գրառումների մեծ մասում՝ մսր-
ցիներին կոտորելուց հետո նա վերջում նշում է. «Մհերը
մտավ Պղնձե քաղաք», կամ՝ «...Մհերը գնում է, ուզում է
գնալ պապոնց երկիրը (Ծովյալ հաթունի, Աղնանց), մտնում
է Պղնձե քաղաք...». Մհերը «շարունակում է թափառել, անց-
նում է Պղնձե քաղաքի միջով...» (50-ական թվականների
առաջին կես). «Մհերը Մելիքի որդուն հալածելիս հետ դառ-
նալով անցնում է Պղնձե քաղաքի միջով...» (40-ական թվա-
կաններ):

3

Մհերի սերը.— Ինչպես բոլոր էպոսներում, այնպես էլ
«Սասունցի Դավթում» հիմնական տեղերից մեկը գրավում է
սերը, և Իսահակյանը ծրագրելով կատարել այս հավելումը,
նույնպես ղեկավարվել է ժողովրդական սկզբնաղբյուրին
առավել մոտ լինելու ձգտումով: Բանաստեղծի գրառումներն

ու սեագիր պատառիկները հուշում են այն մոտավոր սյու-
ժեն, որը պետք է ունենար այս գլուխը՝ վիպերգի վերջնա-
կան (երրորդ) մշակումից հետո:

Մհերը՝ վտարված հարազատ տանից (ըստ մեկ այլ
տարբերակի՝ Կապուտկողից) ճանապարհ է ընկնում, մտա-
ծելով՝ «գնալ, աշխարհ տեսնել»: Ճամփաբաժնին նա հան-
դիպում է երկու գուսանների, որոնք իրենց թագավորների
աղջիկների գովքն էին անում: «Իրանի ճամփու գլխին նըս-
տողը երգեց, գովեց Իրանի շահի՝ թագավորի աղջկա գովքը
(անուն): Մյուսը՝ Գյուրջի թագավորի աղջկա՝ Գոհարիկի
գովքը»: Մտածում է Մհերը՝ ո՞ր կողմ գնալ և որոշում մեկ-
նել Վրաստան: «Մհեր վազեց թռչուններից ցած՝ թռփերից
բարձր՝ դեպի Վրաստան»,—կարդում ենք 1939 թ. գրառման
մեջ: Մհերի հակումը դեպի Գյուրջի թագավորի աղջիկը բա-
ցատարվում է նրանով, ըստ մեկ այլ գրառման, որ «ավելի
գրավիչ էր նրա գեղեցկությունը»: Բերում ենք պոեմի ամե-
նավերջին մշակման փորձերից մի հատված, այս մասին վե-
րաբերող.

Վարդեց հասավ Արծվակատար,
Աստղաբերդի տակ քուն մտավ.
Վարդեց հասավ Սոսաց անտառ,
Վարազաձոր իջավ
Լուս-աղբերից ջուր խմեց
Եկավ-հասավ Վիրաց աշխարհ...

Ըստ մի քանի այլ տարբերակների, Մհերը գուսաններին
տեսնում է նստած «կամուրջի ծայրերին» և նրանցից «մեկը
գովում էր վրաց թագավորի աղջկան, մյուսը՝ Ալանաց, Բա-
ղաց, կամ Պարսից (Իրանի)» (30-ական թվականների երկ-
րորդ կես): Եվ նորից դուրսազնը նախապատվությունը տա-
լիս է Վրաստանին:

Կարմունջի մեջտեղ, իրար դեմ ու դեմ
Նստել էին երկու գուսան:
Մեկը գովքն էր անում (կաներ)
Նլաթի թագավորի աղջկա,

Մեկեւր Վրաստանի թագավորի աղջկա...
Լսեց գովքերը —
Սիրտը տարավ Վրաստանի աղջկան
Ու ճամբա ընկավ Վրաստան:
Հասավ Մսխեթ.
Աղջկա դույակի առաջ...

Մի աեղ բանաստեղծն ավելի է կոնկրետացնում տեղը՝
«Առաքսի կամուրջի սնարին, գլխին, սկզբին նստել էր մի
զուսանը՝ բամբիռը, փանդիռը, տավիղը ձեռին, նվագում էր
ու գովերգում Վրաց աշխարհի բամբիշին»։ Մեծ քնարերգուն
աշխատել է որքան հնարավոր է ավելի հմայիչ ու գեղեցիկ
ներկայացնել Մհերի սիրած էակին։ Վիպերգի 1938 թ. առան-
ձին հրատարակության վրա նա կատարել է հետեւյալ գրա-
ռումը.

Վրաց Գոհարիկը նման էր
Յոթ սարերի ետեւն
Ծագող արեգակին,
Յոթ ծովերի վրա կամար կապող
Արեգակին:

Գալով, հասնելով Մցխեթ և մոտենալով Գոհարի հոր
թագավորական պալատի դարպասին, նա

Երեք հեղ թակեց դուռը
Եվ նստեց խնամաքարին:

Սկզբում դռնապան-հսկաները բաց չեն անում դուռը.

Տեսան Մհերին՝ ձի շունի, ձիապան շունի,
Ոտքով,—
Ներս չառան.

Մհեր աջ ձեռքով մեկդի նետեց
Մեկ պահակին, ձախ ձեռքով՝ մեկեւրին:
Մտավ ներս...

Ըստ մի քանի այլ տարբերակների, դռնապան Համդուլն է նրան դիմավորում՝ Համդուլի տղան, և տեսնելով Մհերին առանց զենքի, զրահի, ձիու և ձիապանի, և չճանաչելով, բարկանում է. «Դու՛ էիր պակաս, խոզարած տղա»: Բայց երբ Մհերը նայում է նրա աչքերին, Համդուլից յոթ գոմեշի ուժ պակասեց: Վախեցավ, ձենը փորն ընկած ասաց.

—Համեցեք ներս, ներող եղիր.
Մի հարցմունք անեմ. ո՞ր իշխանի տղան ես:
—Սասմա տան ծուռն եմ,
Ազնանց Դավիթի...

Վրաց թագավորի պալատում հավաքվել էին արդեն յոթ թագավորների ուզնկան-տղաները, որոնք եկել էին խնդրելու Գոհարիկի ձեռքը և ոչ մի կերպ չէին կարողանում տիրել գեղեկուհու սրտին. դրանք էին՝

Ալանա թագավորի տղան,
Առանա թագավորի տղան,
Իրանա թագավորի տղան,
Թուրանա թագավորի տղան
Լիկի թագավորի տղան:

Գոհարիկը նրանց առաջարկել էր մրցման դուրս գալ: 1937—39 թթ. վերաբերող սևագրով յուններից մեկում բանաստեղծը գրում է.

Լուրը քաղաքի Գոհար խաթունին,
Թե Մհերն է՝ Դավիթի տղան՝ Սասման.
Ներս մտավ Մհեր, տեսավ յոթ թագավորի տղերք,

Մեկը պակաս. նայեց, տեսավ Գոհարին,
 Աչքը տեսավ, սիրտը սիրեց.
 Գուրզն առավ, զոռաց թագավոր<ների> տղոց վրա.
 —Քաշվեք, գնացեք, ինչ ճամփով որ եկել եք.
 Գոհար խաթունն իմս է...

Եվ Գոհարիկը նրան նույնպես առաջարկում է մասնակցել մրցությանը. «Զէ, Մհեր, պիտի ձեր հնար-հնճարքը, ուժն ու շնորհքը ցույց տաք. ո՞րն որ հաղթեց, գինին էնոր հմ տալու՝ իմ սրտիս հետ»։ Մհերը համաձայնվում է չափել ուժը հսկաների հետ.

Միծաղեցին նրա վրան յոթն հսկաներ:
Զի չունես, ձիապան չունես,
Թուր չունես, նիզակ չունես,
Վահան չունես, զրահ չունես,
 Նետ չունես, աղեղ չունես,
Ոչ ձիապան,
Ոչ նիզակակիր,
Ոչ կապարճակիր.
Ո՞վ ես, որ մեզ հետ մրցես,
Դու ուամիկի մին, ճորտ:
—Մհերն եմ ես, Դավթի տղան,
Ջողանց տներն:
[Ու մեկ-մեկ նայեց թագավորների
 <տղաներին,>
Ամեն մեկեն յոթն գումշի ուժ պակասեց]:

Հետաքրքրական է, որ տարբերակներից մեկում վրաց արքայադստեր անունը ոչ թե Գոհար է, այլ Թամար-խաթուն, ըստ երևույթին վրաց աշխարհին ավելի հարազատ լինելու միտումով: Մհերը հասնում է Մցխեթ (Մեսխեթիա) այն պահին, երբ Թամարը բազմել էր պատշգամբում, իսկ սրահում հավաքվել էին մրցման պատրաստ յոթ թագավորազներ:

Գեղեցկուհու ձեռքին կար ոսկե խնձոր, որ նա պետք է նվիրեր հաղթողին՝ իր սրտի հետ։ Ծրագրային գրառումների սևագիր տողերում անգամ ականերե է բանաստեղծի լիրիկական շունչը. կարդալով այդ տողերը, ակամա վերհիշում ենք «հին ժամանակ իր ամրոցում ոսկեղեն» բնակվող և «հեռավոր տեղերեն» իր «երազի ասպետին» սպասող «հուր ու հրաշք աղչկան», որին պատշգամբում տեսնելով մի ականթարթում սիրահարվում է «կանաչ-կտրիճ իշխանը»¹³⁷։ «Երբ Մհերը տեսավ Թամարին ոսկե պատշգամբում, ոսկե աթոռքին նստած, ոսկե հագուստներով,—ինչ որ յոթն սարի հտեհից առավոտու արևը ծագեր, յոթն ծովերու վրա ծիածան կապեր,—մոտեցավ, զուրվը դրեց Թամարի պալատի շեմքին, որի աջ ու ձախ կողմը՝ առյուծ և վագր կար, իբրև պահապան, շղթայի զարկած,—ասաց բոլորին.—Թամար խաթունը իմ հարսն է, մարդ չիշխնա էս շեմքեն անցնել։

Թամարն ասավ.

—Մհեր, Դավթի տղա,
Յոթն թագավորի տղա եկել են
Ինձ հարս կուզեն իրեն համար,
Ով որ հաղթե—ես նրանն եմ...

Եվ սկսվում է մրցումը»։

Իսահակյանը շատ է խորհել մրցման ձևերի մասին, աշխատելով օգտագործել էպոսին առավել բնորոշ միջադեպեր ու պատկերներ։ Այսպես, 30-ական թվականների երկրորդ կեսի մի գրառման մեջ կարդում ենք. «Առաջ յոթ լուծ գոմեշներին հտ է քաշում։ Երկրորդ մրցումը՝ աղորիքի բլուրն ի վեր. երրորդը նետը արձակում է՝ մտնում է մեջը և տանում հեռու, հեռու, մինչև էսօր»։ 1937—39 թթ. վիպերգի վերջին մշակման սևագրություններից մեկում փեսացուները մկունդ են գցում. «Մհերի մկունդն անցավ յոթն անգամ ավելի»։ Մեկ ուրիշ տեղ որոշվում է 40 լուծ գոմեշներին «ճիպտի հարվածներով քշել, որ փեսացուները պիտի ձեռքով

¹³⁷ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 2, էջ 166։

քաշեն, ետ բերեն...»: «Մհերն ու Թամար-խաթունը» վեր-
նագրով գրառման մեջ նա նոր նրբերանգ է մտցնում այն
առումով, որ էպոսային 40 լուծ գոմեշների շարքը քաշում,
տանում է իր հետ թագավորազներին, իսկ «Մհերը գոմեշ-
ներին ետ դարձրեց»: Մրցման մի այլ տարբերակում (նույն
գրառման մեջ) բանաստեղծը մտադիր է եղել օգտագործել
ժողովրդական ավանդույթները. «Մհերը ջաղացի մեծ քարը
գլորեց սարն ի վեր, <որ> գնաց և սարի գլխուն կանգնեց.
մինչև էսօր կանգնած կա էնտեղ, սարի գլխուն, Մհերի ձեռքի
նշանը վրեն»:

Մրցման մասնակցող փեսացուները ամոթահար հեռա-
նում են, իսկ հաղթական Մհերը, տիրանալով աղջկա սրտին,
խոստանում է նրան՝

Երթամ Սասուն,
Տեր դառնամ իմ հոր
Հողին ու գածին,
Գամ քեզ առնեմ, տանեմ մեր տուն, Սասուն:

Այս տարբերակում սիրո միջադեպը բանաստեղծը մտա-
դրվել էր տեղավորել Մհերի՝ Կապուտկողից Սասուն մեկ-
նելու ճանապարհին, երբ նա քեռուց իմանալով ճշմարտու-
թյունը հոր ժառանգության մասին, գնում է հորեղբորից
պահանջելու այն: Ահա մի հատված այդ մշակման փորձերից.

Մցխեթեն մինչև Շիրակա դաշտ
յոթն օրվա ճամբա է,
Մհեր գնաց մեկ շնչով.
Շիրակա դաշտեն մինչև Արծն քաղաք (մինչև
Սրմանց դուռ)

յոթն օրվա ճամբա է,
Մհերը գնաց մեկ շնչով.
Արծն քաղքեն մինչև Սասուն
յոթն օրվա ճամբա է,

Մհերը գնաց մեկ շնչով.
Մցխեթեն Սասուն, յոթն օրվա մեջ
Վարդեց հասավ բանձրաթոռ Սասուն.
Որ եկավ Սասուն, ծունր իջավ գետին
Համբուրեց հողը...

Պահպանվել է նաև այս հատվածին վերաբերող մեկ այլ
մշակում՝ ավարտուն մի ֆրագմենտ (30-ական թվ. վերջ.),
ըստ որի Մհերը Գոհարին հանդիպում է արդեն Սասունից
վտարվելուց հետո: Մեջ ենք բերում ամբողջովյաժմբ.

Մհեր երկաթե տրեխներ հագավ,
Կապեց պիրկ մեջքին երկաթե գոտին,
Հեռուն աչքն առավ,
Ճամփան ոտքն առավ,
Ելավ սարերով,
Ձորերով իջավ,
Ու կերթար նորեն ու չգիտեր՝ ուր:
Միտք կաներ Մհեր, թե դառնար, երթար
Պապոնց տունը հտ,
Քեռին մեկանց նոր
Անարգեր պիտի ու ճամփեր նորեն
Հորեղբոր վրեն:
Թե դառնար—երթար Գոհար խաթունին՝
Ձտիրած իր հոր հող ու աթոռքին,
էսպես զուրկ ու մերկ ու վտարանդի,
էլ ի՞նչ հրեսով հրենա պիտի
Գոհար խաթունին:
Միտք կաներ նորեն ու կերթար, կերթար
Չգիտեր, թե ուր:
Միտք կաներ Մհեր.
Թե երթար, ժուռ գար հեռու հրկրներ,
Ու աշխարհ տեսներ, անցներ ժամանակ,
Ետ դառնար Սասուն...
Ու գնաց, գնաց, հասավ Ճապաղջուր.
Որ եկավ, հասավ Ճապաղջուրի դաշտ...

Նպատակահարմար ենք գտնում մեջ բերել նաև մեկ այլ ծրագիր-գրառում, որը որոշ չափով տարբերվում է նախորդներից, հատկապես իր վերջավորությամբ: Քեռանց տանից հեռանալով՝ հայրական գանձերին տիրանալու համար, Մհերը հանդիպում է Գոհարիկին և խոստանում գալ նրա ետեվից, երբ կտիրանա «հոր աթոռքին»: Նա գնում է Սասուն, ընդհարվում հորեղբոր հետ և դալիս, հասնում ճամփաբաժնին. «Երեք ճամփա ձգվում է առաջ. խորհում է՝ գնամ Գոհարիկի հոր մոտ, ասեմ՝ իմ հորեղբայրը վտարեց, ես կարող էի նրան սպանել, տիրել, չուզեցի արյուն թափել, դու նրան համոզիր, իմ տեղը ինձ տա: Թե գնամ քեռուս մոտ, քեռուս խնդրեմ, թե գնամ իմ մեծ մոր՝ Ծովյալ խաթունի երկիր, նրանց մեծ տանը ապրեմ, ծառայեմ այնտեղ, մինչի իմ հորեղբայրը դարձ գա, արդարություն անե, իմ հորեկան <ժառանգությունն> ինձ տա: Գնամ Ծովյալ խաթունի երկիր, աշխարք տեսնեմ, մի ժուկ անցնի: Ասում է ու գնում դեպի այնտեղ...»: Այս հատվածում Իսահակյանը մեկ անգամ ևս հաստատում է Մհերի բարությունը, նրա լավատեսությունը. նա չի ուզում զուր տեղն արյուն թափել և միևնույն ժամանակ միամտորեն հավատում է դուռ, որ չարն ինքն իրեն կարող է փոխվել՝ հորեղբայրը ժամանակի ընթացքում կարող է «դարձի գալ»:

Այս բաժնին վերաբերող ծրագրային գրառումների և սևագրությունների համադրումը «Սասունցի Դավթի» պատումներին մեզ բերում է հետևյալ եզրակացության. էպոսում զգալի տեղ է տրված Դավթի և Խանդութի սիրո ու ամուսնության նկարագրությանը: Իսահակյանը Մհերի սերը նկարագրելիս օգտագործել է նաև երրորդ ճյուղի որոշ մանրամասներ: Հիշենք թեկուզ Մհերի հանդիպումը Գոհարիկի գովքն անող աշուղներին: էպոսում այդ փաստը վերաբերում է Դավթին, և Իսահակյանն այն վերագրելով Մհերին, միջադեպն ավելի քնարական է դարձրել¹³⁸: Թերեւս այս կապակ-

¹³⁸ «Սասմա Մհերին» վերաբերող գրառումներում կան բանաստեղծի ձեռքով ժողովրդական մի քանի պատումներից արտագրած հատվածներ՝ «Գուսանների գովքը և. խաթունին» վերնագրով:

ցությամբ է նա 30-ական թվականներին վերաբերող մի զրառման մեջ կատարել հետևյալ նշումը. «Մհերի սերը գրելիս օգտվել գուսանների սիրու երգերից: Նրանց պատկերներից, մետաֆորներից, բառերից»:

Կ. Մելիք-Օհանջանյանի պատումի¹³⁹ համաձայն, խանդութը Վաչո-Մարջոյի աղջիկն է և բնակվում է Կաղզվանում: Իսահակյանի սեագրություններում մի տեղ կա այդպիսի մի ակնարկ.

Գնաց Մեսխեթա, Մցխեթա—
Վարչո թագավորի աղջկա մոտ
(վարչո պարսկերեն, վրացի):

Գուցե և սա է բանաստեղծին հուշել Մհերին Գյուրջըստան հարսնախոսության ուղարկելու միտքը: Այնուհետև նույն պատումում նկարագրված է, թե ինչպես աշուղը

էկավ, գեղի տակ, կարմունջ մի կար.
Կարմընջի գլուխ կայնավ, միտք էրեց... և սկսում
է խանդութի գովքը:

էդի որ աշըղ կ'ըսեր,
Դավիթ դարձեր էր նեճրութենից,
Գ'նկեր դեմի ուրենց տուն:
Իրիկուն էր. էդ կարմընջի գլուխ կայներ էր,
Աշըղի ըսուկ յանգան կ'եներ (ընդգծ. իմն է—
Հ. Ա.):

Կամ մեկ այլ պատումում՝ «Աշուղը նստավ էն ճանպուղ ողջն, ինչտեղից Դավիթն տուն կ'իգար»¹⁴⁰ և այլն: Մենք այս մանրամասներն ուշադրության ենք առնում, քանի որ սրանք բացակայում են «Սասնա ծռերի» չորրորդ ճյուղում: Մհերի ամուսնությունն էպոսում շատ ավելի տարբեր է. Մ. Աբեղյանի և

¹³⁹ Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, Ը պատում, էջ 305:

¹⁴⁰ Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, ԺԲ պատում, էջ 198:

Բ. Խալաթյանի դրի առած տարբերակներում Մհերը ճանապարհին հանդիպում է մի պառավ կնոջ, որը խոստանում է նրան կնության տալ դստերը՝ Գոհարիկին։ Մի քանի այլ պատումներում Գոհարը Հալաբա թագավորի աղջիկն է։ Մհերը որսորդության ժամանակ բռնում է նրա հորը և վերջինս խոստանում է ամուսնացնել նրան իր աղջկա հետ։ Տարբերակներից մեկում Մհերը գնում է Գոհարիկին բերելու Բաղդադից, հակառակ նրա խալիֆա հոր կամքին, իսկ մի քանի այլ պատումների համաձայն, Դավիթը Գոհարիկին բերում է Ադրբեջանից և հետո ամուսնացնում որդու հետ¹⁴¹։ Ի դեպ, մի քանի պատումներում (օրինակ՝ Ս. Հայկունու «Դավիթ և Մհեր») Դավիթը գնում է Գյուրջստան խանդութի համար սպասուհի բերելու¹⁴²։

Գ. Հովսեփյանի պատումում Գոհարը Պաճիկ թագավորի աղջիկն է և Մհերը նրա հետ ամուսնանում է հայրերի՝ նախօրոք կնքած ուխտի համաձայն։ Հետաքրքրական է, որ այս փաստը Իսահակյանը ուշադրության է առել, ինչպես երևում է 1937—1939 թթ. հետևյալ սեպտեմբր հատվածից.

Գնաց Պաճեկ, Պաճո թագավորի աղջկա ապարանքի
դուռը.

Դռան աջու դին շղթայով առյուծ էր կապած.

Դռան ձախու դին շղթայով վազր էր կապած:

Մարդ չեն թողնի՝ ներս մտնի:

Թագավորի աղջիկը պատուհանեն կնայեր.

Գոհարիկը. դեմքը, գեղեցկութունը...

Չափազանց բնորոշ է Իսահակյանի համար՝ ժողովրդական անսպառ նյութի մեջ իրեն հարկավոր, առավել դիպուկ

¹⁴¹ Նա մտադրվում է գնալ Գյուրջստան ընկերների համար հարսնացուներ բերելու, բայց մի Խլեոր խորհուրդ է տալիս գնալ Ադրբեջան. ալեվորն, ըստ վեպի, հրեշտակ էր և ուղում էր Ադրբեջանն աստվածապաշտ դարձնել:

¹⁴² Սասնա ծռեր, Ա հատոր, Ը պատում, էջ 360:

փաստերն ու նրբերանգները թե՛ Դավթի, թե՛ Մհերի ճշուղերից գտնելը և շատ տեղին օգտագործելը: Այսպես, իբրև սիրո և հավատարմության նշան, Խանդութը խնձոր է տալիս փեսացուին կամ աշուղի միջոցով նրան ուղարկում իր մատանին: Իսահակյանի գրառումներում՝ երբ Մհերը հաղթում է մրցասպարեզում՝ «Թամարը խնձոր նետեց Մհերին» կամ՝ «Գոհարիկ տվեց (ասենք մի փունջ մաղ՝ ծամ, կամ մատնիք)...»:

Գ. Հովսեփյանի պատումում¹⁴³ Մհերն ամուսնանում է Գոհարիկի հետ և դառնում Ադրբեջանի թագավոր, և երբ Ձենով Հովանը նրան օգնության է կանչում՝ հանկարծակի ներխուժած թշնամուց ազատելու Սասունը, նա մեկնելուց առաջ պատվիրում է կնոջը.

Կ'առնիս զիմ գո՛ւրզ, տո՛ւռ կը դնիս, էստեղ կը մնա.
Ինչ փալավանքտիր կը կ'ան,
Գո՛ւրզ կը տեսնին վար տռան,
Քեզի նեղութին չին ի՛տա.
Կ'ասին Մհեր տան քինուկ ի...

Այս փաստը հետաքրքրել է Իսահակյանին, և համարյա բոլոր գրառումներում Մհերի գուրզը (երբեմն նաև լախտը) նրա ուժի և հաղթանակի խորհրդանիշն է¹⁴⁴. Երբ Գոհարիկին տիրանալուց հետո Մհերը պատրաստվում է գնալ Սասուն, «Գուրզը կամ լախտը ծանր, դնում է աղջկան դռան առջև, որ իմանան Մհերինն է՝ ի սարսափ» (30-ական թվ. երկրորդ կես): «Իսկ Մհերը իր գուրզը դրեց Գոհարիկի դռան առջևը, որ մարդ չմոտենա», կամ՝ «Լախտը դնում եմ դռանըդ, որ մարդ չմոտենա, ես կերթամ Սասուն...» և այլն:

Մեր էպոսի մի քանի պատումներում, Դավթի ճշուղում (որոշ պատումներում նաև՝ Սանասարի ճշուղում) Խանդութի դռնապանն է Համդուլը: Իսահակյանը մի փոքր շեղում կա-

¹⁴³ Սասնա ծռեր, Ա հատոր, Ե պատում, էջ 222:

¹⁴⁴ Մհերի գուրզի մասին Իսահակյանը նշել է նաև այլ առիթներով.

տարելով էպոսից¹⁴⁵, Գոհարի դռնապան ներկայացնում է Համդուլի տղային՝ Համդուլին, որ սկզբում չի ճանաչում Մհերին, իսկ երբ վերջինս նայում է նրան, «...յոթն եղան (վագրի? գոմշի?) ուժ պակասեց...»: Նույն ձևով, ի դեպ, ուժաթափ են լինում նաև Գոհարիկի փեսացու-փահլեանները՝ տեսնելով Մհերին (ինչպես էպոսում, Իսահակյանի մշակումներումն էլ նրանց թիվը 7 է կամ 40)։ Ճիշտ այնպես, ինչպես Դավիթն է ազդում իր ախոյանների վրա։

Տեսավ՝ քառսուն փերիզ էնտեղ նստուկ ին։

Ինչ աչք կսլավ Դավթին,

Քառսունի ձեռ-ոտն թո՛ւցավ հախու¹⁴⁶...

Ինչպես վերը նշեցինք, Իսահակյանին շատ է զբաղեցրել Գոհարի փեսացուների հետ Մհերի մրցության դրվագը և դրանով բանաստեղծը հաստատել է Գոհարիկի՝ Մհերի սիրույն արժանի աղջկա կամային բնավորությունն ու ազատասեր ոգին։ Փեսացուների հարստությունը չէ, որ գրավում է Գոհարին (նրանք բոլորը թագավորազնեք էին), այլ նա սեր և հավատարմություն է խոստանում ամենաքաջին, ամենաուժեղին և հնարամիտին։ Իսահակյանին հատկապես հետաքրքրել է մրցման ձևերից մեկը՝ մատանու միջոցով։ Հայտնի է, որ «Սասունցի Դավթի» պատումներում Մհերը մրցման է դուրս գալիս ո՛չ թե փեսացուների, այլ հենց Գոհարի հետ, որը նրան ներկայանում է ծպտված՝ տղամարդու զգեստով, որպես Գոհարի եղբայրներից մեկը։ Սա առավել արտահայտիչ նկարագրված է Կ. ՄԼԻԻՔ-Օհանջանյանի տար-

«Մհեր բերդը շինելիս գուրզ հազարանը թաղեց բերդի հիմքի տակ թերևս ամրության համար. (գուրզեր ուներ մոտը, քեռիների տունը գնալիս գուրզիկ-չոջանին է ձեռքը, նա թողեց Գոհար խաթունի դռան առաջ)։ Հորեղբոր մոտը գնալիս խլեց գուրզ-հազարանը, նրանով էր կռվում իր թափառումների ժամանակ. այն թաղեց, և ապա զնաց տուն, և ձեռք բերեց Թուր-կայ-ծակին»։

¹⁴⁵ էպոսում Գոհարն ընդհանրապես դռնապան չունի։

¹⁴⁶ Սասնա ծռեր, Ա հատոր, Ե պատում, էջ 204։

բերակում¹⁴⁷, որից էլ, ըստ երևույթին, օգտվել է բանաստեղծը՝ մասնակի փոփոխություն ենթարկելով փաստը: Քաջասիրտ աղջիկը երեք անգամ փորձում է դյուցազնին. առաջին անգամ գուրզ են նետում, մյուս անգամ՝ «գուլաշ կպնում», իսկ երրորդին առաջարկում է մրցել «մատնիքով»: Մհերը պարտվում է, սակայն արդարանում է, ասելով, որ տարվել է Գոհարիկի հղբոր գեղեցկությամբ, մտածելով, որ քույրը, հավանաբար, առավել գեղեցիկ է: Ծպտված Գոհարը թույլ է տալիս նրան մեկ անգամ ևս արձակելու իր նետը:

Դրեցին. Մհեր նշնեց, զմբդեց,
Մաղնիքի միշեն յընցուց նետ ու անեղ:

Այս փաստը ահա՛ ինչպես է ներկայացված Խաչակյանի գրառումներում. «Նետը արձակելիս՝ աչքը դիպավ Թամարի երեսին, ձեռքը դողաց, աչքերը Թամարի վրա՝ աղեղն արձակեց, դիպավ մատանուն, մատանին ընկավ վար:

— Զկրցար, չկրցար, — գոռացին թագավորի տղերքը:
Թամարն ասավ.

— Թող մեկ էլ ձգե, աղի ձեռքը դողաց, աչքերը վրաս էր, նշանին չէր նայում:

Երկրորդ անգամ արձակեց նետը. գնաց և մատանուն առավ և <1 անընթ. > մատանին անցրեց նետը և թռավ, ու թռնում է մատանու հետ մեկտեղ մինչև էսօր...»: Ուշադրության արժանի է գեղարվեստորեն մշակված հետևյալ քառատողը.

Ինչպես մատը հագնեի մատնիք,
Էնպես էլ նետը հագավ մատնին,
Թուցուց հետը
Առավ, տարավ:

¹⁴⁷ Սասնա ծռեր, Բ հատոր, Ա մաս, Ը պատում, էջ 330:

Ծրագրային գրառումներից մեկում (անթվակիր) բանաստեղծը փորձել է հարցին մի փոքր այլ լուծում տալ. Մհերը «չոչ պապի ծանր գուրդը ուսին», լախար ձեռքին հասնում է «Գյուրճու երկիր»՝ «մի կերպ, սխալմամբ, թե գուսանի ձեռք»։ Այնտեղ նա հանդիպում է 40 հսկաների։ Եթե մյուս տարբերակներում Իսահակյանը նրանց մրցասպարեզ է դուրս բերում, այստեղ մրցումը փոխարինում է կռվով. «Տեսավ 40 ուզկաններ են եկել, հսկաներ Գոհարիկի սերը կուզեն. կռիվ մտան. Մհերը բոլորին փախցուց»։ Եվ այստեղ Մհերն ինքն է Գոհարից սիրո ուխտի նշան ուզում, որ գնա Սասուն՝ հոր երկրին տիրի և նոր գա նրան իր մոտ տանի։

4

Սոցիալական հակասությունների խորացումը պոեմում.— «Սասմա Մհերի» երրորդ մշակմանը վերաբերող գրառումները և սեագիր հատվածները ցույց են տալիս, որ Իսահակյանը մտադիր է եղել առավել խորացնելու սոցիալական հակասությունները։ Այդ նպատակով ծրագրել է ավելացնել նոր դրվագներ։ Հատկապես նրա ուշադրության կենտրոնում է եղել պայմանականորեն ասված՝ ճանապարհի դրվագը, որին նա բազմիցս անդրադարձել է, ամեն անգամ նոր երանգներ ավելացնելով։

Չար աշխարհի կործանման դադափարին հանգելու համար անհրաժեշտ էր, որ Մհերը լիներ աշխարհատես, ամենատես. «Երթամ աշխարհ ժուռ գամ, աշխարհ տես-ուս է, բան սորվեմ, աշխարհ ճանչնամ...»,—մտորում է նա։ Եվ «ինքնաբերաբար, մեխանիկորեն ընկնում է կյանքի հորձանքի մեջ և քարեքար զարկվելով, գնում է և փորձվում»,—հավաստում է բանաստեղծը։ «Մհերը որոշում է գնալ, աշխարհ շրջել՝ գտնելու ճշմարտությունը, արդարությունը». այս միտքը բանաստեղծը ծրագրում է «կոնկրետացնել։ Հագուստ հագցնել»։ Աշխարհը Մհերի համար դառնում է մի երկար ու ձիգ ճանապարհ, որտեղից լսվում է սրերի զնգոց ու շղթայի շառաչ։ Ինչպես մի ժամանակ բանաստեղծի վրշ-

տոտ, խոցված սրտի մեջ, կաթիլ առ կաթիլ հավաքվում էին «անծայր աշխարհի ծով արցունքները» և նա լսում էր «...անվերջ, գիշեր ու ցերեկ ողբ ու հեծեծանք մի՛շտ, ամենուրեք» («...Եվ անապատից, հեռու ծովերից...» բանաստեղծությունը)¹⁴⁸, այժմ Մհերի ականջին են հասնում ամեն կողմից՝ «հեծեծանք, լաց, ողբ, դանդատ, հառաչանք.— Անոթի ենք, զրկված ենք, ավերված, ավար հղած, կողոպտված, հափշտակված»: Իսահակյանը գրում է. «Մհեր գնում է ճանապարհով և տեսնում է աշխարհի ընթացքը. ձիավոր, ոտավոր, հարուստ, աղքատ, ճոխ, մերկ, շքեղ, բոբիկ... Մեկը քարվանսով հաց է տեղափոխում, ալյուր, մյուսը ճամբաներից կռուժ է հավաքում... Քշում են ճորտերին, մշակներին, մտրակի, բրի տակ...»: Իսկ մի պատահիկում բանաստեղծը նշում է՝ «Իհարկե, պիտի շարիքը խտացնել այդ ճանապարհի վրա տեսածների մեջ»: Եվ երևույթի մեջ խորանալու համար նա հաճախ նույն միտքն աշխատում է արտահայտել մի քանի ձևերով, փորձում է ավելի խտացնել գույները, փնտրում առավել նոր, արտահայտիչ պատկերներ. «Մհերը տեսավ՝ հարկերն էին տանում քարվանսով, դեպի Մըսրը, հարկեր հավաքած ողջերից և մեռելներից» (ընդգծ. իմն է—Հ. Ա.): Կամ՝ «Մարդիկ ծանր բեռները շալակին դնում էին, և վարիչները կաշե փոկերը (մտրակ) ձեռքերին քշում էին նրանց...»: Մեկ ուրիշ տեղ՝ «...Տեսնում է կառքով անցնում են սրարշավ հարուստ մարդիկ, իշխաններ, շքեղ կանայք, փոշի հանելով, իսկ փոշու միջով գնում են բոկոտն խեղճ մարդիկ, երեխաներ, կանայք, աղքատ, նիհար, ցամաքած...»: Ճանապարհին տեսած «չարիքները» Մհերին մտորումների առիթ են տալիս. նա անընդհատ մտածում է աշխարհի «վատթար» կառուցվածքի մասին, գնում նույն ճանապարհով ու խորհրդածում. «Ճամբին խոսում էր իր մտքի հետ, իր սրտի մեջ, և խոսքն էր Ֆրիկի հակադրությունների նման—

¹⁴⁸ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 1, էջ 218:

- անոր անհետ կորուստ
Յուր լուր և
այն անհետ կոր
անհետ կոր.

- անհետ կոր.

- անհետ կոր անհետ կոր.

անհետ կոր անհետ կոր անհետ
անհետ կոր անհետ կոր անհետ
անհետ կոր.

անհետ կոր. - անհետ կոր անհետ կոր.

անհետ կոր անհետ կոր անհետ կոր. - անհետ կոր
անհետ կոր.

անհետ կոր.

անհետ կոր.
անհետ կոր.

անհետ կոր.

անհետ կոր անհետ կոր անհետ կոր.
անհետ կոր անհետ կոր.

8 հոկտեմբեր
1853.

Մեկը այսպես, մյուսը այնպես.
Մեկը կուշտ, մեկելը անոթի...
էս է հղել աշխարհը»:

Այս հետաքրքիր միտքը՝ ճանապարհը ֆրիկյան հայտնի հակասությունների բացահայտման միջոց, նա ավելի կոնկրետացնում է մեկ այլ սեագիր մշակման մեջ.

Մհերը նստել էր ճանապարհին,
Ճանապարհին տեսնում էր—աշխարհը:
Անցնում էին մարդիկ բռններն ուսերին,
Գրաստների պես,
Անցնում էին նժույգների վրա նստած մարդիկ,
Անցնում էին բոբիկ երեխաներ, կանայք,
Անցնում էին կառքերի մեջ նստած...
Քշում էին կառքերը, ձիերը,
Եվ փոշու մեջ թաղում ուխտավորներին.
Անցնում էին իշխան, պարոն, հարուստ,
Անցնում էին աղքատ, բանվոր, մշակ...
Մհեր նստել էր և նայում էր.
Մհեր նստել էր և միտք էր անում
Աշխարքի բանը—
Մեկն այսպես,
Մյուսն այնպես...

Եվ հետաքրքիր է, որ կառուցվածքային առումով երրորդ տարբերակում սրան պետք է հաջորդեր վայրի հավքերի հետ հանդիպման քնարական դրվագը.

Վեր կացավ գնաց,
Տեսավ թռչուններին...,—

վերջացնում է հատվածն Իսահակյանը, ավելի խորացնելով Մհերի խոսքերի իմաստը, ուղղված «ազատ ու անպարտ», «ընկերներով ու ախպոր պես ապրող», «ինքնիշխան» հավքերին:

Անդամ օտար նվաճողների դրվագին վերաբերող մի տարբերակում Մհերը ճանապարհին է հանդիպում թշնամուն՝ Բագի-Բուդային, որը հարկ և գերիներ էր տանելու Տարոնից:

Թե վիպերգի ո՛ր մասերում պետք է տեղադրվեր ճանապարհի դրվագը, այդ մասին հուշում են բանաստեղծի նշումները: Մի տեղ նա գտնում է, որ դա պետք է լինի ուեսին սպանելուց հետո. ֆրիկյան հակասությունների մասին Մհերը մտորում է «աշխարհափորձից, օրինակի համար, ուեսին սպանելուց հետո»: Կա բավականին ուշագրավ մեկ այլ դրանում, ուր Մհերը «Գեղապետին սպանելուց հետո, գնում է ճամփաներով, տեսնում է անցուղարձին դեպքեր, անիրավ, անգութ, անարդար դեպքեր, ղայրանում է, տեսնում է՝ մի խոշոր և խոժոռ մարդ մտրակով ծեծում է երեք մարդկանց, որոնք ծանր բեռներ ունեն մեջքերի վրա, և դժվարին են շարժվում, ծեծում է գրաստների պես, որ դնան: Մհերը զայրանում է. մտրակն առնում է, մի երկու հատ հարվածում է ծեծողին, որ ընկնում է մեռելի պես գետնին. թափում է մեջքերի բեռը և ասում է՝ «Գնացեք ձեր տները...»: Նրանք անհիծում են Մհերին (հանդիմանում են Մհերին), թե՛ մեր տիրոջը սպանեցիր, մենք ո՞ւր գնանք, ո՞վ մեզ հաց կուտա... մեր տունն ավերեցիր...»: Վերջին նախադասությամբ Իսահակյանն ակնարկում է այն իրողությունը, որ հասարակ ժողովրդի մի մասը դեռևս չի եկել ինքնագիտակցման, չի ճանաչում իր լավն ու վատը և հեռու է իր գոյությունն առանց տերերի ու իշխանների պատկերացնելուց, և սա էլ կազմում է նրանց կյանքի շարիքը: Նույն դրույթը, որոշ երանգային տարբերությամբ, տեսնում ենք նաև 40-ական թվականների մեկ այլ դրաման մեջ. այստեղ Մհերը ճանապարհին հանդիպում է շքեղ ձիավոր-իշխանին և «լեզուն դուրս ձգած» «ետեից հեիհ» վազող ծառային: Այս տեսնելով Մհերը զայրանում է և առաջարկում իշխանին ձիուց իջնել. «Թող հիմա էլ ծառադ դնա... Աղան զայրանում է. Մհերը բռնում է ձիու սանձից. աղան թուր է հանում, Մհերը գցում է նրան ձիուց վայր և զարկում է դետին, մեռնում է աղան, ծառան լալիս

է, ասում. «Զորնա քո ձեռքը, ես հիմա ինչ պատասխան տամ իմ տիրոջը...»»:

«Լրացումներ» վերնագրված մի գրառման համաձայն, Լրբ Մհերը վտարվում է Սասունից (արդեն Գոհարիկի մոտից վերադառնալուց հետո), նա «անորոշ մտքերի մեջ, երեւուն, անվճիռ, գնում է ճամփով, մտածելով. քաղցն ու ծարավը ճնշում են նրան...»: Այստեղ Իսահակյանը նորից շատ որոշակի նշում է այս հավելման տեղը՝ կառուցվածքային իմաստով. «քաղցած հասավ Ճապաղջուր, տեսավ ամռան շոգին, ծառի շվաքին մի մարդ ուտում-խում է...»: Հետաքրքրական են Մհերի մոտորումներն նաև այս հատվածում. «ո՞ւր գնալ և ի՞նչ անել. գնա՞լ Գոհար խաթունի մոտ, ի՞նչ ևրեսով. գնա՞լ քեռանց տունը. քեռին ճամփա ցույց տվեց, խրատ տվեց. գնալ հոր վրեժը առնել Չմշկիկ Սուլթանից. ի՞նչ ազնվություն է՝ կնկա հետ կռիվ մտնել, կնիկ սպանել. բե՞ր դառնալ հետ՝ հորեղբորն սպանել, տիրանալ հոր գահին. բայց ինչպես սպանե իր հորեղբորը, կարելի բան չէ...»: Մեր ընդգծած տողերը նորից վկայում են Մհերի բարոյության, ազնվության մասին, իսկ ամենակարևորն այստեղ էպոսային նոր փաստի օգտագործումն է՝ կապված Չմշկիկ սուլթանի հետ, որը չկա վիպերգի ոչ մի տարբերակում, ինչպես և մյուս գրառումներում: Իսահակյանն, ըստ երևույթին, մտադրություն է ունեցել անդրադառնալու նաև ժողովրդական էպոսի այս փաստին, սակայն ի՞նչ ձևով կամ ի՞նչ շափով՝ չենք կարող ասել, քանի որ այն, ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի, մնացել է միայն մտահղացման կամ ծրագրային շրջանակներում: Եվ բնորոշ է, որ գրառումներից ամեն մեկում գտնում ենք մի նորություն, մի թարմ միտք, հետաքրքիր մի մտահղացում, հաճախ միևնույն հարցի այլատեսակ լուծում և ժողովրդական սկզբնաղբյուրի նորանոր փաստերի օգտագործում: Մի այլ գրառման մեջ Սասունից արտաքսված Մհերն «իջնում է Սասունի դաշտ», կանգնում ու մտածում «ճամփաբաժնին—քառուղիի վրա»: Ճանապարհներից մեկը տանում էր Սասուն, մյուսը՝ քեռանց տուն,

երրորդը՝ Գոհարիկի մոտ (այստեղ և միայն այս դեպքում՝ Բաղաց աշխարհ)։ Զորրորդ Ճանապարհը տանում է «հեռուները, ծովերի կողմը», և որոշում է դյուցազներ այն ընտրել, զնալ «հեռուները, մարդիկ տեսնելով, աշխարհներ տեսնելով...»։ Այստեղ Իսահակյանը նոր դրվագ է նախատեսում, կապված Մհերի քեռիների հետ՝ «քեռանց մոտ չի գնա. լավ չեն, զրկող են...» (Այս մասին խոսք կլինի ավելի ուշ՝ Մհերի կերպարի առնչությամբ)։

Ճանապարհի դրվագը, վիպերգի երրորդ տարբերակում, ըստ երևույթին, պետք է նախորդեր անարդար աշխարհի դեմ ելնելու և այն վերափոխելու Մհերի հանրահայտ կոչին, ուստի Իսահակյանն անհրաժեշտ է համարել ավելի հիմնավորելու դյուցազնի գայրույթն ու բողոքը։ Նա Ճանապարհին տեսնելով «աշխարքի բոլոր աղետները», եզրակացնում է, որ «մինչև աշխարք չքանդվի մի դիր ու նորեն շինվի, մարդը չի ազատվի չար լծեն, բանտեն, հացի կարոտեն» և գնում է, «բերդ է շինում ու Սասուն։ (Այս գործին ձեռնարկում է, երբ տեսնում է չարիքի լրումը—բանվոր տղայի ջախջախվելը), մոռանում է Գոհարիկի սերը, խոստումը՝ այդ վշտի ու վճռի տակ, քեռու մոտ գնալը, և ուղղակի բերդ շինելուն է ձեռք զարկում»։

Սոցիալական հակասությունների առավել արտահայտիչ նկարագրման, «չարիքը ավելի խտացնելու» նպատակով Իսահակյանը դիմում է մի պատկերի, որը չկա վիպերգի նախորդ տարբերակներում, սակայն տեղ էր գտել բանաստեղծի պոեզիայում դեռևս 1905 թ.։

Տեսնում եմ արցունք ժպտի հետ հյուսված,

Հացի հետ աշուն—վիշտ համատարած...¹⁴⁹,—գրել է

Նա։ Մեր այս ընդգծած միտքն է, որ հանդիպում է «Սասնա Մհեր» վիպերգի երրորդ մշակմանը վերաբերող գրառումներում՝ տարբեր ձևերով և երանգներով։ Ճանապարհ-

¹⁴⁹ Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 1, էջ 218։

ներին ականատես լինելով մարդկային դառը, շարքաշ կյանքին, Մհերը մտածում է. «Աշխարքի հացը արյունոտ է, թե որ ճմլես, արյուն պիտի կաթի, և վերցնում է նա իր թեոից մի կտոր հաց և սեղմում է. արյուն է կաթում...»: Նա դալիս է ախուր եզրակացության, որ «Ուր մատդ զարկես էս աշխարհի մեջ՝ արյուն կծորե»: Մեկ ուրիշ գրառում.

Արյուն է լոկ կերած հացը աշխարքի.

Աղքատ, հարուստ, տեր ու ծառա,

Արյուն կա ձեր կերած հացի մեջ...

Իսկ 40-ական թվականների մի գրառման մեջ Մհերը լսում է ճանապարհին մարդկանց բողոքը.

Անեծք է մեր կյանքը,

Դառն ապրուստ.

Արյուն կա մեր կերած հացի մեջ:

Նլք է փնտրում Մհերը, փրկություն. «Կա՞ մի աշխարհ, ուր մարդը ազատ լինի, արյուն չթափվի, շար չլինի, հացն առանց արյունի լինի...»: Նրա երազած ազատ ու ճշմարիտ աշխարհում հացի մեջ այլևս արյուն չպետք է լինի, այլ «երբ սեղմես հացը՝ արյունի տեղ կաթ ծորե»: Այս մտորումներով Մհերը հասնում է Պղնձե քաղաք:

Բացի ճանապարհի դրվագից, Իսահակյանը ծրագրել էր խորացնել սոցիալական հակասության փաստը նաև վիպերգի մյուս դրվագներում: Հիշենք 1938 թ. առանձին հրատարակության հեղինակային ուղղումները. գրքի իր օրինակի համապատասխան էջին բանաստեղծը կցել է հետևյալ հավելումը.

Մհեր օգնում է գութանավորներին,

Վարում է գութանը առապարներով.

Նրան վարձի համար մի հաց են տալիս, մի շոր հաց.

Մհերը սեղմում է, որ փշրե,
Արյուն է կաթում հացից...
Անձնահուր Մհերն է վարում հողը:
էնտեղեն Մհեր ելավ զարհուրած,
Զվեց ու հասավ Պղնձե քաղաք:

Ինչպես երևում է այս տողերի և էպոսի պատումների համագործակց, բանաստեղծը մտադիր է եղել օգտագործել Ս. Հայկունու դրի առած «Դավթի և Մհեր» պատումի «Մհերի շատակերությունն ու գութան անելը» դրվագը, իհարկե, որոշ փոփոխությամբ¹⁵⁰:

Ի դեպ, էպոսի մյուս պատումներում նույն դրվագը պատմվում է նաև Դավթի վերաբերմամբ: Ինչպես տեսնում ենք, Իսահակյանը վերոհիշյալ տարբերակից վերցրել է Մհերի՝ գութանավորներից օգնելու, նրանցից հաց խնդրելու փաստերը միայն, թերևս, ձգտելով Մհերի մեջ ավելի խորացնել աշխատավորական գիծը և ապա կրկնել է գրառումներում արտահայտած միտքը՝ հացից արյուն կաթելու մասին: Վիպերգի 1938 թ. առանձին հրատարակության վերջին դրվագին վերաբերող ուղղումներից երևում է, որ նա ծրագրել էր նույն միտքը կրկնող հետևյալ տողերը ավելացնել հովվի և Մհերի զրույցում.

— Մարդու կերած ավուր հացեն
Սեղմես արուն կուգա՞ նորեն.
— Հա, էդպես է, Աղնանց Մհեր.
— Նորե՞ն ուսմիկ դառ կդատի... և այլն:

Նույն միտքը ավելի խորացված ձևով արտահայտված է 1938 թ. տպագրությունից հետո կատարված մեկ այլ գրառման մեջ.

— Մի կտոր հաց տուր,
Տեսնեմ նորե՞ն
Արյուն կուգա ավուր հացեն:

¹⁵⁰ Սասնա ծռեր, Ա հատոր, ԴԳ պատում, էջ 699:

Ծերունին տալիս է ուսի թեռից մի կտոր հաց:

Սեղմում է Մհերը, արյուն է կաթում:

— Դե՛հ, դա՛րձ գնա քո շար աշխարհ...

Այն դրվագում, ուր Մհերը Պղնձե քաղաքում խոսքն ուղղում է «իր սրտին ու աշխարքին», Իսահակյանը 1941 թ. հունիսի 10-ի գրառման մեջ ավելացնում է՝ «Մինչև չքանդվի աշխարք մեկ հեղ և շինվի աշխարք նորեն— ձեզ չկա ազատում...» միտքը, ծրագրելով, ըստ երևույթին, այն տեղավորել՝

Կը շինեք հար դուրք ու դարբաս,

Ու ձեզ համար

Լուծ ու անուր զնդան ամուր

տողերից հետո, քանի որ մեջբերված նախադասությանը հաջորդում է՝ «Երթամ շինեմ բերդ ու պատվար...», ինչպես որ է երկրորդ տարբերակում:

«1944 հունվարի 17» թվագրությամբ տարբերակ-պատահում Իսահակյանն ավելի ճիշտ է համարում, որ Մհերը օտար նվաճողների դեմ կռվից՝ «մարցիներին կոտորելով հետապնդելուց» հետո անցնի Պղնձե քաղքի միջով, և այդ ամենի «գումարը այն է լինում, որ վճռվում է՝ կռվել»: Մհերի պայքարի դժվարությունը առավել շեշտելու նպատակով բանաստեղծը գրում է, որ ամենուրեք Մհերին հիշեցնում են աշխարհի օրենքի՝ «աստծո դրուկի» մասին. և՛ այն ժամանակ, երբ նա խոսքն ուղղում է աշխատավոր մարդկանց (Պղնձե քաղաքում), և՛ երբ գնում է Սասուն ու կռվի կանչում կտրիճներին: «Ի՞նչ կռիվ, ի՞նչ զոռ, աշխարքի դրուկը էդպես է, աստծու կարգը էսպես է. աստված աշխարհը էսպես է դրել— հարուստ ու աղքատ, իշխան ու ռամիկ, տեր ու ծառա»: Հենց այդ է, որ անարդար է գտնում Մհերը և առանց վախենալու օրենքից ու պատժից առաջարկում է վերացնել «աստծու դրուկը» և ազատել մարդուն: Ժողովուրդը չի հաս-

կանում Մհերին. ուամիկ, աղքատ՝ չեն գալիս իր հետ... Այստեղ ևս Իսահակյանը ձգտել է հավատարիմ մնալ և՛ էպոսին, և՛ էպոսում յարտացոլված պատմական իրականությանը, երբ ժողովուրդը (ուամիկը) դեռ լիովին չէր հասել իր շահերի գիտակցության աստիճանին:

5

Մհերի կերպարը.— Իսահակյանի նպատակներից մեկն էլ եղել է Մհերի կերպարի առավել կատարելագործումը, իր խոսքերով՝ «բյուրեղացումը», նրա բնավորության ու էության հիմնական գծերի ավելի հիմնավորումն ու ընդգծումը: Բանաստեղծի ցանկությունն է եղել Մհերին ներկայացնել ավելի բարի, գլխավորապես, քան նախորդ տարբերակներում: Վիպերգի 42—45 տողերում նա այսպիսի աստիճանական փոփոխություն է կատարել. առաջին հրատարակության մեջ ասված է՝

Խեռ էր բնութքը՝ բորբ ու բարկացկոտ¹⁵¹,
Օրերով խոժոռ, հոնկերը ժանգոտ,
Օրերով մեռակ, ինքն իր հետ Մհեր՝
 Մարդու չէր նայեր,
 Մարդու չէր խոսար,
 Մթար ու մլար՝
 Հանց որ նեմրութ սար:

Ինչպես արդեն վերը դիտել ենք, երկրորդ հրատարակության ժամանակ բանաստեղծը բավականին մեղմել է Մհերի այդ նկարագիրը.

Վեռ էր բնութքը խռոխտ ու ըմբոստ
Հրով, խանդով վառ.
Զայրույթի պահին՝ մթար ու մլար,
Հանց որ նեմրութ սար:

¹⁵¹ Ընդգծում ենք տարբերվող բառերը:

Եվ ապա նույնի նոր խմբագրումը՝

Վեա էր բնութքը, խրոխտ ու ըմբոստ,
հրով, խանդով վառ.

Բայց սրտով բարի, սիրով, գթով լի,
Թեև իր արդար զայրույթի պահին՝

Մթար ու մլար,
Հանց որ նեմրութ սար:

Հետաքրքրական են երեք տարբերակներով անցնող միևնույն գծի նրբերանգները. սկզբում՝ ընդհանրապես մթար ու մլար, ապա՝ զայրույթի պահերին միայն, իսկ վերջում, ավելի շեշտված՝ արդար զայրույթի ժամանակ:

Ծրագրային նշումներում, ամենափոքր մանրամասներով ու փաստերով բանաստեղծն աշխատել է ավելի ակտիվացնել Մհերին. երբ նա ճանապարհին տեսնում է բեռնավորված հարկահաններին, ինչպես նաև նրանց վերցրած գերիներին, «...ջարդում է հարկահաններին և գերեվարներին, և պատվիրում է, որ գնան իրենց տները»: Մեկ ուրիշ տեղ տեսնելով գերի տարվող մարդկանց, որոնք «հարկ չէին տվել, խաբան չունեին վզերի վրա, Մհերը ազատեց նրանց»: Ինչպես նկատել ենք նաև վիպերգի երկրորդ տարբերակի կապակցությամբ, բանաստեղծն աշխատել է մեղմել Մհերի բնավորության խստությունը, որոշ դաժանությունը. 30-ական թվականների երկրորդ կեսին վերաբերող մի գրառման մեջ կարդում ենք. «Թուրը քաշում է Սասնա մեծերի վրա—չի ասվում, թե՛ ինչ որ ընկավ թրի բերան, այրեց, լափեց, արյունն ելավ գոշ-գոշ գնաց¹⁵², այլ թուրը քաշեց, հուր թափեց, արյուն թափեց»: Նույն միտքն է արտահայտվում նաև մեկ ուրիշ գրառման մեջ.

Մհեր թուրը քաշեց, կայծակ տվեց,
կայծակ զարկեց, երկինք-գետինք որոտացին...

¹⁵² Տե՛ս վիպերգի 685—689-րդ տողերը:

Ճնճղափորիկ և ջոջերը, որ եկել էին Մհեր
բռնեն, Մհեր ճմլեն, գումար փախան,
վախից փախան, ընկան քարե-քար...

Բանաստեղծը հատկապես ճշտում է, որ Սասնա մեծերը
ամպրոպի սարսափից, վախից են փախչում և ո՛չ թե Մհերն
է նրանց վրա ձեռք բարձրացնում: 1952 թ. նորից անդրա-
դառնալով այդ խնդրին, ծոցատեսարում նշել է՝ «Սասունցի-
ներին կոտորելը մեղմել: Ոչ թե՝ կտրեց, թափեց, լափեց,
արյունն ելավ գոշ-գոշ գնաց»:

Հետաքրքրական է, որ Մհերը բարի ու ղթասիրտ է ոչ
միայն մարդկանց նկատմամբ, այլ նաև կենդանիների. «Քե-
ռի Թորոսի տանը որս անելը և որսերին աղատելը, թե մեղք
են» (ընդգծ. իմն է—Հ. Ս.),—ծրագրում է նա մի թերթիկում:
Զանազան առիթներով, տարբեր իրադրությունների մեջ բանաս-
տեղծը օգտագործել է քեռորդիների (որոշ դեպքերում՝ քե-
ռիների) հետ որս անելու և կենդանիներին ազատ արձակելու
հանգամանքը: Մինչդեռ երկրորդ տարբերակում Մհերը
մկունդ էր խաղում քեռիների հետ, և ապա՝

Կելներ որսասար,
Ու նրանց հավսար՝
Կռիվ կը մտներ՝ հագած ճոշ-ասպար...

Եթե այստեղ միայն հայտնի փաստի ակնարկն է, բա-
նաստեղծը երրորդ մշակման մեջ մտադրվում է բացել այդ
ակնարկը և մի նոր դրվագ հատկացնել դրան՝ ավելի մոտե-
նալով ժողովրդական սկզբնաղբյուրին: Էպոսի մի քանի
տարբերակների համաձայն Մհերը քեռիների հետ որսի զնա-
ցած ժամանակ խաբվում է նրանցից (խլում էին ձեռքից որ-
սը) և հասկանալով՝ դաժան հաշվեհարդար տեսնում հետ-
ները¹⁵³:

¹⁵³ Սասնա ծռեր, Ա հատոր, Ը պատում, էջ 372:

Իր նրբերանգներով հետաքրքիր է 1944 թ. հունվարի 17-ի գրառումը, վերնագրված՝ «Նորից «Մհերի» մասին»։ «Մհերը քեռու տանը. քեռու որդիների հետ որսի էր գնում, հաջողությամբ նա էր որս անում, և խղճալով որսերին, բաց էր թողնում նրանց ազատ»։ Ուշագրավ է, որ հիմն ծրագրային մի այլ գրառման մեջ Մհերը քեռիների պարծենկոտության վրա զայրանալով է արձակում կենդանիներին, այստեղ նրա մեջ խոսում է արդեն մարդկային խիղճը, որը զայրացնում էր քեռորդիներին և նրանք «ուզում էին ծեծել նրան, փորձ էին անում ծեծելու, բայց չէին վստահանում։ Վախենում էին»։

Իսահակյանը գիտակցաբար հրաժարվել է Մհերի մարդկային նկարագիրը թեկուզ նվազագույն չափով նսեմացնող որոշ փաստերից, ավելացրել նոր դրվագներ ու փաստեր՝ առավել կատարյալ դարձնելու Մհերի «վսեմ ու մարդարեական կերպարը»։ Ահա ինչու՞ նրա հերոսը ձեռք չի բարձրացնում ազգականների վրա, այլ միայն՝ զայրանում է։ «Եվ նրա հոգին լցվում էր ատելությամբ նրանց հանդեպ, և ասում էր. «Գողեր են դրանք, խաբեբաներ, անգութներ»»։ Ամեն նոր պատառիկում բանաստեղծը փորձել է ստեղծել ավելի բնորոշ մանրամասներ և դարձյալ մտածել նորերի մասին. այսպես՝ «...Քեռիները նեղում էին նրան... Մեծ քեռին տեսնելով այս վիճակը, նրան գրգռում է՝ հոր տունը դառնալ»։ Կամ, մեկ այլ տեղ՝ «Մհերին քեռիները բանտ են դնում պապի մահից հետո, որսի պատճառով. Թեաթորոս ազատում է և խրատում, ճամբու դնում. Մհերը մտածում է զնալ Ծովյալ մամի տունը»¹⁵⁴։

Մհերի ամբողջական նկարագրի մի հիանալի ընդհանրացում է «Օրիենտիր տեղեր» վերնագրված ծրագրային նշումները.

«—Մհերը բարի էր բնութքով, գթոտ։

¹⁵⁴ Մի քանի գրառումներում Իսահակյանը նշել է Ծովյալ խաթունի

Մհերը քեռանց տանը <եղած ժամանակ> ողջ-ողջ հավաքում էր մեծ ու պստիկ կենդանիներին՝ որս, և բերում քեռանց տունը: Հետո բաց էր թողնում:

—Փռնապան եղած ժամանակ աղքատներին ձրի հաց էր տալիս, շատ և շատ:

—Ճանապարհին, աշխարհ տեսնելիս—չարն ու բարին տեսնելիս, և արդարություն ու ճշմարտություն որոնելիս, նա օգնում էր խեղճերին, թշվառներին, կապյալներին, գերիններին.—Հարձակվեց, աղատեց գերիններին, հարվածեց մի անգութի, որ բռնանում էր, ծեծում մի խեղճ մարդու...»: Սրան հաջորդող գրառման մեջ, մի ակնարկով զուգահեռ է անցկացված Մհերի և Սերվանտեսի հայտնի հերոսի միջև. «խեղճերին, թշվառներին օգնության էր հասնում, իբրև հին թափառական ասպետ»:

Նշենելով հայկական էպոսի բուն ոգուց, Իսահակյանը վիպերգի երրորդ մշակման ընթացքում ձգտել է առավել ուժեղացնել Մհերի կերպարի որոշ հիպերբոլիկ գծերը, ընդգծել նրա բնատուր ուժը: Այսպես, օրինակ՝ «Մհերը, երբ Թուր-Կայծակին ձեռքն առավ, բռնեց (անմիջապես) հետանց Անդոկ լեռան ժայռերի վրա...». կամ՝ «Երբ <Մհերը> մարտահրավեր է անում Սասունից՝ Թուրը շողշողացրեց, տարածեց աշխարհի վրա, փայլատակեց կայծակի պես աշխարհի շորս կողմի վրա...»: Հետաքրքրական են նաև էպիկական-հիպերբոլային նոր պատկերները՝ Մհերի ձայնին վերաբերող: Վիպերգի առաջին գլխի այն հատվածում, ուր հորեղբայրը Մհերին ուղարկում է հսկելու Սասնա հանդերն ու դաշտերը, 1938 թ. առանձին հրատարակության հեղինակային օրինակի վրա գտնում ենք հետևյալ փոփոխումը.

մասին, թերևս մտադրվելով վիպերգում որոշ լրացումներ կատարել այս ուղղությամբ և այդպես էլ որոշակի ոչինչ չի արել. «Մհերը Սասունից արտաքսվելով՝ ուզում էր գնալ ծովային Սանասարի մոտ տունը, մամոնց տուն, Ծովյալ խաթունի տունը, բայց ճանապարհին անոթի լինելով մտավ հարուստի մոտ ծառա, մշակ: Այն հարուստի, որ մեղր ու ձվածեղ էր ուտում»:

Կհսկեր Սասմա հանդ ու հանդաստան.
 Մհերի ձենեն, ոտքի դոփյունեն
 Սասանած կփախչեին
 Սասնա սինոռներեն
 Գող ու ելուզակ, ավազակ,
 Գել ու գազան...

1941 թ. հունվարի 10-ի գրառումը հավաստում է՝
 «<Մհերի> ձայնի, կոշի արձագանքը յոթն օր-յոթ գիշեր
 տեք, մնաց երկրի վրա, սարերի ու դաշտերի վրա...»: Մեկ
 ուրիշ գրառման մեջ՝ «Ձենը գնաց քառսուն օրվա ճամփա,
 քառսուն օր ձենը մնաց աշխարքի վրա... ու մարդ չեկավ էդ
 կոշին...»: Բերում ենք 1937—39 թթ. սևագրություններից
 նույն հատվածի բոլորովին նոր մի տարբերակ. «Մհերը
 ասում է աշխարքին, կոշ է անում, որ գան իր մոտ ռամիկ,
 մշակ, բանվոր, գեղջուկ:

Նրա ձենը գնաց, գնաց,
 Արևելք գնաց, Արևմուտք գնաց,
 Գնաց Հարավ, գնաց Հյուսիս,
 Յոթն օրվա ճամբա կտրեց, գնաց.
 Յոթն օր ու գիշեր Մհերի ձեն մնաց աշխարհի վրա.
 Յոթն օր լրմնցավ, մարդ չեկավ Արևելքից,
 Մարդ չեկավ Արևմուտքից,
 Մարդ չեկավ Հարավից, մարդ չեկավ Հյուսիսից:
 Մհեր դարձավ ասաց իր սրտին.
 Երթամ շինեմ բերդ ու պատվար...
 Առնեմ իմ հոր զենքերն ու ձին,
 Սասմա տան կուռ կտրիճներ,
 Կռիվ մտնենք...
 Ռամկություն բերենք, ռամկի օրենք...
 Որ տեր դառնա ռամիկ՝ իրեն
 Հացին, վաստրկին...»¹⁵⁵:

¹⁵⁵ Վերջին 8 տողի (մնացածը բոլորովին նոր է) և երկրորդ տարբերակի համադրումից սլարավում է, որ հավելումը պետք է կատարվեր Մհերի՝ Պղնձե քաղաք այցելելու դրվագից անմիջապես հետո:

Ինչպես տեսնում ենք բերված հատվածից (նաև ուրիշ գրառումներից), Իսահակյանը դիմել է նաև էպիկական կրկնությունների, գրառումներից մեկում հատուկ նշելով գրանց կարեորությունը. «Կրկնելը դանդաղեցնում է վեպի ընթացքը, բայց էպոսի մեջ անհրաժեշտ է»։ Կրկնությունների շնորհիվ նա առավել նպատակասլաց է դարձնում իր խոսքը։ Ուշագրավ է նաև միջնադարյան կոլորիտն արտահայտող որոշ բառերի («Մհերը քեռու տղոց հետ մականախաղ էր խաղում») և Մհերի դիցաբանական ծագումը հիշեցնող պատկերների օգտագործումը («Մհերը քարանձավի մեջ մայր մտավ»)։

Վիպերգի վերջին մշակման ժամանակ բանաստեղծը մտադիր է եղել նաև հիմնովին վերանայելու լեզուն, ինչպես երևում է 1943 թ. մարտի 4-ի ծրագրային նշումից. «Կազմել միջնադարյան լեզվի բառարան, վերստին գրելու համար Մհերը»։

Իսահակյանը կարևոր նշանակություն է տվել Մհերի ղբաղմունքին։ Առաջին և երկրորդ տարբերակներում Մհերն աշխատանք է գտնում փոնապանի մոտ, իսկ վերջին մշակման ժամանակ բանաստեղծը այլևս նպատակահամար չի գտնում փուռը. «Փուռի փոխարեն Մհերը գնում է ջրաղաց և ջրաղացպանի մոտ մտնում է օգնական. յոթն աղորիք կգանալին, օր ու գիշեր։ Մհերն ամեն օր աղորիքները մեկ ձեռքով կվերցնե, կռան կաներ, կկռաներ և նորեն սարքի կգներ։ Գիշերները քուն չունե, ականջը ձենի՝ կղարթներ նոր աղուն լցնելու համար. դիլը երբ կընկներ...»։ Այս փոփոխությունը կատարվել է Մհերի աշխատանքն ավելի ծանրացնելու դիտավորությունով, որով և պայմանավորված է նրա դժգոհությունը։

Ինչպես նախորդ տարբերակներում, այստեղ էլ Մհերը չի վարձատրվում իր աշխատանքին համապատասխան. «Քաղցած էր մնում, ալյուր էր վերցնում ամեն տեղից, հունցում էր, ակուլթը վառում, կոլոճ, բոքոն թխում, ուտում։ Կոնֆլիկտը ջրաղացպանի հետ, նույն ձևի, ինչ որ փոնա-

պանի» (1941 թ. 10 հունիսի, Մոսկվա): Ինչպես տեսնում ենք գրառման շարունակությունից, կառուցվածքային տեսակետից այս դրվագը պետք է նախորդեր օտար նվաճողների՝ Մարա Մելիքի թոռների հետ Մհերի բախմանը վերաբերող հատվածին: «Մհերը» վերնագրված ծրագրային մեկ այլ նշումից երևում է Իսահակյանի մտադրությունը սյուժետային-կառուցվածքային ուրիշ փոփոխություններ կատարելու՝ նույն խնդրի կապակցությամբ. «Մհերը հովիվ, նախրապան եղած ժամանակ՝ տավարը բաց էր թողնում հանդը և ինքը աղբյուրի գլուխը մեկնվում, քնում»:

Դանգատվեցին, թե լավ չէ հսկում, գայլեր և այլ գաղաններ կհարձակվեն և կուտեն...»: Այստեղ ականերև է նմանությունը մանուկ Դավթի հետ, որը էպոսի պատումների մեծ մասում գառնարած է և նախորդը¹⁵⁶:

Այս տարբերակի ծրագրային դրառումներում կարդում ենք. «Հորեղբայրը նրան, զգուշության համար, կարգեց իրենց ջաղացի աշխատող, ջաղացպանի օգնական: Ուրեմն, Մհերը ջաղացպան, Դավթի շինած այն նշանավոր ջաղացի բանվոր»:

Հետագայում Իսահակյանը մտադրվում է Մհերին տանել դարբնոց, իր վիպերգի հերոսի համար ավելի հարմար համարելով «երկաթի, կրակի, ուժի, մուրձի սալի, կռանի, կռել-կոփելու հետ գործ ունենալը»: Դարբնոցը հիշատակված է խաչատուր Մնացականյանի գրի առած տարբերակում¹⁵⁷, այն էլ ո՛չ իբրև Մհերի աշխատավայր: Երբ Մհերը տիրանում է Հալեբի թագավորի աղջկան՝ Գոհարիկին, հարևան յոթ թագավորները գալիս են նրա դեմ պատերազմելու: Թշնամիներին հաջողվում է բռնել Մհերին, տանել Եգիպտոս, ձգել հորի մեջ, որտեղից նա ազատվում է մի պառավ կնոջ օգնությամբ: Վերջինս խորհուրդ է տալիս գնալ դարբին Մարկոսի մոտ: Մհերը գնում է և դարբնոցում հանդիպելով ուրիշ հայերի էլ, խոստովանում իր ու վրիճերը և նրանցից

¹⁵⁶ Սասնա ծռեր, Ա հատոր, Ա պատում, էջ 12:

¹⁵⁷ Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, Ժ պատում, էջ 77:

ստանում օգնութիւն: Իերևա այս պատումը որոշ դեր խաղացել է Իսահակյանի մտահղացման համար: Բանաստեղծը հետագայի իր գրառումներում (50-ական թվականների սկիզբ) գերադասում է Մհերի դարբնութիւնը. «Մհերը փրոնապան չի լինում, այլ դարբին, դարբնի աշակերտ, շինում է խոփ, մանդաղ, նիզակ, թուր»: Մեկ ուրիշ տեղ՝ «Փռան տեղ... անսպասան դարբնոց. Մհերը դարբին. սուր է շինում, նիզակ, աշտե, խոփ...» և այլն: Իսկ վերջին մշակման փորձերից մեկում բանաստեղծը գրել է.

Մհեր գետեր փոխեց,
Հագաւ մաշկե բաղպան,
Կապեց մաշկե գոգնոց,
Ամենն մեծ մուրճն առաւ ձեռք,
Կանգնեց դարբնասալի առաջ (առջև):

Ինչպես տեսնում ենք, Մհերի ղբաղմունքը զարգացում է ապրել. փոնապան-ջրաղացպան-դարբին, և սա հիմնականում կապվում է օտար նվաճողների ու նրանց դեմ պայքարի հետ: Պատահական չէ, որ Մհերը թշնամուն հանդիպում է կա՛մ դարբնոցում, կա՛մ այնտեղից դուրս գալիս, կա՛մ «դարբին դառած ժամանակ»: Բանաստեղծը նշում է. «Մհերը եղաւ նաև դարբնի աշակերտ: Դա շա՛տ հարմար և պատշաճ գործ է, երկաթի, կրակի, ուժի, մուրճի, սալի, կռանի, կռել-կոփելու հետ գործ ունենալը...»: Մհերին դարձնելով դարբնոցում ղենքեր կոփող բանվոր, Իսահակյանը ցանկացել է առավել շեշտել, հիմնավորել իր հերոսի մարտական նկարագիրը:

Կառուցվածքային տեսակետից այս հատվածի տեղադրումը Իսահակյանը որոշում է այսպես. «Իսկ դարբնի մոտ, դարբնոցը պիտի դրվի, ուրևմն, Պղնձե քաղաքից առաջ, փոնապանից, գյուղի հունձից, հավքերի հետ խոսելուց հետո»:

Վիպերգի վերջին մշակման ընթացքում Իսահակյանը ձգտել է ավելի ընդլայնել Մհերի հասարակական իդեալը. եթե սկզբում դուլցազնին մտահոգում էր միայն ռամկի վիճակը, հիմա նա մտածում է ընդհանրապես մարդ-անհատի ազատության մասին, որն ավելի մեծ ընդհանրացում է. «Ոչ միայն ռամիկը լինի ազատ, այլ ավելի բարձր և ընդհանուր գաղափարով—Մարդը լինի ազատ, տեր իր հացին»։ Սա է դառնում Մհերի հավատամքը, որը ազատ ու արդար աշխարհի ստեղծման գաղափարի հետ տարբեր երանգավորումներով կրկնվում է գրառումներում։ Այդ իսկ նկատառումներով բանաստեղծը Մհերին բնորոշում է որպես «աբսոլյուտ մարդ», «մարդու իրավունքների և ազատության պաշտպանը... մարդու ազատագրման մարգարեն»։ 1943 թ. հուլիսի 11-ի թվագրությունն ունեցող գրառումներում կարդում ենք.

«Տեսնում է Մհերը կյանքի դաժանությունները, չարիքները.

Հարուստը շահագործում է,
Իշխանությունը (ոեսը) շահագործում է,
Բարեկամները (քեռիները) շահագործում են,
Օտարները (Մսրա-Մելիք) շահագործում են հայերին:
Խորհում է —

Հարստի մասին—

Ռամիկ չարադատ շոր կուտե,
Հարուստ մարդ մեղր կուտե,

Ռեսի մասին —

Իշխանավոր մարդ բռնավոր է,
Բռնի կդատեցնե:

Մսրա Մելիքի սերունդը —

Հայերին կտանջեն, կկողոպտեն.

Ելք —

Կռիվ հարստի դեմ,
Իշխանի դեմ,
Օտարի դեմ:

Ռամկի համար, մարդու համար, հայի համար,— ազատություն բոլոր ճնշումներից, օրենքներից, բռնություններից...»:

Իսկ ինչպե՞ս էր բանաստեղծը իրականացնելու այդ փոփոխումներն իր վիպերգում:

Հիշենք հրկրորդ տարբերակի հայտնի տողերը՝

Քանդենք հիմեն աշխարհը շար
Ու ուսմկություն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ուսմիկն իրեն
Արդար հացին, սուրբ վաստակին:

Դեռ 1938 թ. վիպերգի առանձին հրատարակության հեղինակային ուղղումներում այդ տողերը նա դարձրել է այսպես.

Թող ամենքը ասպաղինվեն
Գան ինձի հետ.
Քանդենք (հնուք) աշխարհը շար
(Քանդենք աշխարհն շար, անարդար)
Ու ուսմկություն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա
Մարդն ամենուր (իրեն)
Արդար հացին, սուրբ վաստակին (ընդգծ. իմն է
— Հ. Ա.):

1941 թ. հունիսի 10-ի զրառման մեջ ուսմկությունը աշխարհ բերելու կոչը փոխարինվում է բարի աշխարհի ստեղծման կոչով: Հոսվի հետ զրուցելիս Մհերն ասում է՝

Քանդենք հիմեն աշխարհը շար,
Շինենք հիմեն բարի աշխարհ (ընդգծ. իմն է—
Հ. Ա.):

40-ական թվականներին վերաբերող մեկ ուրիշ գրառման մեջ կարդում ենք.

Չար աշխարհը քանդենք հիմեն...

փոխանակ՝

Հին աշխարհը քանդենք հիմեն...

«Որովհետև հին աշխարհը անպայման վատ չի կարող լինել»,—բացատրում է բանաստեղծը:

1943 թ. կատարած գրառման մեջ Իսահակյանը նշել է՝ «Սասունցիների միջոցով <Մհերը> ուզում է կռվել աշխարքի դեմ—չար աշխարքի, նոր աշխարք շինելու...»: Եվ ապա հովվի հարցին, թե ե՞րբ է դուրս գալու այրից, պատասխանում է՝

Մինչև մարդը չազատվի ամեն ճնշումից,

Չար օրենքներից ու հարուստից,

Իշխանավորից ու աստծուց

Ես չեմ ելնի աշխարհ:

Այստեղից էլ, վիպերգի վերջի հետ կապված փոփոխումը. եթե երկրորդ տարբերակում Մհերը սպասում է ռամկի կանչին, ապա 40-ական թվականների գրառման մեջ ասվում է՝ «Ու ականջը ազատ մարդու կանչին», կամ՝ «Ականջը մարդու ազատ կանչին»:

Մհերը իր կյանքի նպատակը այժմ տեսնում է ռամկության միջոցով մարդուն ազատություն բերելու մեջ: Ահա 1944 թ. հունվարի 17-ի գրառումը.

Երբ շեղբն հասնի ոսկորին,

Ռամիկ ճշա խոր ցավեն,

Աշխարհ կանչե Մհերին,

Դուրս գամ, քանդեմ դրուկն աստծու և տերերի...

Ազատություն բերեմ մարդուն,

Որ ազատվի լուծից... Օրենքներից, աստծու

դրուկից¹⁵⁸:

¹⁵⁸ Նույն, երրորդ մշակմանը վերաբերող գրառումներում Մհերը վերո-

Մարդու ազատութիւնը ևս կապւում է միայն պայքարի հետ, և դրա համար է Մհերը կոչ անում՝

Եկեք քանդենք աշխարհը շար,
Մինչև չքանդվի մեկ հեղ աշխարհը
Ու չշինվի նորեն,
Մարդը չի ազատվի շղթայեն, շարեն (?):
Ձի տեր դառնա իր հացին,
Իր սուրբ վաստակին:

Իսահակյանը նորից հավաստում է, որ Մհերը միայնակ չի կարող հասնել իր իդեալի հաստատմանը, այլ ռամկի, աշխատավոր մարդու հետ միասին պայքարելով. նրանք համատեղ «կքանդեն աշխարհը շար, կշինեն նոր աշխարհ, որ մարդն ազատ, արդար ապրի՝ ազատ, արդար աշխարհում...»: Մհերը պատրաստ է ամեն ինչ անել, որ «ռամիկը տեր դառնա իր հացին», իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ «մարդն ազատ ապրի. քարեն, բանդեն, ստրուկի վիճակին մարդն ազատ ապրի աշխարհի վրա...» (50-ական թվականների դրառումներից):

1939 թվականին «Սասմա Մհերի մասին» հոդվածը գրելիս Իսահակյանը արդեն ելնում էր մշակվող վիպերգի նոր ընկալումից. «Եվ կերտելով Մհերի վսեմ, մարգարեական կերպարը՝ մեր վեպը ազգային շրջանակից ելնելով ընդունում է համամարդկային որակ և դառնում է աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս:

Շահագործող շար աշխարհը պիտի քանդվի մի անգամ և վերակառուցվի մարդկության երջանկության համար:

Մհերի մեջ սիմվոլացած է ազատութիւն տենչացող աշխատավոր մարդկութիւնը»:

Մարդու ազատագրման հարցը ավելի է խորացնում Մհերի կերպարի համամարդկային նշանակութիւնը, և հետաքրքիր է Իսահակյանի այն միտքը, որ «Մեր վեպի հերոս-

հիշյալ հարցի մասին խորհում է ճանապարհին՝ «կյանքի տեսիլները տեսնելուց հետո».

ները՝ Սանասար, Ծովինար, Դավիթ, Ձենով Օհան, հայկական հանգամանքներ են, հայկական սիմվոլներ, բայց մեր վեպը Մհերով է հասել իսկական գեղարվեստական բարձունքին և սիմվոլիզացիայի, ստեղծել է մարդկային սիմվոլը — Մհերը»:

Իսահակյանը ծրագրում է վիպերգի վերջում նոր դրվագ ավելացնել նաև Մհերի՝ աստծո դեմ վարած կռիվն վերաբերող, որը նույնպես սոցիալական բովանդակություն ունի: Մհերը զգում է, որ «...Աստծո դրուկը արդար չէ, կփոխենք. աստծո դրուկը մարդուն չի փրկում: Քանդենք դրուկն և օրենքը, նոր աշխարհ շինենք, որ մարդը տեր դառնա իր հացին, որ մարդն ազատվի իշխաններից, տերերից և աստծու դրուկից...»: Աստվածամարտ դյուցազնը պայքարում է բռնի ուժերի դեմ. «Մհերի կռիվը աստծու դեմ, բնության դեմ, տարերքի բռնության դեմ, բնության բռնի ուժերի դեմ», — նշում է բանաստեղծը: Այդ պայքարը տիեզերական բնույթ է կրում. Մհերը մարտնչում է ո՛չ միայն սոցիալական չարիքի դեմ, այլև աստծո (կրոնի) և բնության չար ուժերի դեմ. «Աստվածամարտ Մհեր, դժգոհ տիեզերքից»¹⁵⁹: Հայկական էպոսին և նրա ժամանակաշրջանին հարազատ մնալու համար Իսահակյանը ծրագրել է օգտագործել հրեշտակների հետ կռվի դրվագը¹⁶⁰, որը տարբեր ձևերով ու երանգավորումներով արտահայտվել է նրա գրառումներում:

Ազատություն պիտի դա աշխարհ,
Արդարություն պիտի դա,
Արդար իրավունք,
Որ մարդ-արարած
Ազատ ամեն լուծեն — շղթայեն,
Տեր դառնա իր արդար հացին:

¹⁵⁹ Իսահակյանի արխիվում պահվում է «Սասմա Մհերի» վերջին մշակմանը հատկացված տետր» (վերհագրված այսպես հենց բանաստեղծի կողմից), որի միայն առաջին էջին կա երեք տող՝

— Մհերը աշխարհից խռով,
Մարդկանցից խռովված,
Աշխարհքի հետ խռով:

¹⁶⁰ Սասնա ծռեր, Ա հատոր, ԻԴ պատում, էջ 1085:

Մհեր Թուրը շարժեց երկնքի դեմ,
 Ու մենակ իջավ Սասմա հողեն.
 Զիեր նստած հրեշտակները Մհերի առջևը կտրեցին,
 Զեռք զարկեցին Մհերին բռնելու, թուր բացեցին...
 Մհերը կռվեց հրեշտակների հետ...

Իսահակյանի մի քանի գրառումներում հրեշտակները զինավառված հարձակվում են Մհերի վրա. մեկ այլ տեղ նախօրոք առաջարկում են, որ զղջա և երբ չի լսում, նոր ընդհարվում են: Իսկ 30-ական թվականների երկրորդ կեսին կատարած զրառման մեջ կարդում ենք. «Գնաց-դնաց, ասածու հրեշտակները աջ-ձախեն եկան, որ Մհեր բռնեն, շղթա զարկեն, Մհեր թուրը քաշեց, փախան նրանք, թուրը դիպավ Ազոավու քարին, ճեղքեց քարը, մտավ ներս, քարը նորեն գոցվեց»: Ըստ մեկ այլ գրառման, հրեշտակները Սասմա տերերի կողմն են. նրանք համոզում են Մհերին, որ «զղջա, լա, ներում խնդրե ասածուց... և դառնա Սասուն, խոնարհի, հնազանդի մեծերին...

Մհերը թուրը քաշեց հրեշտակների վրա, հրեշտակները ձեռքերը դրին Մհերի ուսերի վրա և ճնշեցին, ասացին,— «Անիծված լինիս ասածու կողմանե»: 1941 թ. հունիսի 10-ի գրառման մեջ այսպես է. Մհերը՝

Հասնում է Տոսպյան բլուր.
 Դեմ է առնում Ազոավու քարին.
 Զարկում է թրով, ճեղքում է քարը,
 Մտնում է ներս. քարը վրա է գալիս
 Մեջ անձավին փակված է...¹⁶¹

¹⁶¹ Ժողովրդական էպոսի միայն Կ. Մելիք-Օհանջանյանի դրի առած պատումի մեջ (Սասնա ծռեր, Բ հ., Ա մ., էջ 351) է հիշատակվում նման մի փաստ. Մհերն ինքն է երկփեղկում քարը և ապա փակվում նրա մեջ.

Դուրզն որ զարգեց քարին,
 Քար էրկու դհու փեղկավ,
 Յինք, ուր ձին գացին քարի մեջ.
 Քար էգավ, իրար կպավ...

Վիպերգի երրորդ մշակման ընթացքում Իսահակյանին շատ է ղեաղեցրել նաև Մհերի ոտքերի տակ գետնի թուլացման դրվագը:

Եթե նախորդ տարբերակներում գետնի թուլացումը Իսահակյանը դիտում է որպես ժողովրդի անեծքի հետևանք, այժմ նա ընդլայնում է շրջանակները, գտնելով, որ բացի այդ Մհերի վրա ծանրացել էր «աստծու ձեռքը՝ հրեշտակների կովով» (40-ական թվ.): Նա աստվածամարտ է, իսկ աստծու դեմ կովողը, աստծու դեմ գնացողը պիտի պատժվի—երկիր ու երկինք դեմ են Մհերին. հողը չի կարող տանել անեծքով, աստծու բարկությամբ ծանրացած Մհերին...», կարդում ենք 1944 թ. հունվարի 17-ի գրառման մեջ: Նորից՝ հրեշտակները «ճնշում են նրա ուսերին», և Մհերը գնալով «ավելի է թաղվում գետնի մեջ». ժամանակի օրենքը դատապարտում է ազատ ու արդար աշխարհի ստեղծման գաղափարը: Այս և մյուս գրառումներում Իսահակյանն աշխատել է գտնել Մհերի ողբերգությունն ընդգծող առավել խոր և արտահայտիչ պատկերներ: «Մհերին աշխարք անիծեց, աստված պատժեց»,—1949 թ. ծոցատետրային գրառմամբ հավաստում է բանաստեղծը: Ըստ մեկ ուրիշ գրառման, Մհերը տեսնելով «ստրուկ ու լկող աշխարհը» հեռացավ խռոված և «վիշտը ճնշեց ուսերը, վիշտը լցվեց, ծանրացավ հոգու վրա. սրտի վիշտը ծանրացավ ձիու վրա. ծանրությունից ձիու ոտները թաղվեցին հողում. արևը տխրեց, տխուր նայեց Մհերին...»: Նույն ծոցատետրի գրառման մեջ (1949) ավելի որոշակի ասվում է, որ «ծողովբդի վիշտը (ընդգծ. իմն է—Հ. Ա.) եկավ նստավ Մհերի ուսերին, ճնշեց Մհերին ու ձիուն, ձին չէր կարող քայլել» և այլն: Հետաքրքիր է, որ 1956 թ. հուլիսի 6-ի գրառման մեջ խոսվում է Մհերի ուսերին ծանրացած ռամկի վշտի մասին.

Ռամկի վիշտն էլ ծանր նստավ
Խոլ Մհերի ուսերին...

Մյուս տեղերում կամ այն բնց է գտնում, կամ բացվում է աստծո հրամանով:

Սակայն դրանից հետո նորից վերադառնում է ավելի լայն ընդհանրացման՝

Ժողովրդի վիշտը եկավ, ծանրացավ
Մհերի ուսերին...

Սկզբնական շրջանի, հատկապես 40-ական թվականների գրառումներում նշված է, որ Մհերի ուսերին ծանրանում է ժողովրդի անեծքը, սակայն բանաստեղծը հետագայում հետևյալ ուշագրավ ցուցումն է արել. «Նրան անիծում են, բայց այնպես անել, որ հասարակ ժողովրդի մասնակցությունը չերկա...»: Եվ ապա՝ «Ժամի մեջ տերտերները, պարոնները, ավատները և ժողովրդից, երբ անիծում են Մհերին, նրանից հետո ասվում է. Ու անեծքը եկավ բռնեց Մհերին...»: Կամ՝ «Մհերի վրա ծանրանում է աստծու անեծքը և աշխարքը»: Նա նույնիսկ մի տեղ ժողովրդին միացնում է Մհերի պայքարին. «Ժողովուրդն ու Մհերը մեկ տեղ քանդեն աշխարհը շար...»: Ուրեմն, ինչպես ասվեց, Մհերի առջև գետնի թուլացման տարբեր հանգամանքներ է նախատեսել բանաստեղծը, անընդհատ մտորելով դրանց շուրջը՝ աշխարհի անեծք, ժողովրդի վիշտ և աստծու ձեռք:

Ուշագրություն արժանի է 1941 թ. մի գրառում՝ իր երանգային տարբերություններ: Կյանքից, աշխարհից հոգնած Մհերն այցելության է գնում ծնողների գերեզմանին, «ուզում է փակվել քարի մեջ». «Ինձ մահ չկա, զգվել եմ աշխարհքից, ո՞ւր գնամ, աշխարհքից հեռանամ...»: Պահպանվել է նույնի առավել ամբողջական սևագիր մշակումը, խորագրված «Մհերի վերջը» և, ըստ երևույթին, գրված նույն ժամանակ.

Մհեր կերթար ծանր վիշտը սրտում,
Կերթար, ծանր վիշտը ուսերը կճնշեր,
Կերթար անեծքով բեռնված.
Ուտները խրվում էին հողի մեջ,
Զիու ծնկներն ի վեր —

Կերթար աշխարքից զզված,
 Զար, անարդար աշխարքից զզված,
 Նեղ էր աշխարհը իրեն համար,
 Հողը չէր դիմանում
 Ոտների տակ, ու կերթար, ոչ մահ ուներ, ոչ դադար:
 Գնաց ծնողների դերեզմանների մոտ,
 լացեց.
 Ծնողները խորհուրդ տվին՝
 Գնալ այրը, զղջալ, լալ,
 Որ Քրիստոս գթա,
 Քեզ ազատե, մահ տա —
 Հանգստանաս:
 Մհերը նորից գնաց. կերթար,
 Ծնկները հողի մեջ:
 Կանգնեց, ասաց աստծուն. —
 «Արի կռվինք, կամ դու ինձ մահ կուտաս,
 Կհանգստանամ,
 Կամ...»¹⁶²

Ի տարբերություն մյուս մշակումների, այստեղ հետաքրքրական է Մհերի մարտահրավերն աստծուն. նա ինքն է նրան հրավիրում կռվի, ինչպես վերը նշած ժողովրդական տարբերակում՝

Աստծուց խնդրեց, որ կամ կռիվ մ'տա ուր,
 Կամ ուր ամանաթ առնի:

Վիպերգի առաջին և երկրորդ տարբերակներում, երբ Մհերը հասնում է ծնողների գերեզմանին և պատմում իր վիշտը, նրանք միասին խորհուրդ են տալիս գնալ Տոսպան բլուր, Ագուավու այր՝ մեղքերը քավելու: Այս դրվագում կարևոր փոփոխություն է նախատեսել Իսահակյանը երրորդ մշակման գրառումների մեծ մասի մեջ. աշխարհի հեղաշրջման գաղափարը Մհերին ներշնչում է հայրը՝ անդրշիրմից. «...Գնա Ագուավու քար ու մնա այնտեղ, մինչև աշխարք մի անգամ քանդ-

¹⁶² Ինքնագիրն այստեղ ընդհատվում է:

վի ու նորից շինվի—էն ժամանակ դուրս կդաս աշխարք, լավ աշխարք» (1941): 1943 թ. հուլիսի 11-ի դրառման մեջ կարողում ենք. «...Գնում է ծնողների գերեզմաններին:

Մայրն ասում է.—

Լա՛ց ու զղջա՛, որ Քրիստոս

Թողություն տա:

Հայրն ասում է.—

Գնա Տոսպան բլուր, այրը—

Սպասե՛ մինչև դա ռամկությունը աշխարհ՝

Նոր դուրս եկ...»:

Ահա և 1944 թ. դեկտեմբերի 11-ի դրառումը՝ «Մհերի հայրն ասում է» և ապա՝ «Մինչև աշխարհը չքանդվի և նորից չշինվի, դու կմնաս այրում, դուրս չես գա. աշխարհում մինչ այդ քեզ տեղ չկա...»:

Մեկ այլ տեղ, ավելի հարազատ մնալով էպոսին, բանաստեղծը գրում է. «Մայրն ասում է գերեզմանից.—Գնա Ագուավու քար, քո հաց թխուկ է, մնա էնտեղ, լաց ու զղջա, որ Քրիստոս քեզի գթա, թողություն տա: Ելք չունես այնտեղից, մինչև օրն դատաստանի: Զղջա, որ դժոխք չերթաս:

Հայրն ասում է, գնա Ագուավու քար, դու կմնաս էնտեղ մինչև աշխարք մի հեղ չքանդվի ու չշինվի. մինչի ցորենի հատ մասուրի չափ չլինի (ընդգծ. իմն է—Հ. Ա.), դուրս չես կարող գալ: (Կամ—երբ որ քանդվի շինվի. ցորենի հացը...) էն ժամանակ քեզ ազատում կա. կեղնես քարայրից»:

Նույնի չափածո մշակման սևագրությունը (40-ական թվականներ).

—Մայրն ասում է.

—Գնա Ագուավու քար,

Լաց ու զղջա՛ որ Քրիստոս քեզի խղճա,

Թողություն տա:

—Հայրն ասում է՝

— Գնա Ագռավու քար,
 Քո հաց թխուկ է էնտեղ,
 Կմնաս էնքան ժամանակ,
 Մինչև աշխարք մեկ հեղ
 Չքանդվի ու չշինվի,
 Մինչև ցորենի հատ
 Մասուրի չափ չլինի,
 Ռամկություն չգա աշխարհ
 Դու չես դուրս գա աշխարհ¹⁶³։

Այս և մյուս գրառումներից ակնառու է, որ Իսահակյանը որոշակիորեն առանձնացնում է Դավթի և Խանդութի խոսքը, ինչպես էպոսում է. այդ մասին բանաստեղծը մի տեղ հպանցիկ ակնարկում է՝ «մոր և հոր առանձին պատասխաններից հետո գնում է Տոսպան բլուր...» (Ս. Հայկունու տարբերակում Մհերը խոսում է միայն հոր հետ—Ա. հատոր, Լ պատում)։

Իսահակյանի մեկ այլ գրառման մեջ մայրն է հրահանգում մնալ այրում «մինչև աշխարհ ամրանա, ցորենը դառնա... դուրս կգաս...»։ Հետաքրքրական են նաև սրան հետևող տողերը. «Երբ ժողովուրդը անիծում է նրան, վերջն ասում է (մայրը). — Գնա քար քաղե, ավազ մաղե, լաց ու զղջա, որ Քրիստոս քեզի գթա, թողություն տա...»։ Երբեմն բանաստեղծը վարանումների մեջ է ընկնում, մտածելով՝ ճիշտ են արդյոք իր նախատեսած փոփոխումները. «Ո՞վ է ասում «մինչև աշխարք մեկ դիր չքանդվի, շինվի»... — Եթե հայրն է ասողը, ուրեմն գերեզմանից կասե, իսկ եթե ինքն է՝ մի հարմար տեղում պիտի ասել... Մի խոսքով՝ երկար պիտի խորհել Մհերի մասին»։ Հետզհետե բանաստեղծը հանդում

163 Գ. Հովսեփյանի տարբերակում (Սասնա ծռեր, Բ հատոր, Բ պատում, էջ 101), երբ Մհերի առջև գետինը թուլանում է և նա գալիս է մի կերպ հասնում քարայրին՝ զիմնով ասածն օգնությանը, ձայն է լսում, թե՛

...Դու պրտի մնաս քարի մեջ,
 Զուրի ցորնի հատ էղնի մասրի բարա,
 Նոր քարից դուս գաս։

է որոշակի եզրակացություններ ի և 50-ական թվականներ ժողովրդին կեսին վերաբերող մի գրառում—տարբերակում որոշում է դարձնել հետևյալ կերպ. «Հովիվը հարցնում է Մհերին. —Ե՞րբ պիտի դուրս գաս աշխարհ: Մհերն ասում է —Իմ սուրբ հայրն ասաց՝ երբ քանդվի և նորին շինվի աշխարհ. ես կասեմ. —Երբ շեղբն հասնի ոսկորին, ռամիկ ձայն տա Մհերին, Մհեր կելնի այրեն, հետ ռամկին՝ կքանդեն աշխարհը չար, կշինեն նոր աշխարհ, որ մարդն ազատ, արդար ապրի՝ ազատ, արդար աշխարհում...»: Հարկ ենք համարում ուշադրության առնել նաև 1944 թ. դեկտեմբերի 11-ի գրառումը, որ մեջ ենք բերում ամբողջությամբ.

...Մերպ ու ծործոր շունչերն առան...»:

—Դու ե՞րբ պիտի դուրս գաս աշխարհ.

Մհերն ասում է.

—Մինչև աշխարհը չքանդվի և նորից շինվի, ես չեմ

դուրս գա, մինչև շինվի մի աշխարհ, ուր մարդը ազատ լինի աստծու, թագավորի, մարդու իշխանությունից—ես դուրս չեմ գա:

Հովիվը հարցնում է.

—Ե՞րբ պիտի քանդվի, նորից շինվի:

Մհերը պատասխանում է.

—Մինչև դանակը չհասնի ոսկորին, մարդը ինձ չկանչե, որ ելնիմ և քանդենք ու շինենք... մարդու համար ազատ իրավունքի, իր արդար հացի աշխարհ...

I հարցում Մհերը պասիվ է, կարծես հայ մարդն է խոսում, դժգոհ, խռոված աշխարհից, մարդկությունից, բայց անզոր, սպասող ուրիշ ուժերի հեղափոխիչ գործունեությանը:

Իսկ II հարցում Մհերը ակտիվ է. երբ ժողովուրդը, մարդը, կհասունանա և ցավից կկոչե, պատրաստ է հոգով—Մհե-

րին կհրավիրե որպէս առաջնորդի, Մհերը դուրս կգա, գլուխ կկանգնի և հեղափոխիչ կդառնա»։ Եվ վերջում բանաստեղծը նորից ավելացնում է՝ «Շատ խորհել ելքի մասին»։

Իսահակյանը մինչև վերջ մտադիր է եղել պահպանել վերոհիշյալ փոփոխումը, այն է՝ Մհերը Դավթի միջոցով է հայտնում աշխարհի վերափոխման գաղափարը։ 1956 թ. օգոստոսի 12-ի գրառման մեջ կարդում ենք.

Դավթի պատասխանը Մհերին.

—Աշխարք չար է, քեզ համար տեղ չկա

Աշխարքի վրա:

Գնա Տոսպան բլուր, Ագռավու քար,

Քո հաց էնտեղ թխուկ է,

Քո ջուր էնտեղ դրուկ է:

էնտեղ կաց, մնա,

Մինչև աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,

Որ մարդն ամեն տեղ հար ապրի ազատ:

էն պահ կեկնես լույս-աշխարք:

Իսահակյանը «Սասմա Մհերի» վերջին մշակման ժամանակ ուշադրություն է դարձրել նաև վիպերգի կառուցվածքին, նախատեսելով որոշ տեղափոխումներ և փոփոխություններ։ Դրանցից մի քանիսին մենք արդեն անդրադարձել ենք առանձին դրվագների կապակցությամբ։ Այստեղ ուզում ենք նշել 1953—56 թթ. գրառումներում նախատեսված կառուցվածքային փոփոխությունները։ Այսպես. Իսահակյանը որոշ տեղափոխություններ է նախատեսել Մհերի կոչերի հետ կապված.

«Կապեք, ասավ, կապեք ձեռ-ոտ...

Մութ բռնատուն...

Հանել մինչև՝

Գեղ-գեղովի ձեռք զարկեցին

Մհեր բռնեն...

...Ծերպ ու ծործոր շունչներն առան...»:

Սա նշանակում է՝ դուրս են գալիս հիմնական տեքստի 344—356 տողերը, այսինքն՝ Մհերի խոսքը՝ «Վա՛յ ձեզ ճորտեր, խեղճ ու տխմար» և այլն։ Մեկ այլ գրառման մեջ նա ցույց է տալիս, թե կառուցվածքային իմաստով որտե՞ղ պետք է տեղադրվեն Մհերի կոչերը։ Առաջինը նախատեսում է այն հատվածում, որտեղ Մհերը «բանվոր տղայի մահից ազդված՝ <ղիմում> է իր սրտին ու աշխարհին».

Քանդենք աշխարհը չար,
Շինենք մի նոր, արդար աշխարհ,
Ռամկուլթյուն բերենք աշխարհ,
Արդար օրենք, սուրբ իրավունք,
Որ տեր դառնա մարդը իրեն
Արդար հացին, սուրբ վաստակին։

Մյուսը՝ կառուցվածքային իմաստով նորոգյուն է՝ «Կոչ բերդի զլխից».

Եկեք քանդենք աշխարհը չար.
Մինչև չքանդվի մեկ հեղ աշխարհը
Ու չշինվի նորեն,
Մարդը չի աղատվի շղթայեն, չարեն (?),
Զի տեր դառնա իր հացին
Իր սուրբ վաստակին»։

Ի դեպ, վիպերգի 1938 թ. հրատարակությունից հետո մեկ այլ գրառման մեջ այս կապակցությամբ Իսահակյանը նշում է՝ «Մհերն իր շինած բերդի ծայրից, աշտարակից, ձայնում է աշխարհին, որ գնան միասին կովեն չար աշխարհի դեմ, և կործանեն, որովհետև մինչև աշխարհը մի հեղ չկործանվի ու նորեն չշինվի աշխարհ,—մարդը չի ունենա ուղիղ իրավունք (արդար) և տեր չի դառնա իր սուրբ վաստակին»։

Երրորդ կոչը բանաստեղծը ծրագրում է՝ «Սասուն քաղաքում, նույնանման. մի տեղ միայն ասվի».

Որ տեր դառնա ռամիկն իրեն հացին...
վաստակին»:

Բավականին հանգամանալից տեղափոխություններ են նախատեսվել 1956 թ. հուլիսի 6-ի գրառումներում. «Հանել՝ «Ռեսը կանչեց, ասավ, Մհեր» մինչև «Անձնահուր Մհեր չվեց ու հասավ Պղնձե քաղաք» (հիմնական տեքստի 332—391-րդ տողերը): Սակայն նրանից առաջ եղող՝ «Ելավ Մհեր, սիրտը խոլոր» հատվածը, մինչև՝ «Երանիկ ձեզ, վայրի հավքեր» (373-ից 390-րդ տողերը), դնել գյուղի հարկահավաքից հետո. այսինքն՝ «էս որ տեսավ, կրակ ու բոց...» մինչև «Մերկի մորեն, մնաք նորեն» (321—331-րդ տողերը): Հետո, ուրեմն, հավքերի հետ խոսելը: Ապա գնում է «Պղնձե քաղաքը» (391-րդ տողից) և շարունակությունը մինչև՝ Սասուն. թուրը, ձին առնելը և կովի կոչը:

Իսկ դարբնի մոտ, դարբնոցը պիտի դրվի, ուրեմն, Պղնձե քաղաքից առաջ, փռնապանից, գյուղի հունձից, հավքերի հետ խոսելուց հետո:

Ռեսի հատվածը դուրս կնետվի»:

Վիպերգի երրորդ մշակման նյութերում և ծրագրային գրառումներում Իսահակյանը քանիցս անդրադարձել է վերջերգին, մտադիր լինելով այն լրիվ հանել: 1955 թ. գրառումների համաձայն, վիպերգն ավարտվում է Մհերի խոստումով՝ դուրս գալ այրից, երբ շեղբը հասնի ոսկորին և ռամիկն օգնության կանչի իրեն՝ միասին սլայքարելու.

Որ ռամիկ դառնա տերն աշխարհին,
Որ մարդը տեր լինի իր հացին,
Իր քրտինքին...

...Մինչև էսօր դեռ
էնտեղ է Մհեր...

Ու ականջը ռամիկ կանչին:

Իսկ ամենավերջին գրառման մեջ, որ թվագրված է՝ 6 հուլիսի 1956 թ., Իսահակյանն ավելի որոշակի է արտա-

հայտնել վիպերգի վերջը փոխելու իր մտադրությունը. «Աշխարհն իսկույն, ծանր վշտի տակ» այրում փակված Մհերը հովվի հարցին պատասխանում է, որ դուրս է գալու՝

Երբ ուսմանը զա աշխարհ,
Ռամկի իրավունք, որ տեր դառնա
Մարդն իր հացին...

Հովվի հարցը.—

Ե՞րբ պիտի գա ուսման իրավունք.

Մհերի պատասխանը.—

Երբ աշխարհ ավերվի... նորեն շինվի:
Ասաց ու լռեց.
Հովվի՛վր դնաց,
Քարը նորեն գոցվեց
Մհերի վրեն:

Այս տողերից հետո բանաստեղծը գրել է՝ «Վերջ», և, ապա, ավելի հստակություն մտցնելու նպատակով ավելացրել հետևյալ երկտող-հիշեցումը.

Ո՛չ շեղբը հասնի ոսկորին,
Ո՛չ Մհերի սպասումը:

Ուրեմն, բանաստեղծն այսպես էր ծրագրել ավարտել վիպերգի վերջնական տարբերակը, ձգտելով որքան հնարավոր է, հարազատ մնալ ժողովրդական սկզբնաղբյուրին.

Մկա իդա սհաթին լե մըշ քարին է Մհեր...¹⁶⁴

Վիպերգի վերջին մշակման ընթացքում Իսահակյանին զբաղեցրել է ոչ միայն նոր գրվագների, հավելումների ու փոփոխումների հարցը, այլև ստեղծագործական վարպետության կատարելագործումը: Ինչպես առաջին տարբերակի մշակման ժամանակ, այս գրառումներում ևս նա հաճախ մի քանի անգամ անդրադառնում է միևնույն բառին, դարձված-

¹⁶⁴ Սասնա ծռեր, Բ հատոր, Բ մաս, Բ պատում, էջ 102:

քին, դրվագին, էպոսին հարազատ մնալու և կատարյալը, առավել դիպուկն ու արտահայտիչը ստեղծելու միտումով: Քանի որ երրորդ մշակումը բանաստեղծը ավարտին չի հասցըրել, չենք կարող հավաստի ասել, թե այդ ուղղումներից ու փոփոխություններից ո՛րն էր մնալու, ո՛րը՝ ոչ: Այնուամենայնիվ, դրանք բոլորն էլ բնութագրական ու կարևոր են բանաստեղծի գեղարվեստական մտածողության ընթացքը պարզելու տեսակետից: Բացի հիշված փոփոխություններից, հիշենք մի քանիսը ևս: Վիպերգի 1938 թվականի առանձին հրատարակության իր սեփական օրինակի վրա նա կատարել է հետևյալ ուղղումները. պոեմի 338—339-րդ տողերը՝

Ասավ խիզախ Մհերն Ազնանց
Ու բերդի պես կանգնավ, մնաց
դարձրել է՝

Ասավ Մհեր, կանգնավ ամուր
Հանց անառիկ բերդի պատվաւ:

352—354-րդ տողերը՝

Հողեր ու գյուղեր, ավան ու ապատ,
Հուր-հրեղեն ձին,
Ու Թուր կայծակին,

դարձրել է՝

Հուր-հրեղեն ձին, որ երկաթ կուտե,
Ու Թուր կայծակին, որ պողպատ կըտրե...

446—449-րդ տողերում ավելացրել է ընդգծվածը.

Կիրճերու մեջ Սասմա գետեր,
Հանց մերկ ու կեռ կայծակ-թրեր
Որ կնեղֆեն ամեն գետեր,

էն ձյունափառ սեգ Մովսսար,
Որ աստղերուն է հավասար:

568—569-րդ տողերը՝

Գնաց Մհեր՝ բարկ ու կրակ,
Իջավ Սասմա Աթոռ-քաղաք

դարձրել է՝

Թուավ Մհեր արծվաթև,
Թուավ գնաց բարկ ու կրակ,
Իջավ Սասմա Աթոռ քաղաք:

1956 թ. հուլիսի 6-ին բանաստեղծն անդրադարձել է նաև վրայերգի 766—767-րդ տողերին, ընդամենը մեկ բառի ավելացմամբ և կրկնությամբ ավելի արտահայտիչ պատկեր ստեղծելով:

Ու թիռ կուզան
Բարդ-բարդ ամպեր՝ հրով՝ ջրով
Լույս Մասիսի վեհ գազաթեն...

դարձրել է՝

Ու թիռ կուզան
Բարդ-բարդ ամպեր
Ջրով-լեցուն,
Հրով լեցուն,
Լույս Մասիսի վեհ գազաթեն...

Մտողների հետ խոսակցության, ապա այրում՝ հովվի հետ զրույցի դրվագներին Իսահակյանն անդրադարձել է բազմիցս, ամեն անգամ փնտրելով արտահայտչական նոր

ձևեր, հաճախ փոխելով մեկ կամ երկու բառ: Այսպես՝

ա) Ռամկի վիշտն էլ ծանր նստալ
Խոլ Մհերի ուսերուն,
Երկիրն էլ չէր կարող տանի Մհերին...

բ) Ժողովրդի վիշտը իջավ, մնշեց ուսերին
Մհերի.

Ու ծանրացավ Մհեր աշխարհի վրա,
Գետինն էլ չէր կարող տանի
Մհերին...

Այսպես, պոեմի երրորդ մշակումը հիմքում պահպանելով նախորդ տարբերակի հիմնական գծերը, հարստանալով էր նոր դրվագներով և ավելի ամբողջական էր դարձնելով Սասմա Մհերի կերպարը: Ցավոք, այդ աշխատանքը չհասավ իր ավարտին:

Վիպերգի մտահղացման և դեղարվեստական մարմնավորման ընթացքը ցույց է տալիս բանաստեղծի սերտ կապը ժողովրդի պատմության, իրականության և գեղարվեստական մտածողության հետ՝ սկսած իննսունական թվականներից մինչև կյանքի վերջին օրերը: Մեծ արվեստագետի կարեւորագույն երկերից մեկի՝ «Սասմա Մհեր» վիպերգի ստեղծագործական պատմությունը, միաժամանակ, նաև նրա աշխարհայացքի զարգացման պատմությունն է: Այդ են վկայում վիպերգի ոչ միայն առաջին, երկրորդ և երրորդ (անավարտ) տարբերակները, մշակման երեք փուլերի նյութերը, այլև բազմաթիվ ծրագրային գրառումները, հոգվածներն ու ելույթները, տպագիր և անտիպ ասույթները:

ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

ԳՍԹ—Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թան-
գարան:

< > փակագծերի մեջ են առնված հեղինակի տեքստում մեր
ավելացրած բառերը կամ նախադասությունները:

[] փակագծերի մեջ են առնված հեղինակի ջնջած բառերը և
նախադասությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	5
Գլուխ Ա	
Իսահակյանը ժողովրդական էպոսի մասին	8
Գլուխ Բ	
Իսահակյանի «Սասմա Մհեր» վիպերգը և հայ ժողովրդական էպոսը	37
Գլուխ Գ	
«Սասմա Մհեր» վիպերգի առաջին և երկրորդ տարբերակները .	88
Գլուխ Դ	
«Սասմա Մհեր» վիպերգի երրորդ, անավարտ մշակումը . . .	130
Կիրառված հապավումները և պայմանական նշանները . . .	188



ՀԱՍՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԱՔԵՂՅԱՆ
АСМИК СУРЕНОВНА АБЕГЯН

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ.
Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Նկարիչ Կ. Կ. ՂԱՅԱԴԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՖ 04124 Հրատ. 4191 Պատվեր 40 Տպաքանակ 3000

Հանձնված է արտադրության 16/I 1975 թ., ստորագրված է տպագրության
2/IX 1975 թ., տպագրական 12,0 մամուլ, հրատ. 7,7 մամուլ, պայման 10,2
թուղթ № 1, $84 \times 108^{1/32}$, գինը 82 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24
Издательство АН Арм ССР, Барекамутян 24
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան

A ^{II}
55723

ԳԱՍ Հիմնարար Գիտ Գրադ.



220055723